

# ԳԱՄԻՐՔԻ ՀԱՅԵՐԸ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ

Արեւելեան Փոքր Ասիայում Անդիտաւրոսեան երկրի այն մասը, որ յետագայում հայ պատմագրութեան մէջ յիշատակուած է Գամիրք անուն տակ, կազմուած է Կապադոկիայի բարձրաւանդակի մի մասը, որ դոնուում է ծովի մակերեւոյթից 1100 մեթր բարձրութեան վրայ եւ ունի ցամաքային կլիմայ:

Պատմական Գամիրքը գտնուում է արեւելեան երկարութեան  $34^{\circ} 49'$  ընդեւ  $38^{\circ} 50'$  եւ հիւսիսային լայնութիւն  $38^{\circ} 00'$  հատման վայրում, որն էր մէջ ընդգրկուած է Փոքր Ասիայի այժմեան Սվազ (Սերաստիա) քաղաքից մինչեւ Կեսարիա (Արզէոս՝ «Էրջիաս» լեռնաշղջանը), Հալիս Գետի (Գըզըլ-Ըրմազ) ծունկից մինչեւ Միլաս Գետի (Թոհմասոն) միջեւ ընկած համարեայ ամբողջ երկրամասը:

Անդիտաւրոսեան երկրի մասին գրաւոր տեղեկութիւնները<sup>(1)</sup>, մինչեւ 19րդ դարի 80-ական թուականները, հեռու չէին դնում Ք. Ա. 6րդ դարից: Սակայն 20րդ դարի սկզբներից, Մերձաւոր Արեւելքի մի շարք վայրերում, յատկապէս Հալիս Գետի ներքին հովտում կատարուած հնագիտական պեղումներից յայտնաբերուած մեծ թիւով կաւէ տախտակները՝ սեպագիր արձանագրութիւններով, նիւթական մշակոյթի պեղածոյ հարուստ իրերով, Գամիրքի պատմութիւնը հասցրին մինչեւ երրորդ հազարամեակի կէսերը (Ք. Ա.): Այս մասին առաջին գրաւոր փաստերը յայտնաբերուեցին 1887 թուականին վերին Եգիպտոսի Էլ-Ամանա գիւղում<sup>(2)</sup> որոնք պատմագրութեան մէջ յայտնի են «Էլ-Ամանայի նամակներ» անուն տակ, երկրորդը Բողազ Գէոյից 1906—1925 թթ.<sup>(3)</sup> (Հալիս Գետի ծունկում) մօտ քսան հազար աղիւսագրեր, երրորդը Քիւլ-Թեիէում՝ 1925 թ.<sup>(4)</sup> (Փոքր Ասիայի Կեսարիա քաղաքից 16

1) Տե՛ս Հին Կտակարանը, Մեյիտացի Հեկատի աշխարհագրութիւնը, Հերոդոտը, Ստրաբոնը, ինչպէս նաեւ հայ մատենագիրներից Ագաթանգեղոսը, Փ. Բիւզանդը, Մ. Խորենացին եւ ուրիշներ:

2) L. Delaporte. «Les Hittites», Paris, 1936 page 3.

3) F. Sartraux, «Les Civilisations Anciennes de l'Asie Mineure», Paris, 1928, p. 20.

4) B. Hrozny, «Raport Preluminaire sur les Fouilles Tchecoslovaques de Kultépe», 1925, Syrie, VIII, p. 1—12.



վիտաւրոսեան երկրի տոհմացեղերի կեանքում արդէն որոշակի փոփոխու-  
թիւններ էին տեղի ունեցել: Սահմանակից տոհմերի սեփականատէր դարձած  
աւազները անհրաժեշտութիւն են դառնում արտաքին ռազմական վտանգի առաջ  
ժամանակաւորապէս համադրածակցել:

Քիւլ-Թեփէում (Կեսարիայի մօտ) սեմական-առեւտրական դաղութի ար-  
խիւային նիւթերի ուսումնասիրութիւնը մեզ հետաքրքիր տեղեկութիւններ  
է ալլիս Կանեչում, Բուրուչանդայում հիմնուած ասորեստանեան դաղութ-  
ների առեւտրական գործառնութիւնների մասին: Գաղութների վարչական  
կեդրոնը գտնուել է Ասորեստանի Աչուր քաղաքում, իսկ Անդիտաւրոսեան  
երկրում նրանց գործակալութիւնները գրադուում էին Ղլխաւորապէս վաշխա-  
ուութեամբ եւ ալլրանքափոխանակութեամբ: Այդ առեւտրական դաղութնե-  
րում, բացի ակիլագեան պետական հիմնարկներից՝ կարումներից, կային նաեւ  
թանկարումներ (դրամատէրեր), որոնք տոկոսով ձույլ արծաթ եւ ոսկի էին  
մատակարարում ոչ միայն սեմական շրջիկ առեւտրականներին, այլեւ ակ-  
կագեան պետական առեւտրական հիմնարկներին<sup>1)</sup>: Մինչդեռ բնիկները Յ-րդ  
հազարամեակի (Ք. Ա.) վերջերին, ինչպէս գրում է այդ մասին Կլոֆ. Վ. Ի.  
Ալտիւերը, գտնուում էին մի այնպիսի պայմաններում, որ թէեւ ստրուկների  
թիւը գնալով բազմանում էր եւ դրութիւնը վատթարանում, սակայն  
նրանց դժգոհութիւնները մի որոշ ժամանակ դեռեւս մեծ վտանգ չէին ներ-  
կայացնում, դոնէ մինչեւ այն ժամանակ, քանի դեռ սեմական դաղութները  
չահաբեր էին տոհմացեղերի աւազների համար: Բայց երկրորդ հազարամեակի  
սկիզբներին, երբ Միջերկրականի արեւելեան ափերին Փիւնիկեան քաղաք-  
պետութիւնները ծովային առեւտրական նոր ճանապարհներ են բաց անում եւ  
Անդիտաւրոսեան երկրում բրոնզը լայն օդտադործման մէջ է դրւում, սեմա-  
կան դաղութները սկսում են իրենց դիրքը՝ հետեւաբար, եւ շահաւէտութիւնը  
կորցնել: Այն ատելութիւնը, որ բնիկները տածում էին նրանց հանդէպ, ար-  
դէն վեր է ածւում բացայայտ ապստամբութեան, որի հետեւանքով այդ դա-  
ղութների սեմական բնակչութեան մի մասը բնաջնջւում է, մի մասը կարողա-  
նում է հեռանալ երկրից, իսկ մնացածները ձուլւում են բնիկների հետ<sup>2)</sup>:

Մերձաւոր Արեւելքում ստեղծուած այդպիսի պայմաններում ընդհան-  
րապէս, եւ մասնաւորապէս Հալիս դետի օղակում արտադրական ուժերի  
գարգացման հետեւանքով, առաջանում են նոր պահանջմունքներ եւ շահեր:  
Նախկին տոհմային հասարակարգի կառուցուածքը այլեւս չէր համապատաս-  
խանում ստեղծուած նոր պայմաններին, եւ երկրորդ հազարամեակի սկիզբ-  
ներին Հալիս դետի ծունկում կազմակերպւում է ռազմացեղային մի նոր միու-  
թիւն՝ իսթական ստրկապետութիւնը:

Խեթական պետութիւնը դեռ առաջին տարիներին նուաճում է Հալիս  
դետի ծունկից դուրս դէպի արեւելք, մինչեւ վերին Եփրատի սահմանները եւ  
դէպի հարաւ՝ Սարոսի հովտում գտնուող երկիրները, Զումանդի (այժմ Զա-  
մանդի, հայկական Մամուլաւը), Հուպուչնա, Թեդարամա (Թոգ-Արմա), Ա-  
տարիմա, Խուրսանասան (հաւանաբար Խորսանա) եւ այլն: Նուաճուած ցեղերի  
ու տոհմերի ոչ միայն ռազմիկներն էին ստրկացւում, այլև բոլոր անդամները՝  
աւազանու հետ միասին: Խեթական պետութեան այդ բռնապետական ձեւը

1) Dr. G. Contenau, «Civilisation des Hittites et Mitaniens», Paris, 1934, p. 15 - 60.

2) Փրոֆ. Վ. Ի. Ալդիւեր. — Հին Արեւելքի Պատմութիւն, Երևան, 1947, էջ 125 տես.  
նեյ 6ա եւ Վ. Սարուվէ, Եին Արեւելք, 1938, Երևան, 405 եւ յաջորդ էջերը:

պեռեւս պահպանուած է առաջին թագաւորութեան ամբողջ ընթացքում: Իսկ երկրորդ թագաւորութիւնը (վերակազմուած (Ք. Ա.) 15-րդ դարի կէսերին), պատմական տուեալների համաձայն, հանդիսանում է նուազ բռնապետական, քան առաջինը, այն իմաստով, որ նուաճուած ցեղերի թագաւորներն ու աւադանին վայելում էին որոշակի իրաւունքներ: Օրինակ՝ իւրաքանչիւր ցեղապետ կամ թագաւոր դաշնադրերի ստորադրութեան ժամանակ իր աստուծու առաջ երզուում էր իր լեզուով<sup>(1)</sup>: Ուստի խեթական պետութեան մաս կազմող ցեղերը, այդ թւում եւ թիգարամաները (Թոգ-արմաներ, Թորգոմաները) թէեւ թագաւորական մէկ դայխոնի տակ էին հաւաքուած, սակայն դեռեւս պահպանում էին իրենց ինքնուրոյնութիւնը՝ որոշակի իրաւունքներով:

Խեթական պետութեան մէջ ընդգրկուած ցեղերի, այդ թւում Թեգարամաների ապստամբութեան ու մղած պայքարի մասին հետաքրքիր տեղեկութիւններ կան յատկապէս խեթական չորս թագաւորների՝ Շուբրիլուլիւմայի 1380—1346, Ք. Ա.), Մուրշիլ 2-րդ (1345—1325, թ. թ., Ք. Ա.), Մուվատալի (1325—1303 թ. թ.) եւ վերջապէս, Արնաւանդա 2-րդի (մօտ 1200 թ. Ք. Ա.) տարեգրերում<sup>(2)</sup>: Այդ տարեգրերում յիշատակուած է Անդիտաւրոսեան երկրի ցեղախմբերի, ինչպէս եւ Թեգարամաների մասին, որոնք անցնում էին Եփրատի արեւելեան կողմը՝ Հայասա-Ազգի երկիրը, եւ ընդհանրապէս հետ միացեալ ճակատ կազմած, կուում խեթական պետութեան դէմ: Մեզ հասել է նաեւ մի դաշնադրի պատճէնը, կնքուած խեթական մեծ թագաւոր Շուբրիլուլիւմայի եւ Հայասայի առաջնորդ Հուկանայի միջեւ, որտեղ հայասանների ընտանեկան յարաբերութիւնների մասին կան մի քանի շահեկան տեղեկութիւններ:

Այսպէս ուրեմն, Անդիտաւրոսեան երկրում եւ նրա սահմանակից վայրերում պեղումներից յայտնաբերուած զրաւոր աղբիւրները, նիւթական մշակոյթի մնացուկները մեծ արժէք են ներկայացնում հայ ժողովուրդի կազմաւորման մէջ մեծ դեր խաղացած՝ Հայասանների, եւ յատկապէս, Թոգարմաների (Թեգարամաների) պատմութեան, նրանց կենցաղային սովորութիւնների ուսումնասիրութեան տեսակէտից:

## Ա.— ԳԱՄԻՐՔԻ ԾԱԳՄԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Վաղ միջնադարեան հայ պատմագրութեան մէջ Գամիրք տեղանունն տակ ճանաչուած էր կապադովկիան, որ ընկած է Կիլիկիայի եւ Պոնտոսի միջեւ: Գերմանացի գիտնական Յեմմերքի կարծիքով, եզրուական արձանագրութիւնների մէջ, Ռամզէսի ժամանակաշրջանում, կապադովկիան յիշուած է Խեթերի «որպէս առաջին դաշնակից կամ հարկատու կադավաղն», եզրուական նոր հնչունակութեամբ կադավաղն անուամբ, դա նոյնն է յոյների կապադովկիայի եւ պարսիկների «Կատապատուկ»ի հետ<sup>(3)</sup>: Ինչպէս յայտնի է, ըստ կղերական պատմագրութեան, իւրաքանչիւր տոհմ կամ ցեղ ներկայացուում, այսինքն՝ խորհրդանշուում էր մէկ անձնաւորութեան մէջ, իսկ տեղանունները նոյնպէս կապուում էին տուեալ վայրերում բնակուող ժողովուրդ-

1) L. Délaporte, «Les Hittites», Paris, 1936, p. 253.

2) L. Délaporte, «Les Hittites», Paris, 1936, pp. 78, 109, 165.

3) Յիւմիր. «Գամիրք», Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1900, էջ 28:



ների անունների հետ, որոնք դարերի ընթացքում պահպանուել են իրենց մօտաւոր հնչիւնական բարդոյթով: Օրինակ, Գամիր, Գամիրք, Գամիրքան, Թեգարամա, Թորգոմա<sup>(1)</sup> եւայլն:

«Մեզի համար շատ հետաքրքրական է ի հարկէ Իռլանդիայի աւանդութեան պահած յիշատակութիւնները Իր-ի, Էրիմոն-ի եւ Տիկերմա-ի մասին: Աւանդութիւնը պատմում է, թէ Իռլանդիայի պատմութեան սկզբնական շրջանում Յունաստանի կողմերից մի խումբ արկածախնդիրներ (երեւի զինուորականներ) անցնելով ծովը՝ եկել, յարձակուել ու դրաւել են Իռլանդիան, այդտեղ իրենցից առաջ եկած ու հաստատուած Գաւառ Աստոյ ցեղի հետ կռուելով ու յաղթելով: Մեզի համար հետաքրքրականն այն է, որ Յունաստանի կողմերից եկած այս մարդկանց մէջ եղել է Իր-ի եւ նրա որդի (կամ եղբայր) Էրիմոն-ը, որը պատերազմը շահելուց յետոյ իշխում է ամբողջ կղզու վրայ: Այս երկու անունները, Իր-ն ու նրա որդին (կամ եղբայրը) Էրիմոնը մտցնում ենք մեզի յայտնի Էր-Արմեմիա եւ նոյնական զոյգերի համեմատութեան մէջ.—

- 1.— Էր որդի Արմեմիա-ի՝ Պղատոնից,
- 2.— Էրոս-Արմեմիա՝ Պլուտարքոսից,
- 3.— Ռուսա որդի Էրիմենայի՝ Ուրարտուից,
- 4.— Արա, սերունդ Արամանեակի՝ մեր մատենագրութիւնից,
- 5.— Հայկ, որդի Թորգոմի՝ մեր մատենագրութիւնից,
- 6.— Ալիս, բխում է Արմենիոն լեռից:
- 7.— Իր, որդի (կամ եղբայր Էրիմոն-ի՝ Իռլանդիայից:

«Այս համեմատութիւնից պարզ երեւում է, որ Իր-ն կամ Ար-ն ու նրա որդին (կամ եղբայրը) Էրիմոնը միանգամայն համապատասխանում են Էր-Արմեմիա կամ Արա-Արամանեակ զոյգին: Այստեղ հետաքրքրականը նաեւ այն է, որ Իռլանդական աւանդութիւնը պահել է նաեւ այն տեղեկութիւնը, որ Էրիմոն-ի գահակալութեան եւ քրիստոնէութեան միջեւ ընկած ժամանակահատուածում Իռլանդիայում եղել է մի թագաւոր, որի անունը եղել է Տիգարմա. այս անունը, որը յիշեցնում է հայկական Թորգարմա անունը, միանգամայն փաստում է Իր եւ Էրիմոն-ի հայկական անուններ եղած լինելը, հետեւաբար Իր-ը անձնաւորումն է մեր Ար-ի, ինչպէս Էր-ն ու Արան, իսկ Էրիմոն-ն ու Տիգարմա-ը որպէս էպոնիմներ ներկայացնում են Արմենիան եւ Թորգարման. սա դեռ բոլորը չէ, աւանդութիւնը նշում է նաեւ, որ սրանց ժամանակաշրջանում գերագոյն իշխանութեան իմաստ ունէր արդ-րի բառը, եւ թէ պաշտամունքի առարկայ էին արեւն ու կրակը»<sup>(2)</sup>. (Edmond C. Quiggin, «Encyclopaedia Britannica», 13th ed. 1926, տես՝ Irelandի բաժինը):

Մինչ սեպագիր արձանագրութիւնների վերծանումը, Հին Կտակարանի Մենդոց դրքի 10-րդ գլխում յիշատակուած ժողովուրդների նախահայրերի անունները առաջին անգամ մեկնաբանում է յոյն պատմիչ Հիպպոլիտը (մօտ

(1) A. H. Sayce, «The Higher Creticien and the 'Verdict' of the Monuments», p. 153.

(2) Մարտիրոս Ս. Գաւուհեան. «Արմէն եւ Հայ ամուսնների ծագումն ու Ուրարտում», Պէյրուք, Տպ. Սեւան, էջ 365—366:

Թորդոմը՝ Հայերի նախահայր. «Գոմեր եւ ի նմանէ Գամիրք... Թորդոմ եւ ի նմանէ Հայք»<sup>(1)</sup>: Վերոյիշեալ տեղանունները այս վերջին երկու ցեղերի առնուներից առաջացած լինելու հանդամանքը չի կարելի նկատի չառնել, քանի որ համեմատական տեղանունները իրենց ժամանակին բոլորը գտնուել են Մերձաւոր Արեւելքի միեւնոյն աշխարհագրական եւ պատմական միջավայրում:

Համաձայն ասորեստանեան արձանագրութիւններին, այժմ ապացուցուած է, որ Կիմմերներն մի մասը Կերչեան Բոսփորից նախ՝ ներխուժել է Ուրմիոյ լճի արեւմտեան շրջանները, ապա առաջացել է Ուրարտուի սահմանները: Սկիւթացիները կողմից նեղուելով, Կիմմերները Սեւ ծովի հիւսիսից մտնում են նախ Անդրկովկաս եւ ապա դէպի հարաւ ուղղուելով, հասնում մինչեւ Ուրմիոյ լճի արեւմտեան սահմանները: Այդ մասին Հերոդոտը գրում է հետեւեալը. «Նրանք (սկիւթները) դուրս վտարելով Ֆերոպայից Կիմմերները 234 թ.): Նա Գոմերին կամ Գամերին ընդունում է որպէս կիմմերների, իսկ ներին եւ հալածելով նրանց, որ փախչում էին, ներխուժեցին Ասիա եւ եկան, այսպէսով, մեղական երկիրը»: Կիմմերները, հաւանաբար, սկիւթների այդ շրջաններում երեւալու հետեւանքով է, որ 714—713 թ. թ. (Ք. Ա.) դարնանը առաջանում են դէպի Ուրարտուի սահմանները եւ երկու ուժերի հանդիպումը տեղի է ունենում Ուեսիում (Պաշ-Գալէի մօտերը): Ուրարտացիները պարտուում են: Կիմմերները ներխուժում են Ուրարտուի երկիրը, սակայն, հիւսիսարեւմուտքում ուրարտական ցեղախմբերի դիմադրութեանը հանդիպելով, ուղղում են դէպի Սինոպ թերակղզու սահմանները եւ այնտեղ ժամանակաւորապէս բնակութիւն հաստատում: Կիմմերները 7-րդ դարի առաջին տասնամեակում Սինոպից դէպի հարաւ ուղղուելով, թափանցում են Կասպաղովկիս: Պատմագրութեան մէջ, չփոթէ ստեղծուել Գամիրքի եւ Մատու Գամերի յուշը:

Մատու Գամերը չի կարելի շփոթել Կասպաղովկիան Գամիրքի հետ, որը գտնուում է Անդրխտաւրոսեան երկրում, իսկ առաջինը՝ գտնուում է Ուրարտուի սահմաններում, Ուրմիոյ լճի մօտերը: Ուեսի, Կիմմերները այդ ժամանակաշրջանում (714—713 թ. թ. Ք. Ա.) դեռեւս Անդրխտաւրոսեան երկիրը չէին թափանցել: Այդ մասին է խօսում նաեւ այն, որ Սարգոն Բ-ը Անդրխտաւրոսեան երկրում Ուրարտուի քաղաքական ազդեցութիւնը խախտելու նպատակով, օգտուելով Ռուսայի պարտութիւնից, 712—705 թ. թ., յարձակում է դործում Անդրխտաւրոսեան փոքր թագաւորութիւնների<sup>(2)</sup> Տաբալի, Մելիդիում (Մալաթիա), Գուրգամի (Մարաշ), Կումմուխի (Կոմմազէն), Թել-Գարիում (Թոգ-արմա) վրայ: Այսպիսով, նա ասպատակում է Անդրխտաւրոսեան երկրի մէկ ծայրից միւսը, սակայն Կիմմերների մասին դեռեւս յիշատակութիւն չկայ: Կասկածից դուրս է, որ 8-րդ դարի վերջին քառորդում (Ք. Ա.) Կիմմերները չէին ներխուժել, այլ, Ուրարտուի պարտութիւնից յետոյ, դէպի Արեւմուտք ուղղուելով ժամանակաւոր բնակութիւն են հաստատել Արաքսի, Եփրատի, Հալիսի եւ Թերմոզոնի վերին հոսանքի աւազաններում<sup>(3)</sup>, այսինքն՝ դէպի սեւ ծովի առափնեայ լեռնային շրջանները, ինչպէս եւ մինչեւ Սինոպի թերակղզու շրջակայքը:

(1) Աշ. Արքուսիւսիս. Անանիա Շիրակացու Մատեմագրութիւնը, Երևան, 1944, էջ 359:

(2) N. Adontz, «Histoire d'Arménie», Paris, 1946, p. 118.

(3) G. Maspero, «Histoire Ancienne des Peuples de l'Orient Classique», T. III, Paris, 1899, p. 350.

Գամիրք անուան տակ, ինչպէս ասուեց, հասկացուել է պատմական  
կապաղովկիայի ամբողջ երկրամասը, իսկ կապաղովկիայի այն մասը՝ որտեղ  
Կիմմերները բնակութիւն են հաստատել եւ որը նրանց անունով կոչուում է Գա-  
միրք, դեռ եւս մնում էր չճշդուած: Գամիրքը Անդիտաւրոսեան երկրի այն  
մասն է, որ յետագայում համարեայ համապատասխանում էր հռոմէական  
չրջանի կապաղովկիայի տասը կուսակալութիւններից Կիլիկեան չրջանի մա-  
սին, որը ընդգրկում էր իր մէջ այժմեան Սեբաստիայի մինչեւ Կեսարիա,  
Հալիս գետից մինչեւ Մելաս գետի (Թոհմա-Սու) միջեւ ընկած գրեթէ ամբողջ  
երկրամասը:

Միջնադարեան հայ պատմագրութեան մէջ կապաղովկիայի ամբողջ  
երկրամասի համար Գամիրք էպոնիմի գործածութեան այդ սխալը, կարծում  
ենք, առաջ է եկել այն հանդամանքից, որ Փոքր Ասիայում, զանազան տիրա-  
պետութիւնների ընթացքում, առանց նկատի առնելու կապաղովկիայի սահ-  
մաններում տեղի ունեցած վարչական փոփոխութիւնները, միշտ գործ է ա-  
ծուել նոյն մեկնակէտը, սակայն Գամիրքը յետագայում նկատուում է որպէս  
կապաղովկիայի մի գաւառ:

Գամիրքի բուն վայրը ճշդելու համար նախքան Անդիտաւրոսեան երկ-  
րում հնուց մնացած տեղանունների ստուգաբանութիւնը, անհրաժեշտ է զըն-  
նութեան առարկայ դարձնել Սեբաստիայի եւ Կեսարիայի միջեւ ընկած երկ-  
րամասը, որ սլարսիկների կողմից կոչուել է կատպատիւկա, այսինքն՝ կա-  
պաղովկիա: Դա մեծապէս կ'օգնի Գամիրքի սահմանները ճշդելու հարցին:  
Կատպատիւկա կարելի է ենթադրել, որ Գամիրքի հայերի բարբառում որոշ  
կրճատումներով դարձել է նախ՝ կատով եւ ապա՝ աղաւաղուելով՝ Կետուկ,  
յետագայում՝ Կետիկ:

Կատիւկ-ի կամ Կետիկ-ի մասին յիշատակութիւն կայ միջնադարեան  
հայ գրականութեան մէջ: Կիրակոս Գանձակեցին Ղիարդեդտին Սուլթանի եւ  
Բաշու Նուինի կռիւների մասին խօսելով, յիշատակում է, «Կատուկ» անունը,  
որտեղ Ղիարդեդտինը վրան է խփել նախքան կապաղովկիայի Կեսարիա քա-  
ղաքը սլաշարելը: «Քանզի եւ նա ի վեր էր եկեալ ի տեղոջէ իւրմէ յաշխարհն  
հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբ, հուպ ի քաղաքագեղ մի՛ գոր, ասի,  
Չմանն Կատուկ անուանեն»<sup>(1)</sup>:

Կատուկի կամ Կետիկի մասին յիշատակութիւն կայ նաեւ Սուլթան Սու-  
լթանի պատերազմական ուղեգրութեան մէջ: Այսպէս, Օսմանեան կայսրու-  
թեան թագաւորը Պարսկաստանի դէմ 1524 եւ 1547 թ. թ. պատերազմների իր  
ուղեգրութեան մէջ երկու անգամ նշում է Կեսարիայի եւ Սեբաստիայի միջեւ  
գտնուող Կատեկի կամ Կետիկի մասին: «Կետիկ Օվա (Կատուկի դաշտ), Կետիկ  
խան»:

«Բիւրակն» հանդէսի մէջ Կետիկի մասին նոյնպէս կարդում ենք հե-  
տեւեալը. «Կետիկ կ'անուանեն Կեսարիոյ եւ Սեբաստիոյ միջեւ Շարգըշայի  
դայմադամութեան՝ Գըզըլ Ըրմագի (Հալիս գետի) հարաւը ընկող, ինչպէս  
նաեւ հիւսիսը գտնուող հայ գիւղերը: Թորոքոմ Գուշակեանն իր «Ճամբու վեր-  
յիշումներ» յօդուածին մէջ Գամիրք անուան տակ մատնանշում է այն վայրը,  
որին տեղական ժողովուրդը անուանում է Կետիկ: «Սեբաստիայէն մեկնումիս  
լաջորդ կէսօրին իսկ կը հասնիմ Շեհէր-Ղալա (Շար-Ղալա), կեդրոնական ա-  
ւանը Սվադի կեդրոնական Սանճագի պատկանող Թոնուս գաւառին: Այս դա-

1) Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 266:

ւառը՝ որ կը համապատասխանէ Հին Կապադովկիա Գամիրքի սահմաններուն, կը պարունակէ 20.000 հաշուող հոծ հայութիւն մը, յրուած 19 դիւղերու մէջ»<sup>(1)</sup> :

Գամիրքը որպէս Կապադովկիայի դաւառներէց մէկը, յիշատակուած է նաեւ Հայսմաւուրքի մէջ. «Ս. Սարգիս Կապադովկիան Կեսարիոյ Գոմիրք դաւառից էր» :

Վերոյիշեալ անունները ենթադրում ենք, որ Գամիրքի եւ Գոմերի անունները եւ յետագայում թրքերէնի աղաւաղուած ձեւերը լինեն, օրինակ, Գամիրքը պարսկերէն յոգնակի «ան»ածանցով դարձել է «Գամիրքան», ինչպէս շահը՝ թաղաւոր, շահան՝ թաղաւորներ, իսկ յետագայում սելճուք թուրքերի, թուրքմէնների տիրապետութեան ժամանակ՝ Գամիրքանը դարձել է Կեօմիրքէն: Բիրլիայի «Գոմեր» բառը հաւանաբար նոյնպէս «ան» ածանցով դարձել է Գոմերան, յետագայում՝ Կեօմերէն :

Ուշադրութեան արժանի է մի պարագայ եւս, որ Կեմերեկի շրջակայ դիւղացիներից պուրհանցիները եւ տենտիցիները, կեմերեկցիները կոչուած էին Գամրիկցի, որը Գամիրք բառին հնչիւնական մօտիկութիւն ունի: Պէտք է նշել, որ հայ գրականութեան մէջ Կեմերեկ բառին, որպէս համազօր դործ է անուել Գամիրք եւ Գամրակ երկու ձեւերը<sup>(2)</sup> :

Երեմիա դպիր Օշականցին 1765 թ. Յունիսի 8 թուակիր նուիրակութիւնների ցուցակում Կեմերեկը յիշատակում է Գեամրակ ուղղութեամբ<sup>(3)</sup> : Չնայած որ վերոյիշեալ Գամրակ եւ Գեամրակ ձեւերը նոր վկայութիւններ են, սակայն կարող են նպաստել Գամիրք անունի մեկնութեանը :

Այսպիսով, պարզում է, որ Կիմմերների մեծ մասը բնակութիւն է հաստատել Հայիս դեպի ծունկից մինչեւ Մելաս դեպը, իսկ որոշ մասը տարածուել է նաեւ վերին Եփրատի միջեւ ընկած երկրամասում: Այդ երկրամասը Աստուածաշնչում տեղ է դրել «Գամեր» կամ Գամիրք, կամ Գամրաց աշխարհ անունով: Միւս կողմից պէտք է նշել, որ այդ երկրամասը եօթերորդ դարի կէսերին (Ք. Ա.) իր աշխարհագրական դիրքով երեք պետութիւնների՝ Ասորեստանի, Ուրարտուի եւ Լիւդիայի միջեւ կազմում էր, նոյնպէս ասած, մի ազատ գօտի, որտեղ միայն կարող էին պարտուած կեմմերները հաստատուել: Եւ որը նրանց զբաւոր դբադմունքի՝ անասնապահութեան եւ յատկապէս ձիարուծութեան համար հանդիսանում էր նաեւ ամենայարմար վայրը:

Կապադովկիան ինչպէս այժմ, նոյնպէս եւ անցեալում, մասնաւորապէս նախնազոյն Կիլիկիան լեռնադաւառը, այսինքն՝ Գամիրքը, ծանօթ էր իր ձիարուծութեամբ եւ անասնաբուծութեամբ: «Կապադովկիայի իշխանները բացի դրամական մի փոքր տուրքից, իւրաքանչիւր տարի Դարեհին հայթայթում էին 1500 ձի, 2000 ջորի եւ 50 հազար ոչխար»<sup>(4)</sup> : Մեր կարծիքով այդ բնատուրքի մեծագոյն մասը հայթայթում էր հենց Կապադովկիայի Գամիրք դաւառը: Այս հասկնալի կը լինի, եթէ նկատի ունենանք Եգեկիէլ Մարգարէի՝ Թորդոմի տան (խօսքը հայերի մասին է) հասցէին ուղղուած խօսքերը: Մար-

1) Թ. Գուշակեան, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1914, Փետր. 10/23, թիւ 5272:

2) Կ. Գաբիկեան, «Եղեռնապատում», Պատոն, 1923, էջ 19:

3) Ս. Գաբամանեանի Տարեցոյցը, Բարիզ 1923, էջ 187:

4) Strabon, XI, 525.

զարէն իւր խօսքը Տիւրոս քաղաքին ուղղելով ասում է. «Եւ ի տանէ թորդոմայ ձիովք եւ հեծելովք եւ ջորւոք ըրին զվաճառս քո»<sup>(1)</sup> :

Վերջապէս, այն երկրամասում, ուր Կիմմերներն մեծ զարմն է հաստատուել, կան նաեւ նիւթական մշակոյթի որոշ մնացորդներ: Պատմական տուեայների եւ յատկապէս Անդիտաւրոսեան երկրում պահպանուած տեղանունների քննութիւնը ցոյց է տալիս, որ Կիմմերների մեծագոյն մասը, բնակուել է Կապադովկիա, յետագայում, նախնագոյն Կիլիկիա կոչուած դաւառում: Ժամանակի ընթացքում, թէեւ Կիմմերները ձուլւում են Կապադովկիան զանազան ցեղերի հետ, այնուամենայնիւ, մինչեւ վաղ միջնադարը հայերի կողմից այդ երկրամասը նրանց անունով կոչուել է Գամիրք:

### Բ.— ԳԱՄԻՐՔԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ՀՌՈՄԷԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Առաջաւոր Ասիայում, Բ. Ա. է.—րդ դարի վերջերս, արտադրողական ուժերի զարգացման հետեւանքով, տոհմացեղերի ներքին խիստ շերտաւորումը մէկ կողմից, սկիւթական, կեմմերական արշաւանքներէ հետեւանքով Ասորեստանի եւ Ուրարտուի թուլացումն ու վերջնական կործանումը (612—585 թ. թ. Բ. Ա.) միւս կողմից, հնարաւորութիւն են ստեղծում ռազմա-ցեղային մի նոր միութեան՝ Արմենիայի կազմաւորմանը, որը սակայն 580—ական թ. թ. ընկնում է Մարաստանի ազդեցութեան շրջագծին մէջ, իսկ 521 թ. (Բ. Ա.) նուաճւում է պարսիկ քեմեանների կողմից: Յետագայում Մազնեզիայի ճակատամարտում (190 թ. Բ. Ա.) երբ Սելեւկեանները հռոմեացիներէ կողմից պարտութիւն են կրում, Առաջաւոր Ասիայի երկիրները՝ այդ թւում նաեւ Արմենիան, դուրս են բարձրացնում: Հայաստանի երկրամասում Սելեւկեան երկու տեղական ներկայացուցիչները՝ Արտաքսիասը (Արտաշէս) եւ Չարիատրիսը (Չարեհ), իրենց անկախ են հռչակում: Այսպիսով, վերականգնւում է Արմենիան, որն սկզբում փոքր եւ թոյլ էր, բայց յետագայում Արտաշէսի եւ Չարեհի ժամանակ ձեռք է բերում ինչպէս քաղաքական եւ տնտեսական հզօրութիւն, այնպէս էլ երկրամասային մեծութիւն: Ըստ Ստրաբոնի, Չարեհի թագաւորութեանը, այսինքն՝ Ծոփքին է կցւում նաեւ «Անդիտաւրոսեան կողմերում գտնուող երկիրը»<sup>(2)</sup>, որը յետագայում մասն է կազմում Փոքր Հայքի: Ուստի Կուր գետից մինչեւ Անդիտաւրոսեան երկիրը, պատմական Հայաստանի երկրամասում, կազմում են երեք հայ-արմենական թագաւորութիւններ՝ ա) Արտաշէսեան թագաւորութիւնը՝ Երասխի հովտում, Մեծ Հայքը՝ Արտաշատ մայրաքաղաքով, բ) Չարեհեան թագաւորութիւնը կամ Ծոփքը՝ Հայաստանի հարաւ արեւմտեան կողմերում, Արշամաշատ քաղաքով, եւ գ) Փոքր Հայք, որն ընդգրկում էր վերին Եփրատի արեւմտեան մարզերը, Սեբաստիայի գաւառով, հետեւաբար եւ Գամիրքը:

Այսպէս ուրեմն, Գամիրքը դեռ հին ժամանակներից եղել է Հայերի հիմնական եւ գլխաւոր կեդրոններից մէկը: Այդ վկայում է նաեւ Հերոդոտը, որ սկզբնական շրջանում Հայաստանը գտնւում էր Վերին Եփրատի ափերին:

(1) Աստուածաշունչ, Եգիպտոս, Գլ. ԻԵ. 14:

(2) Strabon, XI, 17, 5, (528).

Հենց Փոքր Հայք էպոնիմը ցոյց է տալիս, որ Կապադովկիայում հայերը որոշ ուժ էին ներկայացնում:

Այժմ, անհրաժեշտ է ծանօթանալ թէ ընդհանրապէս պարսկական եւ հռոմէական տիրապետութեան օրոք ինչպիսի ընկերային-անտեսական դրութեան մէջ էր գտնուում Առաջաւոր Ասիան, հետեւաբար Հայաստանը, Կապադովկեան եւ այդ թւում՝ Գամիրքը:

Պարսկա-աքեմենեան տիրապետութիւնից սկսած մինչեւ հռոմէական տիրապետութեան շրջանը (546 թ. Ք. Ա. 17 թ. մեր թուականի) 563 տարիներ ընթացքում, թէեւ Առաջաւոր Ասիայում քաղաքական, անտեսական յարաբերութիւնները որոշակի փոփոխութիւնների էին ենթարկուել, սակայն մակեդոնական-սելեւկեան, հայկական-պոնտական եւ հռոմէական յարաբերութեան շրջանների հետեւանքով, Կապադովկիայում տեղի ունեցած անբաժնիւնները, դերեվարութիւնները, կեղեքումները արդեւակա՞ծ էին քաղաքական կայուն դրութիւն ստեղծելուն եւ արտադրական ուժերի բնական դարգացմանը: Պարսիկները 546 թուին (Ք. Ա.), երբ դրաւում են Կապադովկիան, այնտեղ արդէն գոյութիւն ունէին ստրկատիրական յարաբերութիւններ, որ նուաճողների կողմից հասցւում է իր աւելի բարձր աստիճանին: Կապադովկիայում գրեթէ բոլոր հողային կալուածները դրաւելով, բաժանում են մեծ մասամբ պարսիկ եկուար աղնուականներին եւ կրօնաւորների միջեւ: Երկրում ամենուրեք կառուցւում են դղեակներ, բերդեր, որոնք աղնուականների համար ծառայում են թէ՛ որպէս միջնաբերդ եւ թէ՛ միաժամանակ բնակարան<sup>(1)</sup>: Դղեակների կառուցւում են Որմեղտի պաշտամունքի տաճարներ՝ եւ այդպիսով դրաւում են բոլոր հողերը<sup>(2)</sup>:

Աքեմենեանների կառավարման մեթոտը նոյնքան խիստ է եղել, բայց նուազ կոպիտ, քան իր նախորդներինը: Աքեմենեանները ժողովուրդներին իրենց տեղերից խմբովին բռնի չէին տեղափոխում եւ ոչ էլ նրանց ժողովրդեան աւանդութիւնները արդեւակում: Նրանք դոհանում են դրամական եւ իրային հարկահանութեամբ եւ գինուորական ծառայութեամբ: Այսպիսով պարսիկները տեղական աւազանուն տալով որոշ առանձնաշնորհումներ, ձգտում էին նրանց ազդեցութեամբ աւելի հաստատ դարձնել իրենց տիրապետութիւնը:

Մեր դարաշրջանի սկիզբներին Առաջաւոր Ասիայում, որպէս հռոմէացիների դէմ պայքարող հզոր ուժ, պարթեաներից բացի ոչ մի երկիր չէր մնացել: Հռոմը արդէն նուաճել էր Հայաստանը, Պոնտոսը, Կիլիկիան, Ասորիքը եւ սելեւկեանների մայրաքաղաք Անտիոքը, որ իր հերթին դարձել էր ասիական հռոմէացիների միջնաբերդը:

Կապադովկիայում նստում էր հռոմէական կուսակալը, որի ձեռքում էր գինուորական եւ քաղաքական իշխանութիւնը, նա իր ամբողջ դաժանութիւնը ցուցաբերում էր յատկապէս հարկահանութեան ընթացքում: Հողային բոլոր կալուածները, նոյնիսկ Կոմանայի, Տիանայի քրմական դասի հոյերը, որոնք աքեմենեանների օրով որպէս տեղական քրմական դասի սեփականութիւն էին ճանաչուել, այժմ Հռոմի կողմից հռչակուել էին կայսերական կալուածքներ<sup>(3)</sup>:

1) Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, p. 23.

2) Mayer, Incription Ass., Geschichte des Alterthums, I § 337, Isodore de Peluse Ep, I, 487.

3) Ch. Texier, Asie - Mineure, Paris, 1852, p. 514.

K. Aslan, Etude Historique sur le peuple Arménien, Paris, 1909, p. 111,

Կապաղովկիան այս ժամանակաշրջանում ծառայում էր որպէս հակամարտութիւնների կեդրոն հռոմէական եւ Տիգրան-Միհրդատեան դաշնակցութեան համար: Եւ քանի դեռ ան հռոմէական շահերը չէր պաշտպանում, այնքան նրա «անկախութիւնը» յարգւում էր այդ դաշնակցութեան կողմից, եւ հակառակը, հռոմէացիները երբ տեսնում էին, որ Կապաղովկիան հնազանդւում էր այս վերջիններին, ինքն էր յարձակւում եւ իր ուղղութեան մարդն էր դնում նրա դահին:

Այսպէս, ստեղծուած պայմաններում երկիրը յաճախակի ձեռքից ձեռք էր անցնում: Հռոմէացիները, վերջ ի վերջոյ, դրաւում են Կապաղովկիան եւ վերածում մի սովորական նահանգի: Սակայն, դանազան առիթներով ստիպուած են լինում ճանաչել Գամիրքում հայկական թաղաւորների իրաւունքը: Այսպէս, համաձայն Դիոսորոսի, Կարակալայի յաջորդը՝ Մակրին, երբ Պարթեւներին մեծ հատուցում վճարելով հաշտութիւն է կնքում, հայերին եւս, որոնք հռոմէացիների դէմ պատերազմի ընթացքում պարթեւների հետ էին, սիրաշահում է՝ Վաղարշի որդի Տրդատ Բ-ին ճանաչելով հայոց թագաւոր: Աւելին, վերադարձնում է նաեւ այն հողերը (ոստանները), որ Կապաղովկիայում սեփականութիւն էր Հայաստանի քաղաւորներին. վաղ միջնադարեան հեղինակ Սողոմոնը նոյնպէս, Կապաղովկիայում Հայաստանի ունեցած հողերի մասին ակնարկելով գրում է. «Կոստանս, որ Արշակին պաշտպանում էր (350—351 թ. թ.) ամուսնացնում է նրան հռոմէացի կառավարիչ Ապլանիասի աղջկայ՝ Ոլիմպիայի հետ, զեղչում է Փոքր Ասիայում Հայաստանի ունեցած հողերի հարկը<sup>(1)</sup>»:

Անկասկած է, որ Հայերը Փոքր Հայքում, հետեւաբար եւ Գամիրքում, թուական մեծամասնութիւն էին ներկայացնում եւ պահպանում էին հայերէն լեզուն: Այդ մասին է խօսում այն փաստը, որ կեսաբացի Բարսեղ Պատրիարքը (379 թ.) Փոքր Հայք իր ճամբորդութեան ընթացքում նոյն դաւառի եպիսկոպոսական աթոռների համար փնտռում էր հայերէն գիտցող մարդիկ<sup>(1)</sup>: Այսպէս, ուրեմն, մինչեւ վաղ միջնադարը Գամիրքը հանդիսանում էր հայերի ստուարաթիւ եւ համախումբ բնակութեան վայրերից մէկը:

#### Գ.— ԳԱՄԻՐՔԻ (ՓՈՔՐ ՀԱՅՔ) ՀԱՅ ԱԶԳԱՐՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ ՄԻՋՆԱԳԱՐՈՒՄ

Գամիրքը հնագոյն ժամանակներից հանդիսացել է թողարմաների (արմէնների) օրրանը, որը յետագայում եղել է նոյնպէս հայ ժողովուրդի գոյացման, կազմաւորման գլխաւոր կենտրոններից մէկը: Այդ մասին է խօսում Ստրաբոնի այն վկայութիւնը, թէ մինչեւ Անտիտաւրոսի երկիրը բոլորը միալեզու հայախօս դարձան<sup>(2)</sup>: Հետաքրքրական է նաեւ Մ. Խորենացու թէեւ առասպելական, բայց որոշ հիմք ունեցող այն տեղեկութիւնը, որ Արամը դրաւելով մինչեւ Կապաղովկիա՝ Արդեոս (Էրճիրաս) լեռան շրջակայքը հրամա-

(1) Հմմտ. Sozomene (Hermias) Histoire Ecclésiastique, Paris, 1676 et Amm. Marc, Մ. Խորենացի եւ Փ. Բիւզանդ:

(2) Տես Տրաբոն, XI, 14, 5 (528): հմմտ. Հ. Մանանդեան Բնակավայրի տեսութիւնը հայ ժողովուրդի պատմութեան, հատ. Ա. Երեւան 1945, էջ 116:



յում է իր Մշակ գորավարին այդ վայրում կառուցել դաստակերտ, բնիկներին սովորեցնել հայերէն, որ նրա շինած բերդաքաղաքը՝ Մշակի անուան ազա-  
 ւաղումով, յոյների կողմից կոչւում է Մաժաֆ, յետագայում՝ Կեսարիա: Այդ  
 խնդիրը պատճառաւ, աւելացնում է Մ. Խորենացին, յոյները այդ շրջանը կոչում  
 էին «Պոռտին Արմինիա» այսինքն՝ Առաջին Հայք<sup>(1)</sup>: Կապադովկիայի այդ  
 մասը, այսինքն՝ Գամիրքը, Տիգրանի օրոք, թէեւ որոշ ժամանակ Հայաս-  
 տանի մասն է կազմել, բայց յետագայում Արշակունիների ժամանակ, նա վա-  
 ղուց դադարել էր, իրաւապէս Հայաստանի մասը լինելուց: Այնուամենայնիւ,  
 Գամիրքում գոյութիւն ունէր հայ ազդարնակչութիւն, ինչպէս նաեւ թագա-  
 տոնների որոշ ոստաններ<sup>(2)</sup>: Այստեղ տեղին է նշել մի հանգամանք, որ վաղ  
 վաղ միջնադարում գերակայութեան պայքարը երբ մտցւում էր դաւանական  
 հարցերի խողովակով եւ ժողովուրդների էթնիկ դիտակցութիւնը իր խանձա-  
 բուրի մէջ էր գտնւում, բնակիչները, ընդ որում եւ հայերը, յատկապէս յու-  
 նադաւան հայերը; դիւրաւ կարող էին ձուլուել Կապադովկիայում հետզհետէ  
 տիրող տարրի՝ յոյների հետ: Մխիթար Ապարանցին, խօսելով ծաթ հայերի  
 մասին, գրում է. «Եւ ոմանք կոչեն Մաթ հայեր, որ լեզուով եւ դրով ազգաւ  
 են հայք, բայց դաւանութեամբ եւ ամենայն օրէնօք են յոյնք»<sup>(3)</sup>: Այսպէս  
 նրանք յունադաւան դառնալով, հետզհետէ խզեցին հայ ազդարնակչութեան  
 հետ իրենց ազդային մշակութային բոլոր կապերը: Այս դրութիւնն իշխում  
 էր 5—7-րդ դարերում, մինչեւ որ Գամիրքի հայ ազդարնակչութեան մէջ նոր  
 քանակ եւ որակ ստեղծեցին Հայաստանից այն դաղթերը, որոնք տեղի ունե-  
 ցան 8-րդ դարի կէսերից մինչեւ 11-րդ դարի վերջերը, այսինքն՝ արարական  
 արշաւանքներից սկսած մինչեւ Սելջուկեան թուրքերի ներխուժումը: Ճիշդ է,  
 դրանից առաջ եւս Հայաստանից դէպի Փոքր Ասիա տեղի է ունեցել մի շարք  
 ծանր եւ մեծ գաղթեր, առեւտրական կամ այլ շահութաբեր գործերի եւ դի-  
 նոտորական ծառայութիւնների հրապոյրներով, ինչպէս նաեւ բռնի կամ ստի-  
 պողական: Օրինակ, 572 թ. Պարսիկների դէմ հայերի ապստամբութեան  
 պարտութիւնից յետոյ, Վարդան Մամիկոնեան իւրայիններով գաղթում է  
 բիւզանդական երկիրը<sup>(4)</sup>: Յուստինիանոս Բ. ը 688 թուականին Հայաստանը  
 նուաճելով, 8 հազար տուն Փոքր Ասիա եւ Թրակիա է տեղափոխում<sup>(5)</sup>:  
 Սակայն մեր ուսումնասիրութեան նիւթից դուրս է մնում է դէպի Փոքր Ասիա  
 տեղի ունեցած բոլոր հայկական գաղթերը: Այստեղ կը խօսուի միայն այն  
 երկու խոշոր ժողովրդական «գաղթերի» մասին, որոնք ամբողջութեամբ տե-  
 ղաւորուելով Գամիրքում, նոր կերպարանք տուին Գամիրքի. յետագայ էթնի-  
 կական կազմին:

Նախքան այդ գաղթերի խօսելը, արժէ երկու խօսքով վերլուծել 4—5-րդ  
 դարերի Հայաստանում տիրող դրութեան եւ բիւզանդացիների հետապնդած

(1) Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 46:

(2) Aslan, Etude Historique sur le peuple Arménien, Paris, 1909, p. 138, 198, Diodoros  
 Bibl. Hist.

(3) «Ծաթ հայերի» մասին տես Մխիթար Ապարանցու գրածը Ալիշանի «Հայապատու-  
 մ»ում, էջ 550—553:

(4) Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1785. հատ. Բ. էջ 288:

(5) Ստեփաննոս Տարնացի (Ասողիկ), Տիեզերական պատմութիւն, Գիթ Բ. 1896. էջ

քաղաքականութեան մասին: Ինչպէս յայտնի է, 387 թ. Թէոդորոսի եւ Շապուհէ Բ-ի դաշնագրութեամբ, Հայաստանը բաժանուեց երկու մասի: Բիւզանդացիք իրենց բաժնի Արեւմտեան Հայաստանի վրայ նշանակում են կոմս, իսկ Արեւելեան Հայաստանում, Սասանեանները 428 թ. յետոյ՝ մարզպան:

Չնայած Արշակունիների թագաւորութեան վերացմանը, երկրի վարչական դրութեան մէջ որոշ ժամանակ փոփոխութիւններ տեղի չեն ունենում: Երկիրը իր երկու մասերուն էլ կառավարում էր բացառիկ վարչութեամբ եւ տեղական օրէնքներով, այսինքն՝ հայ նախարարները դեռեւս պահում էին իրենց տանուտիրական իրաւունքները, իսկ եկեղեցական թեմերը զնալով բազմանում են՝ 4-ի փոխարէն, 5րդ դարում, հասնում են 15-ի: Դա բացատրւում է նրանով, որ մարզպանութեան շրջանում հայ եկեղեցիին դեռեւս իր ձեռքին էր պահում երկրի դատական գործերը, միաժամանակ նաեւ երկրի բնակչութեան ունեցուածքի հաշուուման իրաւունքը: Այսպէսով, պարսիկ տիրողների համար հայ աւատապետական եկեղեցիին կարող էր մեծ ծառայութիւններ մատուցել, որի համար նա վայելում էր նոյնպէս որոշ արտօնութիւններ:

Յետագայում իրերի դրութիւնը փոխւում է. բիւզանդացիք, Արեւմտեան Հայաստանում ջնջելով տեղական օրէնքները, սպառնում են նախարարների տանուտիրական իրաւունքներին, հարկային եւ այլ միջոցներով ոչ միայն սկսում են հայերին կեղեքել, այլեւ ընդունիլ տալ քաղկեդոնականութիւնը: Սասանեանները իրենց հերթին Հայաստանի արեւելեան մասում բռնի ուժով փորձում են պարտադրել զրադաշտականութիւնը, քանի որ այդ ժամանակներում հայ լուսաւորչական եկեղեցիին միաժամանակ ներկայացնում էր հայերի ազգային դէմքը: Ուստի եւ հայերը եւ մէկին եւ միւսին պատասխանում են զինուած ապստամբութիւններով: Պարսկահպատակ հայերը 451-ից, իսկ բիւզանդահպատակները՝ 475 թուականից մինչեւ 640 թուականը, (մինչեւ արաբական ներխուժումը), հաշուած մանր ու մեծ ապստամբութիւնները, ինն անգամ դէնքի են դիմել եւ աւելի քան 60 տարի պայքարել են իրենց տիրակալների դէմ, որի ընթացքում եւ յատկապէս նրանցից յետոյ, հայերի դաղթը դէպի Գամիրք զնալով մեծ չափերի է հասել:

## 1. — ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԴԵՍԻ ԳԱՄԻՐՔ

Հայերի դաղթը դէպի Փոքր Ասիա եւ դէպի Գամիրք, որքան էլ Հայաստանում բիւզանդացիների, պարսիկների եւ արաբների կողմից դորձուած աւերածութիւնների, հարստահարութիւնների, կեղեքումների հետեւանք համարուին, այնուամենայնիւ, այդ դաղթերի պատճառներից զլիւսւորը հանդիսանում էր բիւզանդական կայսրութեան նենդամիտ քաղաքականութիւնը: Բիւզանդական կայսրութիւնը մէկ կողմից հայերի դիմադրական ուժը թուլացնելու համար ջանք էր թափում հայերի ռազմական ուժը Հայաստանից հեռացնել, միւս կողմից, արաբական արշաւանքների դէմ պատուար ստեղծել, այն նոյն հայերին բնակեցնելով Անդրտաւորոսեան երկրում:

Բիւզանդական կայսրութիւնը իր այդ քաղաքական ծրագիրը իրագործելու համար, երբ հայերին Հայաստանում բազմապիսի միջոցներով, հարկային ծանր տուրքերով, քաղաքական սադրանքներով նեղում էր, մինչդեռ Փոքր Ասիայում ընդհանրապէս, իսկ մասնաւորապէս Գամիրքում ապրող հայերի հոգային, հարկային որոշ զիջումներ էր անում: Յոյների հետ ունեցած

իրենց մշակութային կապերի հետեւանքով եւ հակառակ իրենց միջեւ եղած կրօնական յիշատակին, հայերը իրենց հերթին, յաճախ պարսիկներէն, արաբներէն աւելի նախապատուութիւն էին տալիս բիւզանդացիներին:

Հայկական առաջին մեծ դպրոցը դէպի Գամիրք բաղկացած Պալղիկեան աղանդաւոր, ապստամբ հայ դիւղացիներէն, տեղի է ունենում 726 թուականին: Երկրորդը՝ 1021 թուականից մինչեւ 1064 թ. Արծրունիների եւ Բաղրատունիների դլխաւորութեամբ, Վասպուրականից, Անիից եւ Կարսից:

Բիւզանդական պետութիւնը որոշ քաղաքական նպատակներով, Պալղիկեաններին տեղաւորում է հենց Գամիրքի վաւառում: Նրանք բնակութիւն են հաստատում այդ շրջանում արդէն գոյութիւն ունեցող երեք բերդերի շուրջը՝ Տիփրիկիայի (տիփրիկ), Արաբկիբի եւ Կիւրիմի մօտ, որոնք երեքը միասին կոչւում են «Յոսաֆադաֆ» կամ «Տրիպոլիս»: «Հակառակ որ Պատկերամարտութիւնը Օրթոտոքս եկեղեցիին մէջ կայունացած դրութիւն դարձած էր եւ Պոլսոյ Պատրիարքական գահուն վրայ կը նստէր հայազգի Յովհաննէս Քերականադէտ (Գրամատիկոս, 832—843), որ Պատկերամարտ մըն էր, նորէն արծարծուեցաւ պատկերներու հարցը: ...Յովհաննէս Պատրիարք իբր դիտուն՝ ժամանակին բոլոր լուսամիտ եւ կրթուած մարդոց պէս պատկերամարտութեան յարած՝ եւ Լեւոն Հայկազնի օրերէն սկսեալ դործօն կեանք ունեցած էր իբր կայսեր խորհրդականը (Թէոփանէս Շար. 435), որքան ատեն որ ան պատկերամարտ էր, Յովհաննէս Պատրիարք, անյողդողը իր համոզումներուն մէջ, տեղի չտուաւ սպառնալիքի առջեւ եւ հալածուեցաւ եկեղեցիէն ու քաղաքէն (Գէորգ Վանակաւ, 811), իսկ Մեթոտիոս եպոս.ը պատրիարք դարձաւ (843 Մարտ 11), ինչ որ կը նշանակէ պարտութիւնը Պատկերամարտութեան, որ նախարձակ ճառագայթն էր Պալղիկեան զօրաւոր շարժման, որ ուրիշ բան չէր եթէ ոչ անդրանիկ փորձը մտցնելու բանականութեան ճրագը Եկեղեցիէն ներս եւ անոր լոյսով մաքրելու եւ գտնելու կրօնական զգացումը՝ եկեղեցական ծէսերու եւ անըմբռնելի խորհուրդներու ծանրութենէն:

«Պատկերապաշտութեան հետ ընդդէմ միտքի եւ խղճի ազատութեան, կը վերահաստատուէր կղերին տիրապետութիւնը եւ անոր ազդեցութեան տակ, Թէոդորա (Թագուհին) չարաչար կը հալածէր Պալղիկեանները, որոնք Ս. Գիրքին քրիստոնէութիւնը կը կանգնեցնէին աշխարհականացած պետական ուղղահաստութեան դէմ:

«Պալղիկեանք՝ մեծ մասամբ հայեր, հաստատուած Յիբրատի ձորին մէջ, Կոզոնիա եւ Մելիտինէ քաղաքներուն միջեւ գտնուած Փոքր Հայքի շրջանակին մէջ, Կ. դարուն հալածուիլ սկսան, սակայն խստաբարոյ հերձուածողները ցոյց տուին կատաղի դիմադրութիւն մը, պաշտպանելու համար իրենց կրօնական համոզումները: Մանձուրի (Տերսիմ) անմատչելի լեռներուն կռիւնած, անոնք յաճախ յարձակողականի կը ձեռնարկէին եւ կը սպաննէին իրենց հալածիչները, որոնք իրենց արիւննշտութեամբ չէին մնար Միջնադարեան հաւատաքննիչներէն: Անոնք նոյնիսկ զինեալ ապստամբութեան դիմեցին եւ Տրասիլոզնի մօտ՝ լեռնադաւառներու մէջ՝ իրենց սեփական հանրապետութիւնը հիմնեցին: Ը. դարուն սկիզբը Հայաստանի, Կապադովիոյ եւ Պոնտոսի կողմերը տարածուած այս ազանդին հետեւողներէն շատերը Միքայէլ Ա.ի (811—813) եւ Լեւոն Ե.ի (813—820) ատեն հալածանքներէն ազատելու համար անցան սահմանին միւս կողմը եւ արաբներէն օգնութիւն խնդրեցին Բիւզանդիոնի դէմ եւ ստացան՝ վասնզի արաբ տեսակէտներուն հաշտ էր տկարացնել Բիւզանդական կայսրութիւնը:

«Անոնք հիւրընկալեցին ամէն կողմէ եկող փախստական Պալղիկեանները, որոնք հաստատուեցան Կապադովիկոյ Արզէոս լեռան շուրջը եւ հոն զարդացուցին 3 բերդ-քաղաք՝ Տիփրիկիա (Տեվրիկ), Արաբկիր եւ Կիւրիմ, որոնք երեքը միասին կը կոչուէին «Յաւապառ» կամ «Տրիպոլիս»: Անոնցմէ կարեւոր հատուած մը փախուստ տուաւ Մելիտինէի իմիրին քով, որ զանոնք տեղաւորեց Մելիտինէի մօտ Արախունա ամրոցին մէջ (Պետրոս Սիկիլիացի, ԽԱ): Ասոնք առին Հաստատու անունը եւ իրենց պետն էր Սարգիս Հայր: Իսկ երբ Պալղիկեան շարժումը դէպի Արեւմուտք կանգ առաւ, անոնցմէ մաս մը քաշուեցաւ Հայաստան եւ հիմնեց Թ. դարուն վերջերը նոր կեդրոն մը՝ Ծաղկոտն գաւառին Թոնդրակ կոչուած տեղը եւ ստացաւ Թոնդրակեցի անունը:

«Բայց Տեվրիկ՝ հին օճախը Պալղիկեան հաւատալիքներու, միշտ անոնց գլխաւոր կեդրոնը մնաց: Մի քանի պատկերամարտ կայսեր իմաստութիւնը ունեցան անոնց բաւական լայն ազատութիւններ տալով սիրաշահելու, որպէսզի արաբական ներխուժումին դէմ պատուար հանդիսացող այս կենդանի ամրութիւնները չքանդուին: Թէոտորա իր հալածանքներով զարհուրելի կերպով հարուածեց զանոնք... բայց կարելի չեղաւ բնաջնջել զանոնք»:(1)

Այսպիսով հայերը Գամիրքում դեռ Տրդ դարի վերջերից մեծ թիւ եւ միաձուլ ազգաբնակչութիւն էին կազմում: 985 թուականին, Գամիրքի հայ ազգաբնակչութիւնը (լուսաւորչականներ) պէտք է, որ որոշ թուական կարեւորութիւն ստացած լինէր, որպէսզի Խաչիկ Ա. Կաթողիկոսին յաջողութեամբ բիւզանդիայից արտօնութիւն ստանալ՝ երկու առաջնորդարան (եպիսկոպոսական աստիճանով) ունենալու, մէկը՝ Սերաստիայում, միւսը՝ Լարիսայում (Վիրան շահիր):

Վասպուրականից՝ Արծրունիների, Անիից, Կարսից Բագրատունիների Գամիրք գաղթումով, հայերը այդ երկրամասում կազմուած են ազգաբնակչութեան դերիչտող տարրը: Հայ Փէոտալները բնակութիւն հաստատելով Գամիրքում կազմում են հայկական կախեալ իշխանութիւններ: Սենեքերիմ Արծրունին հաստատուած է Հալիս գետի վերին հովտում, մինչեւ նրա ծունկը եւ Վերին Եփրատի աջ ափին՝ կեդրոն ունենալով Սերաստիա քաղաքը: Այլ խօսքով, Արծրունին իշխում է Սերաստիա քաղաքից մինչեւ Կեսարիա եւ Սերաստիայից մինչեւ Արաբկիր ձգուող ողջ տարածութեան վրայ: Աշոտ Թագաւորի որդի Գագիկ Բագրատունուն, 1045 թ. արւում է Կեսարիայից մինչեւ Անդիտաւրոսեան լեռների միջեւ ընկած երկրամասը, իսկ Կարսում՝ իշխող Աբրահի որդի Գագիկին՝ Ծամնդաւից (Չամանթից) մինչեւ Խաւատանքի (Կիւրին) շրջանները:

Գամիրքը այդ ժամանակաշրջանում դառնում է նաեւ Կաթողիկոսանիստ յայր: Այսպէս, Անիի դրաւումից յետոյ, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը տեղափոխուում է Սերաստիա քաղաքը՝ Արծրունիների մօտ(2), իսկ Գրիգորիս Վկայասէր կաթողիկոսը (Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը) որն օճուում է Ծամնդաւում, յետագայում ապաստան է դառնում Մուսուսաւանում, Գուրգէնի որդի Գագիկի մօտ:

Գամիրքը 11-րդ դարում դարձել էր հայկական այն գլխաւոր կենտրոնը, որտեղ խմորուեցին Կիլիկիայի հայկական իշխանութեան առաջին սաղմերը:

(1) Արշակ Ալպոյանեան, «Պատմութիւն Հայ Գաղթականութեան», Գահիրէ, 1941, էջ 274—275—276:

(2) Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկուա 1861. էջ 132:

## 2. — ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Գամիրքը Հիւսիսից եւ Հիւսիս-արեւելքից համարեայ ամբողջութեամբ շրջապատուած է Հալիս գետի (Գրգըլ Ըրմազ) հովիտով: Արեւելքից որպէս սահման ունի վերին Եփրատը, մինչեւ Հին Մալաթիա քաղաքի հիւսիսային կողմը, Ակն ու Արաբկիրը ներառեալ, հարաւից՝ Թոհմա-Սու (Մելաս գետ), Դարենտայի եւ Կիւրինի գաւառները, իսկ արեւմուտքից՝ Պողազլարից մինչեւ Արդէոսի (Էրճիաս) լեռ) շրջանները: Հետեւաբար այս եռանկիւնածեւ երկրամասը իր մէջ ընդգրկում է Սեբաստիա Գաւառի (Սվազ) նահանգի գաւառները՝ եւ իր մէջ ընդգրկում է Սեբաստիա Գաւառի (Սվազ) նահանգի գաւառները՝ եւ իր մէջ ընդգրկում է Սեբաստիա Գաւառի (Սվազ) նահանգի գաւառները՝ եւ իր մէջ ընդգրկում է Սեբաստիա Գաւառի (Սվազ) նահանգի գաւառները:

Գամիրքի գլխաւոր քաղաքներն են՝ Սեբաստիան, Կեսարիան, Կիւրինը, Արաբկիրը, Ակնը, իսկ հայաչատ գլխաւոր քաղաքներից Կեմերեկը (Գամրակ), Տիվրիկը, եւ Դարենտէն:

Գամիրքը հայաչատ քաղաքներից երրորդը՝ Կիւրինը կառուցուած է հիւսիսից-հարաւ երկարած գոտի մի ծառախիտ հովիտում՝ Թոհմա-Սու (Մելաս գետ) թափուող գետակների ափերին: Կիւրին անունը ենթադրուած է առաջացած լինի թուրքերէն «Կիւրուն» բառից, որը նշանակում է աւազան: Ահաբայի թուրքերէն յիշատակութիւնների մէջ Կիւրին քաղաքը «ին-ոնիու» 15-րդ դարի թուրքերէն յիշատակութիւնների մէջ Կիւրին քաղաքը «ին-ոնիու» են է կոչուած, այսինքն՝ «քարանձաւի առաջ»: Թուրքերը Կիւրինը «ին-ոնիու» են է կոչել հաւանաբար նրա համար որ քաղաքը կառուցուել է քարայրների առաջ: Անցեալում այդ քարայրները կիւրինցիներին ծառայելով որպէս բնակարան նրանց կողմից էլ կոչուել են կառնառուն (Կիւրին տուն): Կարծիք կայ նաեւ այն մասին, որ վասպուրականի հայերի կողմից Կորինի անուամբ կառուցուած քաղաքը յետագայում հնչիւնական այլափոխութեամբ դարձել է Կիւրին: Բայց այս բոլորը մեր կարծիքով տարակուսելի են, քանի որ այս մասին դրաւոր տուեանք չկան: Մենք հակամէտ ենք ընդունելու որոշ գիտնականների այն կարծիքը, թէ Կիւրինը պտղոմէոսեան շրջանի կորաբնայի աղաւաղուած ձեւն է<sup>(1)</sup>: Քաղաքն ունէր հետեւեալ գլխաւոր թաղերը. Շուղուլ, Օրէն կամ Էրան, Տարեր, Սմկընա, Չերչիկոր, Խոնաւ Բլուր, (Եաշ Թեփէ), Աշուր (արդեօք չի յիշեցնում Ասուրը), Սեւ Բլուր (Գարա Տեփէ), Փերման Մահէ, Սաղ, Քեթէն-չայըր, Խաս-բաղ, Չախ-ձոր (ըստ ոմանց ջաղացքի ձոր): Այս թաղերը կառուցուած են իրարից 5-ից մինչեւ 20 բոպէ հեռաւորութեան վրայ, որի պատճառով քաղաքի մէկ ծայրից միւսը, այսինքն՝ Շուղուլի ծովից մինչեւ Չախ-ձորի աղբիւր տեւում է մօտ երկուս ու կէս ժամ: Գլխաւորապէս հայերը ապրում էին հետեւեալ թաղերում՝ Չախ-ձոր կամ Չախ-ձոր՝ 400 տուն, Սեւ Բլուր՝ 300 տուն, Խաս-բաղ՝ 200, Շուղուլ՝ 200, Չերչիկոր եւ Խոնաւ բլուր միասին 40 տուն, Օրէն կամ Էրան՝ 250, Սմկընա 28<sup>(2)</sup>: Թուրքերը գլխաւորապէս բնակում էին Տարեր եւ Աշուր թաղերում: Կային նաեւ հայերի հետ խառն թաղեր:

Քսաներորդ դարի սկզբին Կիւրինի ընդհանուր բնակչութեան թիւը հաշուած էր երեք հազար տուն, որի երկու հազարը հայ: Սակայն, մենք ենթադրում ենք որ դա չափազանցուած է: Նախ որ հայ բնակչութեան տները

(1) N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, p. 41, 316.

(2) Հ. Եփրիկեան. Բնաշխարհիկ բառարան. Վենետիկ, 1903—1905:

թիւը, ըստ տեղի առաջնորդների հաղորդած վիճակագրական տուեալների (բնաշխարհիկ բառարանում), 1550-ից չէր անցնում: Երկրորդ, պէտք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Կիւրինի թաղերը ձորերով, բլուրներով, նոյնիսկ դետերով անջատուած լինելով, մեծ տարածութիւն են բռնում: Որինակ, Սեւ բլուրը Աշուրից բաժանուած է դետով, իսկ տները, ի տարբերութիւն Կեսարիայի եւ Սեբաստիայի շէնքերի, իրարից բաւականին անջատ են. իւրաքանչիւր տուն կառուցուած է առանձին, շրջապատուած ընդարձակ պարտէզներով, հետեւաբար ենթադրուում է, որ տների թուական չափազանցութիւնը հետեւանք է քաղաքի երկրամասային մեծութեանը:

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում — հայերը տարադրուել եւ ջարդուել են, նրանց տները աւերուել: Այժմ Կիւրինում հայեր չեն մնացել:

### ԳԱՄԻՐՔԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՅԱՂԸ

Գամիրքի հայ բնակչութեան հիմնական զբաղմունքը գիւղերում հանդիսանում էր երկրագործութիւնը, անասնապահութիւնն ու այգեգործութիւնը՝ նախալեռնային որոշ շրջաններում, իսկ քաղաքներում, արհեստներն ու առեւտուրը: Մոռնալու չէ որ մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը Գամիրքի որոշ շրջանների զբաղմունքները շատ չէին հեռացել վաղ անցեալում դոյութիւն ունեցած զբաղմունքներից: Աւելին, դեռեւս Ասորեստանեան եւ խեթական տարեգրերի, Հին Կտակարանի, ինչպէս նաեւ Հերոդոտի եւ Ստրաբոնի վկայութեամբ Գամիրքի լեռնային շրջաններում ապրող ցեղերի գլխաւոր զբաղմունքը հանդիսացել է անասնապահութիւնը: Մինչեւ վերջերս «Ռուզն Խայլայի» լեռնադաշտում զբաղուում էին ձիաբծութեամբ, թունուզի շրջանում՝ ոչխարաբծութեամբ, իսկ Աբտաղի շրջանում՝ յատկապէս այծաբուծութեամբ: Մինչդեռ Արգէոսի շրջաններից մինչեւ Սարոսի վերին հովտում գտնուող Կիւրինի, Գարենտէի, իսկ Վերին Եփրատի սահմաններում՝ Ակնի, Արաբկիրի շրջանը Սարգոն Ակիատի ժամանակաշրջանից մինչեւ մեր օրերը, աչքի են ընկել այգեգործութեամբ: Անդիտաւրոսեան երկրի այդ շրջանից է, որ ինչպէս ասուեց սկզբում, Սարգոն Ակիատը ծիրանի, սալորի, թուրի, խնձորի եւ այլ ծառեր է փոխադրել Ասորեստան:

Հետաքրքրական է նաեւ այն, որ խեթական Արինա (յետագայում հաւանաբար Արի-Արաթա) քաղաքը, համաձայն Գամիրքում յայտնաբերուած դրաւոր փաստերի, հանդիսացել է ջուլհակների առանձնաշնորհեալ քաղաք<sup>(1)</sup>: Այն եղել է Սարոսի հովտի ստորոտի մասում, այժմեան Կիւրինի շրջանում: Այդ մասին խեթական կոտեքստում ասուած է, որ «երբ մէկը Արինա քաղաքում ջուլհակութեամբ ուզենար զբաղուիլ, նրա կինը, ընտանիքի անդամները եւ ազգականները ազատազրուում էին... իրենց դաշտային ստրկական պարտաւորութիւններից»: Այսպէս՝ ուրեմն, դեռեւս երկրորդ հազարամեակի կէսերին (Բ. Ա.) եթէ խեթական Արինան հանդիսանում էր ջուլհակութեան առանձնաշնորհեալ քաղաք, ապա Պտղոմէոսեան շրջանի Կորաեման, յետագայում Կիւրինը, մեծ համբաւ էր վայելում ջուլհակութեամբ եւ յատկապէս շաւաղործութեամբ:

(1) F. Hrozny, Codo Hittite, Paris, 1922, p. 51.

Այս բոլորը խօսում են այն մասին, որ դեռևս հնագույն ժամանակներից իւրաքանչիւր շրջան ելնելով իր նիւթա-կուլտուրական հիմքերից, բնական սլաքամաններից եւ աշխարհագրական դիրքից, մղում է տուել այն զբաղմունքներին, որոնք աւելի կարեւոր էին եւ միաժամանակ նպաստաւոր սլաքամաններ ունէին տուեալ շրջաններում: Միւս կողմից նկատելի է, որ աշխատանքի արտադրողականութեան դանդաղ զարգացման հետեւանքով նոյն զբաղմունքները միեւնոյն շրջանում պահպանուել էին մինչեւ 20-րդ դարի սկիզբները, ուստի Գամիրքի դիւղատնտեսական շրջաններում, եթէ մինչեւ համաշխարհային առաջին պատերազմի նախօրեակը դիրիչիւում էր բնափակ տնտեսութիւնը եւ նրա հետ կապուած նաեւ տնայնագործութիւնը, ապա քաղաքներում դոյու-թիւն ունէին արդէն բազմազան պրոֆեսիաների դժով արհեստներ: Այսպէս ուրեմն, Գամիրքում կիրառուող արհեստների մի քանիսը, մինչեւ համաշխարհային ա. պատերազմի նախօրեակը, դիւղական վայրերում առաւել կամ նուազ չափով դեռևս պահպանել էին իրենց տնայնագործական բնոյթը: Օրինակ, ջուլհակութիւնը, գորգագործութիւնը, կաւագործութիւնը, սալաշինութիւնը, առանձին դիւղերում նաեւ երկաթագործութիւնը արհեստներ էին, որոնք ինչպէս ասուեց, քաղաքներում արդէն պրոֆեսիոնալ բնոյթ էին ստացել եւ արհեստաւորներն ամբողջ տարին շուկայի համար ապրանք էին արտադրում:

«Արեւմտեան Հայաստանում արհեստաւորների հետ միասին կային նաեւ առեւտրականներ, որոնք իրենց դրամական հարստութեամբ բաժանուում էին խոշոր, միջին եւ մանր խմբերի: Քանակապէս գերիշխողը մանր առեւտրականներ էին, իսկ դրամապէս՝ խոշորները:

«Ժողովրդի հետ ամէնից շատ գործ ունեցողը մանր առեւտրականը, կամ շարչին էր: Սա լաւ դիտէր, թէ ո՞ր ապրանքը որտեղ, ե՞րբ, ո՞ւմ եւ ի՞նչ գնով էր վաճառելու, եւ օգտուելով բնակիչների աղքատութիւնից եւ տղիտութիւնից, կողոպտում էին նրանց:

...«Արեւմտեան Հայաստանի արդիւնաբերութեան միւս համեմատաբար բարձր ձեւը մանր ապրանքային արտադրութիւնն էր: Մանր ապրանք արտադրողը մի կողմից՝ տարբերում էր արհեստաւորից, իսկ միւս կողմից՝ բանուորից: Նա առաջինից տարբերում էր նրանով, որ աւելի քիչ էր կապուած, յաճախ անդամ չէր կապուած հողի հետ, իսկ երկրորդից՝ նրանով, որ ունէր իր աշխատանքի գործիքները: Եթէ արհեստաւորը բանում էր պատուիրատուի համար, հապա մանր ապրանք արտադրողը՝ սովորաբար շուկայի համար, վաճառելով իր շինուածքները կամ անմիջապէս սպառողին, կամ դնորդ-առեւտրականին:

...«Մանր ապրանք արտադրողների միջեւ եղած ունեցուածքային այդ շերտաւորումը որոշ տեղերում վեր էր ածուում դրամատիրական յարաբերութիւնների, որի հետեւանքով երկրի արդիւնաբերութեան մէջ դոյու-թիւն ունեցող արհեստային եւ մանր ապրանքային ձեւերի կողքին առաջ էր դալիս նաեւ մանուֆակտուրային ձեւը:

«Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ դիւղաքաղաքներում մանուֆակտուրան առաջանում էր տարբեր ճանապարհներով: Դրանցից մէկն այն էր, որ արհեստային վարպետը մեծացնում էր աշակերտների, իսկ որոշ դէպքերում՝ նաեւ վարպետուների թիւը, ընդարձակում էր արհեստանոցը, մտցնում աշխատանքի բաժանում եւ այսպիսով կազմակերպում դրամատիրական տնտեսութիւն:



«Մանուֆակտուրայի առաջացման ճանապարհներից միևսն այն էր, որ գնորդ-առեւտրականը, աստիճանաբար իրեն ենթարկելով մանր արտադրողներին հումք էր տալիս նրանց եւ վարձատրում շինուածքների համար: Այսպէս, Կիւրիևում (Սերաստիոյ վիլայէթ) 1860-ական թուականներին կար աւելի քան 1500 դադգահ, որոնց վրայ աշխատողները գերազանցապէս կանայք էին: Նրանց մի մասը բանում էր սեփական, իսկ միւսը՝ գնորդ-առեւտրականների տուած հումքով: Բայց բոլոր ջուլհակները տալիս էին իրենց դործուածքները վաճառականներին, որոնք իրացնում էին դրանք ինչպէս Թուրքիայի, նոյնպէս եւ Եւրոպայի դանազան քաղաքներում: 1907 թ. ժամանակակիցներից մէկը գրում էր. «Շալագործութիւնը Կիւրիևի մէջ քառասուն տարուան հնութիւն մը ունի. հետզհետէ զարգացման հետ ընդհանրացած է ամէն տուներէ ներս եւ այսօր քաղաքիս գրեթէ ապրուստի միակ միջոցն է եղած: Գործաւոր դասակարգը ամենագլխաւոր մասը կը կազմէ բնակչութեան, որ շալ գործելով ապահոված ըլլալ կը կարծէ իր օրապահիկը: Քսանէն քսանհինգ վաճառականներ Եւրոպական լարանը (մանուած բուրդ), մանածը եւ երբեմն տեղականը, գործողնրու կը յանձնեն: Այս վերջինները իրենց տներէ մէջ հասարակ եւ ժապարի հորերու (տեղկահ) վրայ նմուշներու համաձայն գործելով կը յանձնեն աղաներուն, ինչպէս իրենք սովոր են կոչել<sup>(1)</sup>»:

Հայ վարպետները իրենց շինուածքներով ու գործուածքներով մասնակցում էին համաշխարհային կամ ծայրերկրային ցուցահանդէսներին եւ շահում մրցանակ: Օրինակ՝ 1867 թ. Փարիզում Ստեփան Սերաստացի անուանունով մի արհեստաւոր վիրարութական եւ գինեկոլոգիական նուրբ գործիքներ պատրաստելուն համար արժանացաւ պատուոյ վկայականի: Նրա շինած սործիքները՝ ամենակատարեալը դասուեցան<sup>(2)</sup>»:


«1880 թ. Կիւրիևում մի հայ ջուլիակուհի, որի անուն ազգանունը, յժբախտաբար մեզ չյաջողուեց պարզել, հնարեց մի սարք, որով բրդեայ գործուածքների վրայ արտատպում էր եւրոպական նախշերը, ծաղիկների գծադրութիւնն ու դրանց գոյների երանգաւորումները: Զուլհակուհու մօտ սովորելու էին գալիս տարբեր վայրերից»<sup>(3)</sup>»:

Քաղաքային արհեստաւորները յատուկ մի փողոց ունէին իրենց կրպակաշխատանոցը, ուր իրենց ընտանիքի անդամներով (որդի, եղբայր, ըստ արհեստի տեսակի երբեմն եւ կիներն ու աղջիկը) պատրաստում էին զանազան իրեր, ապրանքներ եւ վաճառում ուղղակի յաճախորդին: Սակայն այդ արհեստաւորների մի մասը թէեւ ունէր իր գործիքները, բայց աշխատում էր վաճառականի հաշուին: Կային նաեւ արհեստաւորներ, որոնք արդէն զրկուել էին արտադրութեան միջոցներից, վարպետների արհեստանոցում աշխատում էին օրավարձով՝ որպէս բանուոր: Այնինչ դիւղական տնայնագործները տարուայ որոշ ամիսներին, այն էլ միայն կանայք, պատրաստում էին նիրենց անտեսութեան համար անհրաժեշտ իրերը, առարկաները: Օրինակ, նահապետական հողագործ ընտանիքի հարսները, չափահաս աղջիկները բուրդը գզում, մանում, ներկում եւ գործում էին, սղսոմարդկանց հագուստի՝ արայի, բոյաբայի, բեղէն արայի, վրդոնի, շալվարի, գլխաւոցի (բաշլլիս) համար տեղական կերպաս, սպիտակեղէնի համար՝ կտաւ, ինչպէս նաեւ մէջքի գօտի, խոնջան, տոլաղ, եւայլն, իսկ տնային գործածութեան համար՝ բրդից ջեշիմ,

(1) «Երկրի ձայն», 1907, քիւ 30, էջ 4: Տեսնել նաեւ «Մշակ» 1881, Մայիսի 8:

(2) «Բաղմալէպ», 1882, էջ 298:

(3) Ա. Ս. Համբարեան, «Ազրեբայի յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում», Երեւան, 1905, էջ 182—186:



Գորգի հեցիի եւ համգոյցի ձեւերը

կապերտ, գորգ եւ ճահճային բոյսերից՝ պրտուից, կնունից, նաեւ խըսիբ (փոսիթ) եւայլն, մթերքների պահպանութեան եւ փոխադրութեան համար՝ խուրջից, հէյրէ (երկար խուրջին), ալիւրի ջուալ՝ սեփլիս, խարար, տեկմէ եւայլն:

**Ջուլիակուրիւնը:** Գամիրքի գլուզերում տնայնագործ ջուլհակը կոչւում էր հոր գործող: Տեղում այդպէս էին անուանում ջուլհակին այն բանի համար, որ նա աշխատելիս ոտները կախում էր հորի՝ (փոսի) մէջ, որի վրայ շինուած էր լինում ջուլհակի հաստոցը:

Տնայնագործներն օգտագործում էին երեք տեսակ հաստոց (տորք) . Ա) գետնագործ կամ տափեգործ . տորքը գործ էր անում նեղ շաղով ջեջիմ, մէջքի դօտի, տոլաղ, խոնջան գործելու համար, որը գործուածքային արտադրութեան միջոցների մէջ ամենանախնականն էր . Բ. Հորք՝ հորիգոնական տորքը հանդիսանում էր Գամիրքում տորքի երեք ձեւերից ամենաընդհանրացածը,

որը օգտագործուում էր յատկապէս տարազի «կերպաս»ը, մանուսան, սպիտակեղէնի կտաւը գործելու համար, իսկ ուղղահայեաց տորքը՝ կարպետ, դորդ, եւ գորգային գործուածքով խուլըին, բարձի երես եւ այլ հիւսուածք պիտոյքներ գործելու համար<sup>(1)</sup> :

Ձուլհակութեան մէջ օգտագործուած այդ երեք տիպի պարզունակ հաստոցները տարածուած են եղել նաեւ համարեայ ամբողջ Հայաստանում : Այդ մասին 1909 թ. Թիֆլիսում տեղի ունեցած տնայնագործական համագումարի ղեկուցադրում կարգում ենք. «Մինչեւ այժմ ես տեսել եմ միայն<sup>(2)</sup> երեք ձեւի գործիքներ : Վանում, որ այդ արհեստը շատ վաղուց ունի իւր նշանակութիւնը, իմ ժամանակ, այսինքն 23 տարի առաջ, դեսնապիտ տորքերով գործում էին կտաւ շալերը միայն : Նոյն ձեւով ես այս տարի տեսայ Փամբակի չրջանում, Համալուում եւ Ղչլաղում» :

Այս տորքերից իւրաքանչիւրը ունէր իր օգտագործման տարբեր ձեւը : Օրինակ, հորիզոնական հաստոցի հորի վրայ, եթէ ջուլհակը իր ձեռներն ու ւտքերն էր գործի դնում, ապա ուղղահայեացի եւ դեսնագործ տորքի վրայ՝ միայն ձեռները : Ձուլհակի հորիզոնական հաստոցի (հորի) վրայ աշխատելու ձեւը դեռեւս հին ժամանակներում ընդհանրացած է եղել նաեւ հայկական միւս պաւստներում : Այդ մասին հետաքրքրական է այն տեղեկութիւնը, որը տեղ է գտել 15-րդ դարի մի ձեռագրում : «Ձոր օրինակ ոստայնանի յորժամ ոստան հինէ. նախ չափէ զմի թեյն եւ ապա հինէ. եւ ի գործելն ոտիւքն եւ ձեռք վճարէ. թէ զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սարճին ոչ զիտելով, թէ զինք գործեաց՝ մինչեւ վճարէ : Եւ ի վճարելն հատանէ եւ ապա դարձեալ յետ տա ի սարճնէն եւ կրկին չափէ, եւ տեսանէ զգործն թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն»<sup>(3)</sup> :

Գամիրքի գիւղերում, ինչպէս ասուեց, գերիշխում էր բնափակ տնտեսութեան ձեւը եւ իւրաքանչիւր տնտեսութիւն, համաձայն իր նիւթական կարողութեան, տեղական ճաշակով բրդից, բամբակից պատրաստում էր իր տնտեսութեան համար անհրաժեշտ հագուստները, իրերը եւ առարկաները : Իսկ հումքը վերամշակելու համար, ըստ աւանդական սովորութեան, դիմում էր հարեւանների փոխօգնութեանը :

(1) Հորը կամ ֆերը ունէր 2—3 մեքր երկարութիւն, մօտ մէկ մեքր խորութիւն եւ մէկ մեքր լայնութիւն : Հորը այն փոսն է, որի վրայ շինուած է հորիզոնական տորքը : Տորքն ունի չորս տափան, որոնց վրայ հաստատուած է տորքի ամբողջ կազմածը : Տորքը բաղկացած է հետեւեալ մասերից՝ սարճիւր, որի վրայ փաթաթուում է գործուածքը, մաշպարը՝ առաջինի ճիշդ դիմացը գետնորում կաղնու փայտէ կամ երկաթէ մի ձող, որը գործ է ածուում փաթտալու, այսինքն՝ հէնքը պրկելու համար : Տուփան կամ տեփը այն շրջանակն է, որի մէջ գետնուում է սանդրը (սայրը) : Տորքի վերելում կախուած գիվգիվները (ճախարակները) ոտքերի շարժմանը գուզնքաց ծառայում են հենքի բերանի բացմանը : Ապաթիւր, տեղական քարքառով՝ ճիւճուը, պատրաստուած է լինում բամբակէ քելից, հէնքի քելերի քանակին համապատասխան : Ձուլհակի գործիքներն են համդիսանում մաքորը (մակոյկ), մասուրան իւմ մասրան, մթիթը կամ մթեթը : Իսկ որպէս օժանդակ աշխատանիքոցներ՝ ճախարակը (բահրա), վիւսանը՝ կածի պատրաստման համար, սանտերը, իլիկը (քելի), քասմանը, սանոստիկը, կոմը :

(2) Տնայնագործական համագումար. գեկուցագիր, Թիֆլիս 1909, էջ 235 :

(3) Հայկական ՍՍՀ. Մատենադարանի ձեռագիր. քիւ 1402 (Մատթեոս վարդապետի աշխատասիրեալ ի քննութիւն գործոց առաքելոց) էջ 64 ա :

Հումքի նախնական վերամշակման գործողութիւնները՝ բրդի լուանալը, չորացնելը, գլխելը, մանելը եւ ներկելը անցեալում, առաւելագոյն եղել են ձեռքի գործ եւ կատարուել են բացառապէս կանանց կողմից: Նախքան լուանալը, տան հարսները կամ չափահաս աղջիկները բրդի կանձերը (եափաղը) բաց անելով, փռում էին բակում կամ տանիքում, որպէսզի ոչխարի քրտինքից մասամբ թաղիքացած բրդերը ջրի մէջ հեշտ քրքրուեն, ապա առուի կամ աղբիւրի հոսուն ջրի տակ լաւ թրջելուց յետոյ, փայտէ թակերով բուրդը ծեծում էին մինչեւ փրփրելը: Միեւնոյն գործողութիւնը մի քանի անգամ կրկնուելուց յետոյ, բուրդը սառը ջրով պարզաջրում, քամում եւ ապա արեւի տակ չորացում էր: Այնուհետեւ կատարում էր բրդի գոլման ու սանրումը: Աւելի տարեց, համեմատաբար հմուտ կանայք, բրդերը նախ մատներով գոլում եւ ապա սանտերքով սանրում էին: Բրդի սանրուածքից ստացում էր երեք տեսակ հումք: Առաջին բերանը Գամիրքում կոչում էր ծիւղաբուրդ, երկրորդը՝ միջնեկ, երրորդը՝ օրձիմ: Ծիւղ բուրդը օգտագործուում էր ընդհանրապէս շալերի, գօտիների, գորգերի, հէնքաթելերի, միջնաթելերի համար, միջնեկը՝ յատկապէս գուլպայի, ձեռնոցի, գլխանոցի, իսկ «օրձիմը»՝ ջեզիմի, թեթեւ-ջուլի եւ տան առօրեայ այլ գործուածքների համար:

Ներկումը: Տնայնագործները սովորաբար թելերը ներկում էին թոնրի կամ օջախի վրայ: Իւրաքանչիւր գոյնի համար նրանք օգտագործում էին առանձին ներկատու բոյսեր. այսպէս, օրինակ՝ դեղինի համար ճեհերի (ալա-ժահրի) հունտերը, կարմիր համար՝ տորոնը, որ «Բոս Կրայա» էր կոչում, բորտոյի համար՝ սելի կեղեւը, սրճագոյնի համար՝ ընկուզենու տերեւը, ընկոյզի կանաչ պատեանը: Թելերը ներկում էին հետեւեալ ձեւով. օրինակ՝ կարմիր ներկելու համար տորոնի արմատները նախ չորացնում, փշրում եւ ապա թոնրի մէջ կամ օջախի վրայ ներկուելիքի համար անհրաժեշտ չափով ջրի մէջ եռացնում էին այնքան ժամանակ, մինչեւ ներկանիւթը իր գոյնը ջրին տար, որից յետոյ կրաջրի կամ թանաջրի մէջ արծնուած թելի կաժերը մխրճում էին եռացող ներկանցի ներկանիւթին, ճաշի մի դգալ կերակրի աղ կամ շիւր լուծում էին կաթսայի մէջ եւ կաթսան կրակի վրայից ցած բերելով, թողնում, որ սառչի, ապա թելի կաժերը կաթսայից հանելով, թեթեւ քամում էին եւ ստուերոտ տեղ չորացնում:

\*\*



Գամիրքում լայն տարածում գտած գրադմունքներից անհրաժեշտ է քննութեան առարկայ դարձնել նաեւ երկու գլխաւոր արհեստներ. ջուլհակութիւնը եւ գորգագործութիւնը: Այդ արհեստները թէեւ քաղաքներում վաղուց ասպարէզային բնոյթ էին ստացել եւ արտադրում էին շուկայի համար, սակայն գիւղերում, ինչպէս ասուեց, բացի իրենց տնտեսութեան կարիքների համար աշխատող տնայնագործներից, կային նաեւ ջուլհակներ, գորգագործներ, որոնք ի տարբերութիւն քաղաքի արհեստաւորների, պատուիրատուի հումքով մանում կամ գործում էին պատուիրատուի համար: Քաղաքի արհեստաւորները իրենց միջոցներով եւ դնած հումքով ապրանք էին արտադրում շուկայի համար: Մինչդեռ 19-րդ դարի 70-ական թուականներից սկսած, քաղաքային արհեստաւորներից յատկապէս ջուլհակները առեւտրական դրամազուխէն կախման մէջ ընկնելով, այսինքն՝ դադարելով ուղղակի սպառողի հետ գործ

ունենալուց, աշխատում էին միջնորդների, առեւտրականների պատուէրով  
Գամիրքում հիւսուածեղէնի արդիւնագործութեան գլխաւոր կեդրոննե-  
րից մէկն էր նաեւ Կիւրիմը<sup>(1)</sup>, ուր զարկ էին ստացել արտագրութեան այն  
ճիւղերը, որոնք տուեալ շրջանում բարենպաստ պայմաններ ունէին: Օրինակ,  
Կիւրիմը իր աշխարհագրական դիրքով ամենայարմար վայրն էր բրդի եւ մե-  
տաքսի հիւսուածեղէնի արդիւնագործութեան զարգացման համար, որովհե-  
տեւ մի կողմից լեռնային արօտավայրերը իրենց բուսականութեամբ շատ նը-  
պաստաւոր պայմաններ են ստեղծում յատկապէս ոչխարաբծութեան համար,  
միւս կողմից քամիներից պաշտպանուած նրա բարեխառն հովիտները, առատ  
ջրերով, ամէն յարմարութիւն ընծայում էին այգեգործութեան համար, ուր  
ծիրանին, խնձորենին եւ թթենին լաւ էին աճում եւ նպաստաւոր հիմք ստեղ-  
ծում վերամշակելու, արդիւնագործելու համար:

Կիւրիմում հիւսուածեղէնի համար անհրաժեշտ հումք հանդիսացող  
բրդի որոշ մասը հայթայթում էր տեղական խաշնարածներից, իսկ մեծ մասը  
ստացւում էր Սուրիայի քուրդ քանիւրիմերի — վաճառականների կողմից: Նը-  
րանք ամէն ամառ իրենց մասցու ոչխարի հօտերը պարարտացնելու համար  
Կիւրիմի մերձակայ Կովտիլի լեռան արօտավայրերը եայլա էին բերում եւ,  
նախքան մեծ քաղաքների՝ Կեսարիայի, Իզմիրի շուկաները քշելը, ոչխարնե-

(1) Հ. Ղազարեան, «Արեւմտահայ արհեստագործութեան բնագաւառում, միջնադարի  
եամեմատութեամբ, դարի առաջին կէսին առաջացել էին մի շարք նոր ու յատկանշական եւ  
րեւոյթներ: Նախ հուսիս քաղաքի մօտ լինելու, վաճառահանման շուկաների հետ կապուած  
միջնորդ, հարստացող առեւտրականների քելագրանքով, գնորդների պահանջարկով, պե-  
տութեան ուղղակի եւ անուղղակի միջամտութեամբ, արհեստատեսակների մէջ խմբաւորում  
էր կատարուել, ոչ միայն ըստ գիւղերի, այլեւ ըստ քաղաքների: Այստեղ խօսքը մանր,  
փոքրացած, գուտ տեղական կարիքները բաւարարող արհեստագործների մասին չէ, այլ այն  
արհեստատեսակների, մանուֆակտուրաների, որոնց հոշակը մեղքում էր գաւառական սաւ-  
մանափակութիւնը, դուրս գալիս քաղաքների անձուկ շրջապարիսպներից եւ մտնում համա-  
քուրբական, նոյնիսկ համաեւրոպական առեւտրական հրապարակները:

Արեւմտահայ բոլոր քաղաքներն ունէին արհեստագործութեան բազմաքիւ գիւղեր, սա-  
կայն դրանցից միայն մէկը կամ երկուսն էին հոշակուած դրսում: Ակնյայտ դարձաւ, որ  
պղնձագործութեան արհեստը տարածուած էր երկու տասնեակ քաղաքներում, սակայն ար-  
տահանման մեծաշնորհը մնում էր՝ ԵՒԿՈՒԿՈՒՍԻՆ, ԿԱՐԻՆԻՆ, ԵՐՁՆԿԱՅԻՆ: Ոսկերչութեան  
հայրենիքը՝ ՎԱՆՆ էր: Հիւսուածեղէնի կատարելագործուած արհեստների գիւղերը համա-  
կեդրոնացել էին՝ ՍԵԲԱՍՏԻԱՅՈՒՄ, ԱՄԱՍԻԱՅՈՒՄ, ՄԱԼԱԹԻԱՅՈՒՄ, ՈՒՐՖԱՅՈՒՄ, ԿԻԻ-  
ՐԻՆՈՒՄ, ԿԱՐԻՆՈՒՄ: Բրդեայ գործուածքների պատրաստումը վերապահոււմ էր՝ ՄԱՐԱ-  
ՇԻՆ, ԿԱՐԻՆԻՆ, ՀԱՃԸՆԻՆ: Ուրեմն արհեստագործութեան գիւղերը դարակէսին համախըմ-  
բուել էին ըստ քաղաքների, առաջացնելով մի պրոցես, որը գնալով աւելի էր խորանում,  
քանի որ եւրոպական ապրանքների ներմուտի հոսիւն ուժեղացման պատճառով հարկադրա-  
կան պահանջներ էր առաջանում կատարելագործումներ անել ձեռագործութեան ասպարէզում,  
դիմագրաւել մեքենայի հրաշքին: Փոքրացած պատահական արհեստաւորներն անմիջապէս  
դուրս էին շարտում հրապարակից, վերածոււմ օրավադու մշակների, բռնում պանդխտու-  
թեան ցուպը կամ վերադառնում երկրագործութեան: Էսմաֆուրիւմների եւ մանուֆակտու-  
րաների մէջ խմբուած արհեստաւորները, իրար վրայ կուշ գալով, երբեմն էլ գործիքների,  
ներկերի, արդարանքի ձեւի փոփոխումով, շարունակում էին տնտեսական պայքարը, գիւղեր  
ամում, եթէ ոչ առաջընթացի, ապա առկայ իրավիճակի յարատեւելուն»: (Արեւմտահայերի  
սակիւ տնտեսական եւ քաղաքական կացութիւնը 1800—1870, Երեւան, 1967, էջ 202—203)



Գորգագործութեան եւ ջուլիակութեան գործիքներ

Ըր խուզում էին եւ հաւաքուած բուրդը, փոխադրութեան դժուարութեան պատճառով, ստիպուած էին լինում հենց տեղում վաճառել: Այսպիսով, դեռ հին ժամանակներից Կիւրիների բնա-կլիմայական պայմանները նախադրեալներ էին ստեղծել ջուլահագութեան զարգացման համար: Չնայած հումքի այդպիսի առատութեանը, այնուամենայնիւ, Կիւրիների շալագործ արհեստաւորների «տնայնագործական» ձեւը, իր նախնական տեխնիկով, չէր կարողանում թուրքիայի զանազան գաւառներում լայն սպառում ունեցել շալեղէնի արտա-դրութիւնը բարձրացնել, դրանով իսկ, առարկայականօրէն, տնտեսապէս քայքայուող սահաւահող դիւղացիների համար վարձ ու աշխատանք ապահո-ւեց: Այդ իսկ պատճառով Կիւրիների աշխատութեան մի ստուար մասը տա-ռապում էր առանց աշխատանքի. նրանք Սեպտեմբերից գնում էին դաշտային Կիլիկիա, յատկապէս Ատանա, բամբակի դաշտերում աշխատելու կամ՝ Սու-րիա (Ամբիս) մատուտակի (փայամ քոջի) քաղցր արմատ փորելու համար:

Սրանք Մարտ ամսի վերջերին միայն, շողերին չդիմանալով, վերադառնում էին իրենց տները: Երկու ամիս իրենց տնտեսութիւնում այդիններում զբաղելուց յետոյ, Մայիսի կէսերից մինչեւ Օգոստոսի կէսերը գնում էին դէպի Կիւրինի արեւելեան շրջանը՝ դադի (փշոտ բոյս) խեժ հաւաքելու: (1)

Շալադործութեան նախնական տեխնիկայի աստիճանական զարգացման եւ բուսական ներկերի օդտադործման հետեւանքով, ինչպէս նաեւ 19րդ դարի վերջերից Փրանսիայից «Ժակվար» կամ ինչպէս տեղում ասում էին՝ քագար գործող մեքենայի ներմուծմամբ, շալադործութիւնը Կիւրինում մեծ զարկ է ստանում: Շալադործ-հաստոցների ընդհանուր թիւը, համաշխարհային առաջին պատերազմի նախօրեակին, Կիւրինում հասնում էր 3500-ի: Շալի արտադրութեան զարգացման հետ բարձրանում էր նաեւ Կիւրինի շալի որակը, յուկայից վանելով պարսկական շալը: Այդ շալը մեծ համբաւ էր վայելում՝ ինչպէս Թուրքիայի ներքին շուկաներում, նոյնպէս եւ Եղիպտոսում, Բուլղարիայում:

Կիրունում արտադրում էին շալի մի քանի տեսակներ՝ լափորի (լահորի), բաստմի, ինչպէս նաեւ ինլօֆ Էմմու հնարած Չուրուխլու կամ կոկոզուկ եւ Անէմ շալի օրինակները: Բացի շալից, Կիւրինում արտադրում էր նաեւ կերպասեղէն (շայախ), նախազարդ ծածկոցներ, վարադոյրներ, բարձի հրեսներ: Համաձայն Սերաստիայի Փրանսական Հիւպատոսի տեղակալի 1911 թ. տեղեկադրի, Կիւրինում Հիւսուածեղէնի տարեկան արտադրութիւնը հասնում էր երեք միլիոն ոսկի Փրանքի կամ վեց հարիւր հազար տոլարի (1): Այդ նշանակում է, որ սպառման շուկայի լայնացմանը զուգահեռ, աշխատող ձեռքի կարիք էր զգացւում, որով սակաւահող գիւղացիութեան մեծ մասն ընդգրկւում էր տեղական արդիւնադործութեան մէջ:

(1) Գամիբքում ղեկին — գազը անում է Ագտալից (Սպիտակ Սար) մինչեւ Կիւրինի արեւելեան շրջանի բլուրները, յատկապէս Գալիկանցոց-Խուրսի մօտերը, Գոշնի, Գավաֆ, Գարա-Տարախ, Քեվեմլի-տերէ եւ այլ վայրերում, ինչպէս նաեւ Կիւրինի լեռներից մինչեւ Արգեոսի փեշերը՝ Թումարգայի շրջակայքը, յատկապէս Չուրուխլու, իննէ-սու գիւղերում, որտեղ գագերի արտը այգու մասն խնամում էին:


Գագի մի քանի տեսակներ կան գետինն կայած եւ տարածուած, գետնից 30-50 սանդիւնք բարձր, որը սեւ, մի խոշոր, կծկուած ոգնու ձեւ ունի: Ժողովուրդը նրա տարրեր ձեւերից եւ յատկութիւններից ելնելով՝ տուել է նրան զանազան անուններ. օրինակ՝ *գնդակաղ, եզան, ուռի, Թոտան, չափլա կազ* եւ այլն:

Խեծի (ֆիքրէի) հաւաքումը տեղի է ունենում երեւ ամառում ընթացքում, սակաւահող այր գիւղացիները աշխատում էին խմբերով եւ կամ իրենց ընտանիքի անդամների հետ: Խմբերից ոմամք փոքրում էին բոյսերի բուրսիքը, առանց սակայն արմատը քանդելու, ուրիշները՝ բունին *գանակ էին դարնում*, այսինքն՝ գագի բունի վերից սկսած երեք կարգի վրայ կտրուածքներ բանալով, ստացւում էր առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի խեծ: Եթէ եղանակը չոր լինէր, խմբի իւրաքանչիւր մարդ՝ միջին հաշուով սեզոնին 5-7, մինչեւ 9 լիդր խեծ կարող էր հաւաքել, իսկ եթէ անձրեւոտ լինէր, քմից արտածորած խեծերը հալուում փչանում էին եւ «ֆիքրէ» հաւաքողները ձեռնուձեռն վերադառնում էին տուն:

Գագի խեծի լիդրը, այսինքն՝ վեց օլսան կամ ութը կգ. ըստ տեսակի, արժէր 100-150 դրուշ, որը գործ էր անում հիւսուածեղէնի սլոյացման, մերկերի, շրեղների պատրաստման եւ այլ նպատակների համար:

(2) Տես, «Ալիս», օրգան Սերաստիոյ վերաշինած Միութեան, Նիւ Եորք, 1930—1931 թ., Հոկտ. Նոյ. Գեկտ. միացեալ թիւերը, էջ 18—19:





Տեղական «ճագարի» (ժակվար) մոնոլ, (վարպետ Վարդան Ճանիկեանի սարքածը):


Այսպէս, ուրեմն, Կիւրինի շալագործ արհեստաւորները թէեւ վաղուց ի վեր շուկայի ապրանք էին արտադրում, սակայն շալագործութեան նախնական տեխնիկան հնարաւորութիւն չէր ալիս ոչ շուկայի պահանջը դոճացնելու եւ ոչ ալ տեղի ազատ աշխատաւորութեան մեծ մասին դործ հայթայթելու: Այդ հնարաւոր եղաւ յատկապէս ժակվարի ներմուծումով, ինչպէս նաեւ մեծ մասամբ շալագործութեան հետ տեխնիկայի բարելաւման շնորհիւ, որին իրենց ականդն էին բերում Կիւրինի հնարամիր արհեստաւորները: Օրինակ, շալագործ Կարապետ Մինասեանը՝ որին ասում էին խելօք էմմի, շալը տորքի վրայ լայն սանտրով դործելու եւ հենքի ուզած մասի բերանը քաշող լարերով<sup>(2)</sup> բանալու իր նորաձեւութեամբ սկիզբ էր դրել, եթէ այսպէս կարելի է ասել, շալագործութեան մեքենայացման առաջին քայլին: Մինչ այդ շալը թէեւ վաղուց ի վեր հորով էր դործւում, բայց մինչեւ Խելօք-էմմու դիւտարարութիւնն իր նորարարութիւնը շալը համարեայ ձեւքի դործ էր, նախչերը կատարում էին ձեւքով: Այնուամենայնիւ, մինչեւ 19րդ դարի 70-ական թուականները, շալագործութիւնը Կիւրինում մնում էր իր տնայնագործական վիճակում, այսինքն՝ շալագործ արհեստաւորն իր ընտանիքի անդամների հետ հումքը պատրաստում, ներկում, շալի օրինակը հանում, դործում եւ վաճառում էր ուղղակի սպառողին: Այդ հանգամանքն իր արտացոլումն է դառնում արհեստաւորի հենց իր՝ Խելօք-էմմու յօրինած եւ իր դործած շալին նուիրած երգ-նուանաւորին մէջ:

(2) «Քաշող լարերը», արհեստագործական շրջանում կոչւում են չեքեճէք, որոնք լիւնում էին 5.7 հատ:

Թումպալին աղջիկն էր մաներ  
 Խելօքը օրինակն է հաներ,  
 Աման մը անուշ կերեր,  
 Շալն արեր չարշուն(1) տարեր:

Հայն ու քուրքը սեյիրն(2) է հաներ  
 Շալ է գործեր, շալ է գործեր,  
 Էս ինչ տեվիր մալ(3) է գործեր,  
 Հայն ու քուրքը սեյիրն հաներ:

Խորաթեցեֆ(4) տեներ, տեներ(5)  
 Խելօքն է հիւններ(6) հաներ.  
 Ալ է գործեր, շալ է գործեր  
 Աս ինչ աղուոր մալ է գործեր: (\*)



Ապրանձային պիտակ Կիրինից  
 (19-րդ դարի 80-ական թուականներ):

Նաչխաղարդ շալագործութիւնը, որ ջուլհակութեան սլարդ արհեստից կիրառական արուեստի մի նոր ճիւղի վերածուելու հետ է կապուած, սկսում է որոշ աշխուժութիւն ցոյց տալ Կիրինում: Գործում են ոչ միայն հրապարակի վրայ ծանօթ շալերի օրինակները Լախորի, Անկմի, Պատմմի եւայլն, այլ Կիրինը, յանձին իր հմուտ շալագործների, յատկապէս Կարապետ Մինասեանի, ունենում է իր չորսուխում շալը, որի կատարելագործուածը յետագայում կոչւում է կապուակ շալ: Կիրինի շալագործութեան համբաւի հետ միասին մեծանում է նաեւ շալագործ վարպետների միջեւ մրցակցութիւնը: 19րդ դարի 80-ական թուականներին Կիրինում կար Արլճանեց Սեքօ Էմին, որը նոյնպէս ճանաչուած շալագործ վարպետ էր, Խելօք-էմմին իր անունից հրապարակ է հանում մի նոր շուրուխում եւ լուր է տարածում որ իբր թէ Խելօք-էմմին գողացել է իր «օրինակը»: Խելօք-էմմին բողոք ներկայացնելով աղաներին, պատիւ է պահանջում եւ ականատեսներով հաստատել է տալիս, որ Սեքօ-էմմին գործատուի երգիկից դադարողի դիտելով, ընդօրինակել է Խելօքի չորսուխումն, բայց զգուշաւորութեան համար շալի մի դիծը (չուրուխ) տարբեր գոյնով գործելով է հրապարակ հանել: Այս առիթով Խելօքը յօրինում է մի ոտանաւոր, որտեղ իր արտայայտութիւնն է դաւել արհեստագործական շրջանների մրցակցութիւնը:

Կիրինի առեւտրական քաղքենի դասը դեռ 19րդ դարի 80-ական թուականներին ձեռնամուխ լինելով շալի արդիւնագործութեանը, տեղական շալագործութիւնը, կերպասագործութիւնը 19-րդ դարի վերջին դուրս է բերում

(1) Շուկայ: (2) Հիացումով դիտել: (3) Ապրանձ, իր: (4) Խօսեցեֆ: (5) Տանիք, տանիք: (6) Հնարամտութիւն, յատկութիւն: (\*) «Կիրինի Յուշ» նիւ Երբք, Ա. տարի, թիւ 3, էջ 89:

մնայնադործական շրջանակներից: Այդ գործին զարկ տուողներից առաջինը լինում է Մահտի Սարգիս Մինասեանը, որ Մանչեսթրից բերել է սալիս բրդի լարանը, բամբակի մանածը, ինչպէս նաեւ Ֆրանսիայից ժակվար գործող մեքենաներ, նոյնիսկ իր նկարով ասլրանքային պիտակ է ստեղծում: Այսպէս, Կիւրինի համբաւաւոր շալը Թուրքիայի հրապարակից կարողանում է արտամղել շալը, սակայն պէտք է նշել, թէ կերպասագործութեան ասպարէզում իր նախնական տեխնիկայով չի կարողանում մրցել եւրոպականի հետ:

Մինասեանին հետեւում են Չոքլարեանը, Չուլճեանը, Գարայեանը, Ղլբաշեանը, Չերչիեանը եւ ուրիշներ, որոնք կառուցում են իրենց սեփական ներկատները: Տեղի է ունենում աշխատանքային ձեւի զարգացման բաժանում, ուստի, ինչպէս եւ անցեալում, շալագործ վարսետը այլեւս ամբողջ աշխատանքը ինքը չէր կատարում, այլ հանդէս են դալիս հենք պատրաստողներ՝ հինդներ, ներկողներ, գործողներ եւ արդուկողներ: Ինչպէս արտադրութեան միջոցները, նոյնպէս եւ հումքը կեդրոնանում են գործատէր վաճառականներին՝ աղաների ձեռքը: Իւրաքանչիւր աղա ունէր իրեն կցուած շալագործները, որոնք աղայի ժակվար մեքենայով եւ հումքով գործում էին շալը եւ շաբթուայ վերջը յանձնում աղային: Աշխատանքը վճարւում էր ըստ շալի տեսակի եւ սրակի, հասը 2—5 դրուշ:

Այսպէսով, Կիւրինի հայ առեւտրական բուրժուազիան 19-րդ դարի 80-ական թուականներից սկսած, զարկ տալով շալագործութեան արդիւնաբերութեանը, իր տնտեսական ազդեցութեան տակ էր առնում նիւկին շալաբերութեանը, իր տնտեսական ազդեցութեան տակ էր առնում նիւկին շալաբերութեանը, որոնք իրենց արտադրութեան միջոցի տէրն էին, այսինքն՝ ունէին մէկ, երկու ժակվար, ուստի եւ հնարաւորութիւն ունէին աւելի հեշտութեամբ աղա փոխելու<sup>(1)</sup>, քան նրանք, ովքեր արտադրական միջոցներից զուրկ արդէն դարձել էին շալագործ բանուորներ: 20-րդ դարի սկիզբներին, երբ արդէն ժակվարի տեղական օրինակների պատրաստութեամբ գործող մեքենաները աւելի ձեռնտու են դառնում<sup>(2)</sup>, շալի արտադրութեան մէջ առաջանում է նաեւ գործատէրի յանձնակատարի դերը կատարողների պահանջը: Այս վերջիններն այլեւս շալագործութեամբ չէին զբաղւում, այլ առնում էին աղայից պատրաստի հումքը, պատրաստում գործուելիք շալերի «ծաղկաւոր օրինակները»՝ խաւաքարները (քարտոն) եւ իրենց ժակվարով գործել էին տալիս շալագործ բանուորներին: Այսպիսով, շալագործ բանուորն իր աշխատավարձը ստանում էր գործատէրի յանձնակատարից, անշուշտ, աւելի պակաս, քան ինքը՝ գործատէրն էր վճարում իւրաքանչիւր շալին: Այս պայմաններում շալագործութեան մէջ ոչ միայն աշխատանքի բաժանում էր կատարել ըստ աշխատարար ձեւակերպերի, այլեւ առաջացել էին նոր արտադրայնաբերութիւններ: Այս բոլոր նորարարութիւնները զարգացուցին տեղական արտադրութիւնը, բայց չկրցան ստեղծել գործարանային կեանք:

(1) «Աղա փոխել» նշանակում է գործատէրի որոշ անհամապատասխան դէպքում, մի ուրիշին ֆով աշխատել:

(2) Կիւրիճի արհեստաւորները, ինչպէս նաեւ Սեբաստիայի երկարաքագործները, մեծ հետաքրքրութեամբ պատրաստում էին փայտից, յառկապէս տաճակներու եւ երկաթից տեղական ժակվարներ, որոնց հասը արժու էր 7—11-ի փոխարէն 3—5 ոսկի: Առաջին վարպետները եղան Սիմոն ձղբեանը, Կարապետ Ափանեանը, վարդաճան ձանգիկեանը եւ ուրիշներ:

\*\*

Գամիրքի հայերի գլխավոր զբաղմունքներից մէկն էլ քարաւանային առեւտուրն էր: Բայց քաղաքային նստակեաց առեւտրից, գոյութիւն ունէր նաեւ փոխադրական տարանցիկ առեւտուր, որը իր վրայ կրում էր միջնադարեան քարաւանային առեւտուրի կնիքը:

Գամիրքում առեւտրի նման ձեւը բխում էր նաեւ նրա աշխարհադրական բնական պայմաններից: Ինչպէս յայտնի է, Գամիրքը երկու ծովերի՝ Սեւ ծովի եւ Միջերկրականի՝ Կիլիկիայի եւ Պոնտոսի միջեւ կազմում է մի տեսակ փակ շրջան, որը հնագոյն ժամանակներից մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը զուրկ էր երկաթուղուց: Ասորեստանեան, խեթական, պարսկական գլխավոր ճանապարհներն այդ դաւառը համարեայ շրջանցում էին: Միջագետքից եկող ճանապարհը անցնում էր Մալաթիայից Սարոնի հովիտով, Գարենտէի, Կիւրիկի հարաւից դէպի Կեսարիա, իսկ Կեսարիայից Սեբաստիա տանող ճանապարհը անցնում էր Եոզղաթ (Պերիա) Եւզոկիա դժով: Միակ խճուղին, որ յետագայում անցնում էր Հալիսի հովիտով՝ Կեսարիայից ուղիղ դէպի Սեբաստիա, ունէր մօտ 145 քիլոմետր երկարութիւն, որտեղից այժմ (1942) անցնում է երկաթուղին: Այսպէս, մինչ համաշխարհային առաջին պատերազմը, Գամիրքի ներքին հաղորդակցութեան համար զրաստային ճանապարհներից եւ արահետներից բացի, յարմար խճուղների գոյութիւն չուներ:

Այնուամենայնիւ, Գամիրքի դաւառը ամբողջութեամբ վերցրած, թէկուզ բնափակ տնտեսութեան պայմաններում, ինքնաբաւ չի եղել եւ նրա առանձին մասերի բնակիչները ստիպուած են եղել, դեռ հնագոյն ժամանակներից, իրենց արտադրանքն ու յաւելեալ մթերքները ուրիշ շրջանների կենսամթերքների ու այլ ապրանքների հետ փոխանակել, իսկ յետագայում՝ վաճառել:

Ապրանքափոխադրութիւնը կատարւում էր մի քանի ձեւերով՝ դաշտային տափարակ վայրերում գլխավորապէս եղան ու դոմէչի սայլերով, գետերի՝ Հալիսի վրայ՝ «մալանայով», Եփրատի եւ Մելաս գետերի վրայ՝ տիկանաւով: Սակայն ամենատարածուածը հանդիսանում էր զրաստային փոխադրութիւնը: Այդ իսկ պատճառով ճանապարհներից զուրկ Գամիրքի լեռնային մասերում քրտերի, աւշարների կողմից նոյնիսկ եզր օգտագործւում էր որպէս բեռնատար կենդանի: Նախքան մեր թուականութեան երկրորդ հարարամեակը, որպէս զրաստ օգտագործուել են էջը, ձին, ջորին, իսկ միջնադարում նաեւ ուղտը:




Նշելու է սակայն մի առաւելութիւն որ Գամիրքում ապրանքափոխադրութիւնը որպէս զբաղմունք կատարւում էր կանոնաւորապէս, համարեայ ամբողջ տարին:

Եթէ մինչեւ 20-րդ դարի սկիզբները փոխադրութեան գլխավոր միջոցը հանդիսանում էր զրաստը՝ ուղտապաններ, ջորեպաններ (գաթբնի)<sup>(1)</sup>, իշապաններ (կալուկնի), ապա յետագայում հանդէս էին եկել նաեւ կառապաններ:

Պատմական փաստերի վկայութեամբ, հին Հայաստանի դաւառներում Գամիրքում 15—16-րդ դարերում բաւականին զարգացած է եղել քարաւանա-


(1) «Ջորեպան» էր կոչւում, բայց փոխադրութիւնը լինում էր ձիերով:

յին առեւտուրը: Առաջաւոր Ասիայի երկրներում մոլեզնած պատերազմների եւ 17-րդ դարի սկիզբներին յատկապէս ջաղալիների շարժման հետեւանքով, հայկական դաւանների եւ նրանցով անցնող քարաւանային առեւտուրը համարեայ դադարում է եւ վերսկսում 17-րդ դարի սկիզբներից: Այս ժամանակ Գամիրքում քարաւանային առեւտուրն սկսողներից առաջինները հանդիսանում են Կիւրիցիներ, որոնց հետեւում են նաեւ Կեմերեկցիները:



Տնային գործածութեան իրեր: 1—5. կամբեղներ՝ ստիճանակամ զարգացմամբ: 6—7. ջուր խմելու ամաններ (6 ջամ, 7 ջուրխմիչ), 8. սապլը, 9. կաթսայ, 10. հարամի, 11 իւրի բղուկ:

Կիւրինցիները ձիերով, իսկ Կեմերեկցիները ուղտերով ապրանք էին փոխադրում Հալեպից Կեսարիա, Կեսարիայից Տրապիզոն, այդ Դրուսա, Ատանա-Մերսին, Ատանայից Հալեպ: Այդ մասին «Կիւրին Յուշ»ը տալիս է հետեւեալ շահեկան տեղեկութիւնները: 1800 թուականներին ամբողջ Անատո-



Տնային գործածութեան ամաններ: 1. գեազիւմ, 2. փայտէ փարչ, 3. սրնազաց  
4. սեհէն կափարիչով, 5. սեհէն ունկաւոր, 6. ապուրի բաս,  
(դարբուս-բաս), 7. խոշափի դոյլ (փարխաջ):



լիայի համար առեւտրական ամենամեծ կեդրոնը հանդիսանում էր Հալէպ քաղաքը, որտեղից Կեսարիա ասորանք փոխադրելու վաճառականութեան դործը ձեռնարկել է կիւրինցին: Մեւ այդ այնպիսի մի ժամանակ, երբ այդ նոյն շրջանի քաղաքացիները, թուրք եւ քուրդ զանազան ցեղերի ասպատակութիւնները վախենալով չէին համարձակուում ճամբորդութիւն անել եւ առեւտրական յարաբերութիւններ ստեղծել ուրիշ վաճառաչահ քաղաքների հետ:

Կիւրինցիների ասորանք փոխադրելը առաջին շրջանում ունէր հետեւեալ պատկերը. քարաւանը 70—80 անձից բաղկացած մի խումբ, 80—100 բեռնատորուած ջորիներով եւ ձիերով ճանապարհ էր ելնում Հալէպից: Երեսուն ընտրեալ եւ վարձուած ղինակիրներ, որպէս պահակախումբ, տասը առաջից, տասը մէջտեղից եւ տասն էլ ետեւից ուղեկցում էին քարաւանին, իսկ բազմաթիւ մեծ ու փոքր վաճառականներ կամ այլ ճամբորդներ, բոլորն էլ քարաւանային խմբում ունէին իրենց յատուկ պարտականութիւնները եւ այդ պարտականութիւնները անխախտ կատարում էին ողջ ճանապարհին:

Մայիս—Օգոստոս ամիսներին քարաւանները սովորաբար իջեւանում էին գուրսը՝ բացօդեայ, յարմար վայրերում, ուր բեռները որպէս պատնէշ շուրջանակի դասաւորում էին, որպէսզի կանխակալ յարձակման վտանգի հնարատորութեան դէպքում կարողանան կազմ ու պատրաստ դիմադրել թշնամուն: Երթեւեկի ասպնջութեան համար նրանք վարում էին այսպէս ասած սիրաչահեւու քաղաքականութիւն: Հրոսպետներին, գիւղապետներին, ցեղապետներին, նոյնիսկ Ձէյթունի հայ մեծամեծներին պարզեւի անուան տակ կաշառք էին տալիս: Ընդհանրապէս իբրեւ նուէր տրւում էր մի շարվարջու, չուխա, պատրաստի արաւ, շապիկի համար մետաքսէ կերպասներ, սուրճ, շաքար, նարկիլէի համար թենպեքի եւայլն<sup>(1)</sup>:

Քարաւանային առեւտուրը իւրայատուկ մի համագործակցութիւն էր, որն ունէր իր ղեկավարը՝ ֆելիվոտէրը կամ ֆելիպտէր: Սա ընդհանրապէս լինում էր ամենահարուստ եւ փորձառու վաճառական եւ միաժամանակ կատարում էր ընդհանուր ծախսարարի պաշտօնը: Քարաւանն ունէր իր ընդհանուր դոյքը եւ ներքին կանոնները: Քարաւանի դոյքը կայանում էր հետեւեալում. — վրան, ասորանքները անձրեւից պաշտպանելու համար ծածկոցներ (ֆաշեր) կերակրի պղնձեայ կաթսայ, իւղաման, մածունի սոպրակ սպիտակից (քիազից) կովի կաշուից ջրաման՝ դալանջ (24 լիդր ջրի համար) եւ այլ մանր իրեր, իսկ անդամներից իւրաքանչիւրն ունէր իր սեփական արան կամ յափնջին՝ դիչերելու համար: Քարաւանի անդամներից իւրաքանչիւրը իր առեւտրական գործառնութիւնների ազատութիւնը պահելով հանդերձ, ճանապարհի ընթացքում կատարում էր իրեն բաժին ընկած պարտականութիւնը:

Գամիրքում մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը քարաւանային առեւտուրը թէեւ շարունակուում էր պահել իր միջնադարեան քարաւանային ձեւը, սակայն որոշ փոփոխութիւնների էր ենթարկուել: Ասորանքափոխադրութիւնը առաջուայ նման հեռուոր քաղաքների հետ չէր կատարուում եւ ոչ էլ առաջուայ նման բազմամարդ էր: Քարաւանային առեւտուրի երկրորդ շրջանում (1900—1904) Կիւրինի ջորեպանների սովորական ճանապարհը գըլխաւորապէս երեք դժի վրայ էր: Կիւրինից Կեսարիա, որը տեւում էր վեց օր, Կիւրինից Սեբաստիա՝ 4 օր, Կիւրինից Մարաշ՝ 7 օր:

Նկատելի էր նաեւ այն, որ վերջին շրջանում ոչ մի առեւտրի ասպարէզն

(1) «Կիւրինի Յուշ», Նիւ Եսրֆ, 1931, Ա. Տարի թիւ 3:



էր նեղացել, այլեւ ուղտերի փոխարէն, կեմերեկցիները եւս, որպէս դրաստ օգտագործում էին ձիեր եւ էջեր: Այլեւս ուղտը մղւում էր յետին պլանի, երբ Բաղդատի երկաթուղազիծը հիմնադրուեցաւ: Միաժամանակ ուղտը շատ թանկ էր եւ Գամիրքի կլիմայական պայմաններում սակաւ դիմացկուն քան ջորին, էջը եւ ձին: Ուղտերով փոխադրութեան վերացման գլխաւոր պատճառը այն էր, որ վերանում էր հեռաւոր վայրերի հետ առեւտուրը, իսկ մօտիկ տեղերի համար ձեռնտու էին մանր դրաստները:

Գամիրքում հեռադնաց ապրանքափոխադրութիւնը, առեւտրի մէջ առաջացած փոփոխութիւնները որոշ չափով կապուած էին նաեւ տեղական արդիւնագործութեան զարգացման եւ դիւղատնտեսութեան որոշ մթերքների ասլրանքայնութեան հետ: 19-րդ դարի վերջերից կառապանները, ջորեպանները, իշապանները դրաղւում էին արդէն ոչ միայն Գամիրքի արհեստագործական ասլրանքների փոխադրութեամբ, այլեւ տեղական մթերքների փոխադրութեամբ եւ վաճառքով: Սրանք հանդէս էին գալիս որպէս առեւտրականներ միայն դիւղատնտեսական մթերքներ վաճառելով, իսկ արդիւնագործական արտադրանքի համար առաջ փոխադրողի դեր էին կատարում, որովհետեւ լաւ էր կազմակերպուած ոչ միայն Կիւրիւնի դօտիւները եւ շալի, Արաբկիրի՝ մանուսայի, Սեբաստիոյ եւ Կեսարիայի գորգի արտադրութիւնը, այլեւ դրանց վաճառման գործը: Օրինակ, Կիւրիւնի ու Արաբկիրի գործատէրերը թուրքիայի զանազան քաղաքներում արդէն ունէին իրենց գործակալները, մեծ մասամբ իրենց իսկ հարազատներից, որոնք զբաղւում էին փոխադրուած ապրանքների ընդունմամբ եւ մեծաքանակ վաճառքով:

## ԳԱՄԻՐՔԻ ՀԱՅԵՐԻ ՆԻԻԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ

### Ա.— ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ

Գամիրքում հայերի բնակելի տները, ըստ դիւղի եւ քաղաքի հասարակական, տնտեսական եւ կենցաղային պայմանների, թէեւ իրարից որոշ տարբերութիւն ունին, բայց մինչեւ 20-րդ դարի սկիզբը պահպանում էին հին հայկական տների ընդհանուր կառուցուածքի, արտաքին ու ներքին դասաւորման եւ կահաւորման որոշ ընդհանրութիւնները: Սակայն սերտօրէն կապուած լինելով տուեալ շրջանի բնակչութեան զբաղմունքի, կենցաղի եւ բնակլիմայական պայմանների հետ, ունէին նաեւ տեղական առանձնայատկութիւններ: Հետեւաբար բնական է, որ Գամիրքի տարբեր շրջանների դիւղական եւ քաղաքային բնակարանները միմիանցից պէտք է տարբերուէին ոչ միայն իրենց ընդհանուր կառուցուածքի, այլ նաեւ օգտագործուած նիւթերի տեսակէտից, տուեալ շրջանի նիւթական հիմքի հնարաւորութիւններից, տեխնիկական միջոցներից եւայլն:

Ըստ տեղադրական եւ զարգացման կենցաղային պայմանների, կառուցուելիք տների տեղը նախադժեշտաց յետոյ բերւում էր շինանիւթը, ապա սկսւում աշխատանքը: Հիմքը փորելու ժամանակ, ըստ սովորութեան, կատարւում էր գոհաբերութիւն, մեծ մասամբ մորթում էին մի աքաղաղ, իսկ որոշ վայրերում հիմքի մէջ ձգւում էին դրամ: Հիմքային մասի համար Գամիրքի բոլոր շրջաններում օգտագործւում էր 3—4 շաբթ լեռքար կամ տեղական բարբառով չիլքար, իսկ պատերի համար Սեբաստիայում, Տիւրիկում,

Կիւրքինում, Կամարակում՝ յարդախառն հողէ աղիւս (քերիիւ) Կեսարիա-  
յում, Արարկիրում, Ակնում՝ քար: Որոշ վայրեր, ինչպէս Կիւրքինը, քարային  
շինանիւթով հարուստ լինելով հանդերձ, յարմար ճանապարհներ չլինելու եւ  
փոխադրութեան դժուարութեան պատճառով, տները շինութեան մէջ օգտա-  
դորձում էր հասարակ աղիւս: Այդ աղիւսի շարուածքը ունէր իր կիրառման  
իւրայատուկ ձեւը: Աղիւսի մի շարք շարում էր ըստ լայնութեան, իսկ նրա  
վրայի շարքը՝ ըստ երկարութեան եւ այսպէս հերթականութեամբ, մինչեւ  
պատի լրիւ աւարտը: Աղիւսի այդպիսի շարուածքը հետեւանքն էր այն բանի,  
որ Կիւրքինի աղիւսը իր ձեւով եւ ծաւալով տարբերում էր միւս շրջանների ա-  
ղիւսից: Կիւրքինում պատրաստում էր երկու տեսակ աղիւս: Մեծ չափով ա-  
ղիւսը կոչւում էր անա (մայր-արմատ) իսկ փոքրը՝ դուգու (ձագ): Փոխանակ  
աղիւսի սովորական շարուածքի, աղիւսի մի շարքը լայնութեան եւ միւսը եր-  
կարութեան շարելու պատի շարուածքում անայի եւ դուգուի տեղերը հերթով  
փոխում էին: Որպէս շաղախ օգտադորձում էր յարդախառն ցեխ, խճաքար,  
իսկ հիւսիս քարային շարուածքում՝ ընդհանրապէս կիրաւազ, որը տեղական  
բարբառով կոչւում էր Խորասան:

Գամիրքում «մայր որմերի» կառուցման մէջ ընդհանրացած էր հակա-  
երկրաշարժային դօտու կիռարումը, օրինակ, պատի շարուածքի իւրաքանչիւր  
70—100 սմ. բարձրութեան վրայ, ներսի եւ դրսի կողմից, դրւում էին առ-  
նուազն 5—7 սմ. հաստութեամբ տաշուած գերաններ, որոնք Արարկիրում  
կոչւում էին արաղա, Հալիսի ներքին հովտում՝ քալիան, Կիւրքինում՝ մար-  
դակ, իսկ դրանց կապերը, որոնք լինում էին ընդհանրապէս կաղնու կամ թթի  
փայտից՝ քննենկ:

«Հայաստանի գիւղական բնակավայրերի նարտարապետութիւնը,» աշ-  
խատութեան մէջ, Ս. Խ. Մնացականեանը իրաւացի կերպով գրում է. «Անց-  
ելում ժողովրդական բնակելի տների հիմնական ձեւերը մեծ մասամբ քե-  
լագրում էին բնակարանի այն կիսարտադրական գործօնով, որ այնքան  
բնորոշ է նախասովետական շրջանի գիւղական բնակելի տան համար: Այդ  
շրջանում բնակելի տունը ընդհանուր առմամբ հանդիսանում էր ոչ միայն  
բնակարան այդ հասկացողութեան նեղ առումով, այլեւ իր մէջ պարունակում  
էր այն բոլոր օժանդակ կառուցութեան, որոնք անբաժնելի էին գիւղացու  
ապրուստի միջոցների պահպանման եւ մշակման համար: Եւ այդ է պատճառը,  
որ ամբողջ բնակարանում, բնակելի մասի հետ, նրա կողքին, ոչ պակաս նշա-  
նակութիւն էր ստանում բնակարանի այն մասը, որտեղ պահուում էին կենդա-  
նիները, մթերքները, այգիներից ստացուած բերքը եւ որտեղ վերամշակուում  
ու օգտագործման էին նախապատրաստուում գիւղատնտեսական արտադրա-  
թեան տուած բարիքները», (Երեւան, 1956, էջ 87):

Քաղաքային վայրերում օտան դոմից անջատուելով, թէեւ բնակելի  
տան կառուցուածքին մէջ ստացել էր հիւրանոցի բնոյթ, այնուամենայնիւ,  
բացի որոշ զարդանկարային նորամուծութիւնից, իր ընդհանուր կառուցուած-  
քով, ներքին դասաւորումով ու կահաւորումով եւ օգտագործման եղանակով  
մնում էր նոյնը: Գամիրքի օտայի հետ իր նմանութեան տեսակէտից հետա-  
քրքրական է Շապին-Գարահիսարի հիւրանոց-օտայի նկարագրութիւնը: Այս  
սրահը, ինչպէս գրում է ճարտարապետ Թ. Թորամանեանը, իր յատկանիշնե-  
րով տարբերում է տան միւս մեծ ու փոքր սենեակներից, եւ առհասարակ  
քառանկիւն է լինում: Դուռը բացում էր մէջտեղից: Դռնից անմիջապէս  
ներս, որոշ լայնութեամբ եւ սրահի երկարութեամբ հաւասար նախադաւթի

նման մի տեղ էր թողնուում . նախադաւթին անմիջապէս յաջորդում էր բուն Հանդիսասրահը՝ մի փոքր բարձր յատակով : Սրահը և նախասրահը բաժնուած էին աղեղնակերպ երկու կամ աւելի համաչափօրէն զետեղուած սիւներով : Նախասրահը, որտեղ նստելու աթոռ կամ բազմոց չէր դրուում եւ որտեղ, աջ ու ձախ կողմերում, յատակից մօտաւորապէս մէկ մեթր բարձրութեամբ, առանձին բազմոցներ էին շինուած, որոնց ծայր մասում եղած պահարաններում պահուում էին սրահի յատուկ սպասները, իսկ վրան նստում էին նուազածուների եւ երգիչների խմբեր : Բուն Հանդիսասրահը դռան դէմ առ դէմ ունէր ձմեռնային մի վառարան, իսկ գիւղական վայրերում վառարանի փոխարէն դառնում էր տան աւանդական օճախը : Վառարանի կամ օճախի երկու կողմից շինուած փայտաշէն բազմոցները (սետիր) ունէին 30—50 սմ . բարձրութիւն : Այդպէս էր կահաւորուում Կեսարիայի սուփան, Արաբկիրի Կեմալտունը, Կիւրինի մեշտունը : Բազմոցի ամբողջ երկարութեամբ փուռում էին խոտով կամ բրդով լեցուած ներքնակներ, որոնց մախաք անունն էին տալիս : Ըստ ունեցուածքի, ներքնակների վրայ փուռում էին թանկագին դորգեր, կամ պարզ կարպետներ, դործուած բազմոցների լայնութեան եւ երկայնութեան չափով, բայց այն հաշուով, որ հորիզոնական լայնութիւնը ծածկելուց յետոյ, մի մասն էլ պէտք է կախուէր մինչեւ սրահի տախտակամածը, բազմոցի տակտակի ճակատը ծածկելու համար<sup>(1)</sup> :

Այսպէս, գլխատունը կամ մեծ տունը (թոնրատուն) պահպանելով հանդերձ իր տեղական անունն ու առանձնայատկութիւնները, արդէն կորցրել էր նախկին բազմազան դործօնների բնոյթը : Օրինակ, միջեւ 19-րդ դարի 90-ական թուականները, Սեբաստիայում եթէ տաններսը (թոնրատուն) կատարում էր եւ հացատան եւ խոհանոցի եւ ննջարանի դեր, ապա 20-րդ դարի սկիզբները կրում է մի շարք փոփոխութիւններ : Հետեւաբար, տաններսը հիմնականում ծառայում էր միայն որպէս ննջարան եւ ընդհանրապէս ապրելու բնակարան : Կիւրինում հեշտունից (ներստուն) բաժանուել էր թոյնուկը (թոնիբը) Տիվրիկում՝ Քալիսանից՝ օջախը (խոհանոցը), Բինկիանում՝ դազանը եւ մուք-վախը, Արաբկիրում՝ Կեմալտունից՝ թոնրատունը :

Կեմերեկի եւ Կիւրինի շրջանում դետնայարկ մասանի փոխարէն կառուցում էին տախտակեայ մի վերնայարկ՝ յատակից մօտ երկու մեթր բարձրութեամբ, որը տեղական բարբառով միւսնեղերէ կամ մասունդարա էր կոչուում : Այստեղ, օրինակ, փուռում էին դուլի սոխը, իսկ սելը եւ ձմերուկը, շարում էին նախօրոք փռած դարմանի վրայ : Ներքեւի մասում, սովորաբար պահում էին թթուների, պանիրի եւ դինու կարասները :

Կիւրինի տները իրենց կառուցուածքային որոշ առանձնայատկութիւններով, եթէ նմանում էին Արաբկիրի տներին, ապա իրենց տնամերձ այգիներով ամբողջ Գամիրքի շրջանում մի եղակի պատկեր ունէին : Որոշ թաղերում տները իրարից այնքան հեռու էին կառուցուած, որ այդ այգաւանի երկարութիւնը մէկ ծայրից միւսը հասնում էր մինչեւ 12 քիլոմեթր :

Կիւրինի բնակելի տան գլխաւոր մասերն էին կազմում՝ մեշտունը (ներստուն), թոյնուկը (թոնրատունը) եւ դուշտունը (դուրստուն), այսինքն՝ մասանը, իսկ բակի մի անկիւնում կթանի կամ դրաստի համար դոմը՝ ախոռ եւ մարագը՝ էրդնոց, վերջապէս Կեսարիայի տների նման, սալայատակուած

(1) Թորոս Թորամանեան. «Նիւթեր հայկական մարտաբալետուքեան», Երևան, 1942, էջ 343—344 :

բացօթեայ բակը : Կիւրիները որպէս յայտնի աշգեկործական շրջան, ունէր երկ-  
յարկանի տներ, չարտախով : Վերնաշարկային մասը կոչուում էր սըֆա : Եթէ  
որջան անհրաժեշտ էր յատկապէս մրդերի չորացման համար, ապա չարտախը  
ծառայում էր որպէս ամառնային սենեակ՝ եազլըլս : Նոյն Կիւրիներում որը Ա-  
բարկիբի նման միաժամանակ ջուլհակութեան գլխաւոր կեդրոններից մէկն  
էր, բնակարանի առանձին մի բաժինը կամ նեշտան մի մասը յատկացուում էր  
նախարին (ժակվարին), այսինքն գործող մեքենային :

Վերնաշարկ ունեցող տները լայն տարածում էին գտել յատկապէս Կիւ-  
րիից մինչեւ Աբարկիբ, ուր դարգացած էր պտղաբուծութիւնը : Ի դէպ Կիւ-  
րիներում սըֆան եւ Աբարկիբում էյվանը՝ ծառայում էին ոչ միայն մրդերի չո-  
րացման համար, այլեւ որպէս մեղուանոց :

Քաղաքներում, ուր մարդիկ զբաղուում էին արհեստներով ու առեւտրով,  
հայկական կենցաղային հին սովորութիւնները հիմնականում պահպանելով  
հանդերձ, առաջացել էին նաեւ նոր պայմաններ, որոնց համապատասխան եւ  
բնակելի տան ներքին դասաւորման եւ կահաւորման մէջ՝ նոր ձեւեր : Քաղա-  
քային բնակիչները աշխատանքից յետոյ ամառնային իրիկունները հանգստա-  
նալու համար, տան կից պարտէզում կամ բակի մի անկիւնում նոյնպէս ստեղ-  
ծել էին որոշ յարմարութիւններ : Օրինակ՝ Կեսարիայում ժամանցի վայրը  
շրջապատուած էր լինում ծաղկի թաղարներով, ընդհանրապէս ջրհորի մօտ մի  
հովտեղ, որը կոչուում էր չիչեկլի (ծաղկանոց) : Կիւրիների տան բակում, ցան-  
կապատի մօտ, կառուցում էին երկու մեթր երկարութեամբ, յատակից մօտ  
40 սմ. բարձրութեամբ եւ մօտ 30—40 սմ. լայնութեամբ քարաշէն մի արկղ,  
որի մէջ ունեան էին ցանում, ուստի եւ կոչուում էր ուսանի սաֆու :

Գամիւրքում, բացի քաղաքներից, հասարակական բազնիք գոյութիւն  
չունէր : Իւրաքանչիւր տնտեսութիւն թէեւ շատ նախնական, բայց լողանքի  
համար իր բնակարանում ստեղծել էր որոշ յարմարութիւն : Գիւղերում լո-  
ղանք էին առնում ընդհանրապէս գոմի իրիք փոսի մօտ, փայտէ մի տաշտի  
մէջ, իսկ քաղաքատիպ մեծ աւաններում, օրինակ՝ Կիւրիներում, քոյնուկի մի  
անկիւնում : Լողանքի համար պատրաստուած էր մի աւազան՝ աւլուխ, որը  
կիսալուսնի ձեւ ունէր, ուցուած գետնից 15—20 սմ. բարձր եւ սպիտակ  
սալաքարերով եզերուած : Ամէն շաբաթ տան անդամները հերթով լողանք էին  
առնում :

Բնակարանի տաքացման սխտեմը բոլոր վայրերում համանման չէր :  
Գիւղերում եթէ թոնրատունը ծառայում էր որպէս ննջարան եւ միաժամանակ  
խոհանոց, ապա քաղաքատիպ մեծ աւաններում եւ քաղաքներում, Տիվրիկում,  
Ակնում, Սեբաստիայում գլխատնից թոնիրը տեղափոխուելով բնակելի տան մի  
առանձին սենեակ, որը թոնրի առկայութեամբ այլեւս խոհանոց չէր, այլ գե-  
շերը ծառայում էր որպէս ննջարան, ցերեկը՝ յատկապէս կանանցի ժամանցի  
փայր : Ուստի եւ գլխատնում ջերմութիւն պահպանելու որպէս միջոց, օգտա-  
յործուում էր ֆուրսին : Քուրսին(1) որպէս տաքացնելու, ջերմութիւն ամփո-

(1) Քուրսի ասքերէն նշանակում է աքոս, ամբիոն, սեզան : Մօտ 40 սմ. բարձրու-  
թեամբ, մէկ մեքր եւ աւելի քառակուսի տարածութեամբ կարճ ստափերով մի սեզան էր, որը  
հայկական գաւառները, նաեւ Գամիւրքի գիւղերում լայն տարածում ունէր : Քուրսու վրայ  
փռուում էր քառակուսի մի վերմակ եւ այժմ մորթից գործուած «վալա» կոչուած կապիտա-  
նիան ծածկոց, որոնք պատրաստուած էին այն հաշուով, որ ֆուրսու վրայ փռուուոց յետոյ,

փելու, պահպանելու միջոց, անցեալում հաւանաբար դործ է ածուել նաեւ Արարիկը եւ Սերաստիայում, սակայն այլեւս դործածութիւնից դուրս դալու, տեղի է տուել ընդհանրապէս թիթեղեայ վառարանին եւ մանղալին, իսկ բուխարիկաւոր հին օջախը, յատկապէս դիւղերում, դեռեւս պահպանուած էր: Յամենայն դէպս, քուրսի միջոցով ջերմութիւն պահպանելն ունէր իր իւրապատուկ կողմերը: Օրինակ Կիւրիւնում քուրսին դրուած էր դեռեւս թոնրի վրայ, բայց այն հացի թոնրից շատ փոքր էր եւ ունէր թաղարի ձեւ, ուստի կոչուած էր քուրսի քոնիք: Այս վերջինի մէջ կրակ չէր վառուած ուղղակի, այլ հացի թոնրում եւ կամ օջախում վառուած կաղնու ածուխի կրակը փոխադրուած էր նրա մէջ:

Լուսաւորման աներն ու միջոցները տարբեր էին միմիանցից: Գիւղական ալրերում բնակելի տների մեծազոյն մասը ցերեկը լուսաւորուած էր երդիկով, քաղաքային վայրերում սովորաբար բակի վրայ նայող լուսամուտներով, իսկ աւաններում փողոցի վրայ, բարձրից բացուած պատուհաններով: Մինչեւ համաշխարհային Ա. պատերազմը, դիւղերը դեռեւս օգտագործուած էր կաւէ ձէթի ճրագը, նաւթի խառնէմ, որոշ անտառամերձ դիւղերում նաեւ մարխի մաշխալը, իսկ քաղաքներում՝ նաւթի լամբարը: Այնուամենայնիւ, դրանցից իւրաքանչիւրի օգտագործման ձեւը, ըստ տուեալ շրջանի տեխնիկական հնարաւորութիւնների եւ կենցաղային պայմանների, իրարից տարբերուած էր:

#### Բ.— ՍՆԴԵՂԷՆԸ ԵՒ ՆՐԱ ՆԻԿԹԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Գամիրքի մթերքների արտադրութեան, վերամշակման, պահպանման, ինչպէս նաեւ սննդի պատրաստման բնագաւառում, հայկական միւս դաւառների հետ որոշակի ընդհանրութիւն ունենալով հանդերձ, ունէր նաեւ իր տեղական առանձնապատկութիւնները: Այս կամ այն շրջանը արտադրում էր նաեւ այնպիսի դիւղատնտեսական մթերքներ, որոնք միւս շրջանների արտադրութեան մէջ նուազ կարեւոր դեր ունէին: Հալիս դեպի վերին եւ ստորին հովտի հայկական դիւղերում, որտեղ գլխաւորապէս զբաղուած էին երկրագործութեամբ եւ օժանոսակ անասնապահութեամբ, օգտագործուող սննդամթերքների մէջ գերակշռուած էին ընդեղէնը, բանջարեղէնը, կաթնեղէնը, մասամբ նաեւ մսեղէնը, իսկ Կիւրիւնից Արարիկի, որտեղ գերազանցապէս զբաղուած էին արհեստով եւ այդեգործութեամբ՝ սննդի մէջ կարեւոր մաս էին կազմում մրդեղէնը, մրդերից պատրաստուած զանազան տեսակի քաղցրաւէնները, ըմպելիքները եւայլն:


Յայտնի է, թէ բնատնտեսութեան պայմաններում դիւղական գերդաստանները իրենց կարիքների համար արտադրում էին անհրաժեշտ եւ դրանցից պատրաստում սննդի պարագաները: Մինչդեռ քաղաքներում, սննդամթերքները ձեռք էին բերուած գնումներով, իսկ մշակում, պատրաստում իրենց ձեռքով կամ երբեմն ուրիշների ձեռքով, նոյնպէս վճարելով:

Գամիրքում, ձմեռը երկար եւ խիստ լինելու հետեւանքով, որոշ վայրե-

չքս ծայրերը հասնին մինչեւ գետին եւ մասամբ էլ աւելնան, սրպէսի մստոգները հնարաւորութիւն ունենան այդ ծայրերը ծնկները քաշել: Անշուշտ, գետինը քարաւ չորս բոլորտիքը փռուած էր լինում խտր, կապքոտ, բագոցներ եւ քիկներու համար մաւր համգստաւտութեամբ: Քուրսին ունէր մաւր իր այլ օգուտները:

րում հունձքից անմիջապէս յետոյ, Օգոստոսի վերջերից սկսւում էր ձմեռուան պաշարի պատրաստումը: Բոլոր շրջանների համար, եթէ ձմեռուայ պաշարի մէջ ընդհանրութիւն էին կազմում ալիւրը, ձաւարը, կորկոտը, փոխինդը, թթունները, ապա որոշ շրջաններում, յատկապէս պատրաստում էին զանազան քաղցրաւէններ, ինչպէս նաեւ մսի պահածոներ (ղաւուրմա, ապուխտ, սու-նուխ եւայլն):

Հիմնական սննդամթերքը՝ ալիւրն էր: Գամիւրքի գիւղերում հացը թխում էին ամէն օր կամ երկու-երեք օրը մէկ անգամ, իսկ Տիւրիկում, Բի-կիանում, Արարկիւրում, Դարենդէում, ինչպէս նաեւ Արդէսը շրջանի հայկա-կան որոշ աւաններում տարեկան երկուսից երեք անգամ, Նոյեմբերից Ապրիլ, Մայիսից Յուլիս, Օգոստոսից Սեպտեմբեր: Սերաստիա քաղաքում հաց էին թխում 7-ից 15 օրը մէկ անգամ, իսկ Կիւրիւնում, Կեսարիայում, Թարասում չարաթը մէկ անգամ:



Հաց Թխելը Գամիւրքի գիւղական ընտանիքում

Համարեայ բոլոր շրջաններում հացը թխում եւ եփում էին թոնիրում: Ձկար ստուը յատկապէս գիւղական վայրերում, որ իր մեծ ու փոքր թոնիրը չունենար: Թոնիրը ծառայում էր ոչ միայն հաց եփելու այլեւ ցերեկուայ եւ երեկոյեան ճաշերի պատրաստման, ջուր տաքացնելու, իսկ ձմռանը՝ բնակա-րանի ջերմացման համար: Քաղաքատիպ մեծ աւաններում, Արարկիւրում, Կիւրիւնում, Տիւրիկում, Տարենդէյում, ինչպէս նաեւ Հալիսի վերին հովտի հայկական որոշ գիւղերում, թէեւ մուտք էր գործել փուռը, սակայն թոնիրը մնում էր ինչպէս որոշ ձեւի հացի, նոյնպէս եւ սննդեղէնի պատրաստման դը-խաւոր միջոց:

Քաղաքների եւ մեծ աւանների իւրաքանչիւր թաղում կային կամ թոնիր ունեցող մասնաւէտ հացթուխներ, որոնք յաճախորդի ալիւրով կամ նրա

պատրաստի խմորով թխում էին հացը, ըստ տեղական ճաշակի: Իւրաքանչիւր շրջան պատրաստում էր զանազան ձեւի հացեր: Այսպէս, Հալիսի վերին հովտի դիւղերում թխում էին հոդլ կամ հոդլա (մէջտեղը ծակ), միակտոր հաց՝ հալ-խա, քուլիչա՝ բազարջաձեւ հաց, որը կոչւում էր նաեւ գոտքոլ, Կիւրունում՝ տաշկեր հաց, Կեմերեկում եւ Թումարզայի շրջանում՝ բոբոջ, Արաբկիրում անիկ: Լաւաշը Պորսանայում կոչւում էր բացուն հաց, կամ դիւրամանի, Կեմերեկում՝ տափակ հաց, Կիւրունում՝ ծակ բացուն հաց, Տիվրիկում՝ քոնիբի հաց, Արաբկիրում՝ քոյնի հաց, Թումարզայի հայ գիւղերում՝ ջրով հաց, իսկ փուռի հացերից Սեբաստիայում յայտնի էին բիդէ հացը, մօտ մէկ մեթր երկարութեամբ, 20 սմ. լայնութեամբ, դաճալիկը՝ տեղական բողոնից մի քիչ փոքր, ինչպէս նաեւ կլիկը, իսկ Կեսարիայում աւմուր եւ ֆրեւչեղան:

Ինչպէս յայտնի է, տնային աշխատանքը ընդհանրապէս, սննդի պատրաստումը մասնաւորապէս, ըստ դարաւոր սովորութեան կատարւում էր կանանց ձեռքով: Գիւղական բազմանդամ ընտանիքներում հարսներին մէկը կէս դիւղերին ելնում էր հացի խմորը պատրաստելու: Կաթսայով (խալիին) օջախի վրայ ջուր տաքացնելուց յետոյ, նա թթխմորը եւ աղը բաց էր անում տաշտում, ուր ալիւրը, դեռ երեկոյեան, մաղուած, շարմաղուած պատրաստ էր արդէն եւ թեւերը սոթսած շաղախում էր խմորը տաշտի երկայնքով մէկ, ապա հունցում, որից յետոյ մատով խաչանշում խմորի վրայ եւ տաշտը սպիտակ փոսոցով (սուրֆա) ծածկելիս, օրհնեղում էր, որպէսզի խմորը թթուի:

Հաց իս,  
Արդար իս,  
Արդար եգայ վաստակ իս,  
Ես քեզ շատ չարչարկեցի,  
Մեղայ քեզ,  
Ժամ կ'երթայ կայ, քեզ եկոյ:

Տան մեծ հարսը առաւօտեան կանուխ վառում էր թոնիրը: Մինչ հարսներին մէկը խմորը դունդ էր անում, շարում առանձին փոքր տաշտի մէջ, կամ յատուկ տախտակի վրայ, մէկ ուրիշը դրանակով կամ օլխադուով գունտը բաց էր անում, իսկ հացթուխը՝ տան տնտեսուհին կամ մեծ հարսը, փարատիչով (փարտիչ) թոնիրը սրբելուց յետոյ, լաւաշի (բացուն հաց) խմորաթերթը «ռափաթի» կամ «ռափաթայի» վրայ տարածած, ձեռքի մի շարժումով կպցնում էր թոնիրի պատին, ուր 3—5 բոպէում եփում-թխում էր հացը: Վերջին շրջանին սկսել էին դործածել քեզնիկը, որ ձեռքի երեսը պաշտպանում էր կրակից եւ ջերմութիւնից:

Գամիրքի տարրեր շրջաններում հաց թխման բոլոր գործողութիւնները կատարւում էին թոնրի շուրջ նստած վիճակում, բացառեալ Կիւրինում, որտեղ այդ գործողութիւնը կատարւում էր կանգնած: Հացթխման այս վերջին եղանակը թոնրի տեղադրման ձեւի հետեւանքն էր: Կիւրինում թոնիրը, թոնրատան (թոյնուկ) մի առանձին անկիւնում, դեանից բարձր, փոքր թմբի մը մէջ թաղուած էր լինում, որի առաջ հացթուխը շատ հեշտութեամբ կարողանում էր ոտքի վրայ հաց եփել:

Ալիւրից յետոյ շատ կարեւոր սննթամթերք էր ձաւարը (բուլղուրը): Իւրաքանչիւր գիւղական տնտեսութիւն աշնան պատրաստում էր ձմեռուայ ձուարի պաշարը: Խաշում էին ցորենը, չորացնելուց յետոյ թեփահանելու



համար ծեծում էին սանդի մէջ, վերստին չորացնում եւ քամուն տալով թեւը հեռացնում, յետոյ աղում երկանքով: Այս աշխատանքը թէեւ հնից ի վեր կանոնաբար իրականացնելու էր համարուել, սակայն վերջին ժամանակներում, արհեստաւորական որոշ վայրերում, Արարկիրում, Կիւրինում մասնակցում էին նաեւ տղամարդիկ: Նշանաւոր էր նաեւ Երկանք աղալը, ձաւար աղալու դործողութիւնը, սովորաբար կիւրի յատուկ:

Մննդամթերքների բնագաւառում ինչպէս Հալիսի ստորոտին, նոյնպէս եւ վերին հովտում, ձաւարից յետոյ մեծ նշանակութիւն ունէին կորկաւը<sup>(1)</sup> եւ փոխինդը: Կորկաւի համար ընդհանրապէս դործ էր անում սպիտակ ցորենը, որը պատրաստում էր նոյն ձաւարի ձեւով, առանց խաշելու, հում վիճակում: Կորկաւը դործածւում էր հարիսայի, քեչկեկի եւ սպասի բնոյթի կերակուրներ եփելու համար:

Ձմեռուայ պաշարի համար պատրաստուած սննդամթերքների մէջ լայն տարածում ունէր նաեւ էրիշտան կամ էրվշտան, այլ խօսքով տեղական մահարոնը, որի համար ցորենի ալիւրից պատրաստում էին պինդ խմոր, դայն բացանում բարակ լաւաշի նման երիզածեւ կտրատում, չորացնում եւ ապա սաջի վրայ կամ փուռի մէջ բովում, աղքնցում: Դա կոչւում էր խազղուճ էրիշտա, որը դործածւում էր յատկապէս փլաւի եւ էրիշտա ապուրի համար:

Գամիրքահայերը եւս ծանօթ էին ոչ միայն ցորենի պարզ վերամշակումից ստացուած սննդամթերքներին, այլ նաեւ ցորենից ստացուող նշախին անձրիկը: Նշա կամ Գիշտատէ ստանալու համար, յատկապէս սպիտակ ցորենը լցնում էին տակաւի կամ պղինձէ մի մեծ կաթսայի մէջ եւ վրան աւելացնելով անհրաժեշտ քանակի ջուր, ամանը 10—15 օր դրում էր արեւի դիմաց, ցորենը թթուեցնելու համար: Ապա թթուած հատիկները ձեռքով կամ ոտքով ճմլում էին, կեղեւը հանում, մնացած հիւթը պաղաջրելուց յետոյ թողնում էր որ մղուի, եւ մնացած սպիտակ խիւսը սաւանի վրայ չորացնելով ստացւում էր իւրատեսակ օսլա՝ բարակ ցիւր: Այն օգտագործւում էր յատկապէս քաղցրեղէն ճաշեր եւ այլ համադամներ պատրաստելու համար: Օրինակ, շաքարի օշարակով եփուած նիշալիւրը կեմերեկում կոչւում էր Գաւաւա, Արարկիրում՝ բայուգա, Կիւրինում՝ հաքաւա, իսկ նշալիւրը իւղով բովելուց յետոյ շաքարի թանձր օշարակով կամ ոռւպով (դոշապ) եւ կամ մեղրով եփածը կեմերեկում կոչւում էր Գաւաւա, Արարկիրում՝ հաքաւա, Կիւրինում՝ հաքիթ: Այն շրջանները, որոնք հարուստ էին պտուղով, Կիւրինից Արարկիր, նիշախի հետ օգտագործում էին թութի հիւթը՝ պաստեղի, ոռճիկի շարոց քիւմմէի պատրաստման համար: Անուանի էր լինում նաեւ հալիւն:

Ձմեռուայ պաշարի մէջ կարեւոր տեղ էին գրաւում նաեւ կաթնամթերքները: Գամիրքի բոլոր մասերում լայն տարածում ունէր բղուղի պանիրը, տիկի պանիրը, ազջուր կամ սալամուր պանիրը, տիկի պանիրը, չոքեկեկը, պաստանը, բարխանան, տեղական բարբառով դոնա մածուց կամ բոնած մածուց:

Գիւղական վայրերում, կարեւոր տեղ է գրաւում նաեւ բանջարեղէնը: Դրանց մի մասը բնական վիճակում օգտագործուելու համար պահում էր գեանափոր հորերում եւ մարաղներում, մի մասն էլ չորացուած վիճակում:

(1) Կորկաւը կեմերեկում կոչւում էր ապուրցու, Տիվրիկում, Թումարգայում եւ գիւղբում կորկոտ, Արարկիրում, Կիւրինում՝ կանդա (քրտերէն ցորեն), Կիւրինում ծեծած ցորեն, Կեօարխայում՝ հարաւա, Բուրքերէն բառ, որ Թշանակում է երկուսի բաժանուած:

Օրինակ, բողկը, շողգամը, դեանախնձորը (բաթաթէս), ճակնդեղը, ստեպ-  
դինը սլահուում էին հորերում: Սոխի, սխտորի հիւսկները կախովի էին: Սեխը,  
ձմերուկը եւ դգումը սլահուում էին չոր յարդի վրայ շարած վիճակում:

Բանջարեղէնից՝ սմբուկը, լոլիկը, դգումը, լուբիան, մանրելով չո-  
րացնում էին, ինչպէս նաեւ բանջարը, ալուկը, մուրիքը, փրփրումը, բո-  
ջախը, քուշմատը, ծակմատուկը, քրքնջուկը: Չմեռուայ սլահարներից հարկ  
է յիշել նաեւ քուրչիները:

Իւրաքանչիւր շրջան, ըստ իր բնակլիմայական սլահարների եւ կենցա-  
ղային սովորութիւնների, պատրաստում էր իր ձմեռնային սլահարը: Սարոսի  
հովտում, յատկապէս Կիւրինից Դարենտէ, մինչեւ Ակն ու Արարկիւր վերոյիշ-  
եալ սննդամթերքներին ծանօթ լինելով հանդերձ իրենց ձմեռուան սլահարի  
մէջ գլխաւոր տեղը յատկացնում էին մրդեղէններին: Արարկիւրում մեծ տեղ էր  
գրաւում թութը, որից պատրաստում էին պաստեղ, ուսւլ, ուշալ, փոխինդ,  
չոր թութ, ինչպէս նաեւ օղիի զանազան տեսակներ՝ եամսպարիա, մաստիկա,  
սպիտակ, կարմիր, կանանչ, վարդի եւ այլ գոյներով, իսկ սալորից՝ սալվոր-  
ջուր, ռեչալ, քքուլ, քացախ, քքու-քուրչի, եւյալն: Կիւրինում թթից  
պատրաստում էին կիւնքալը (արեւի մեղր), չալմա-բեքմէգ, պաստեղ, պաս-  
տեղի մսղա, քեմէ, իրժ-մեքմեք, սուգուխ, (ուռուճիկ) եւ չոր թութ,  
ինձորից, տանձից՝ դախեր, սալորից, ծիրանից՝ չրեր, կեռասից մի քանի  
տեսակ սլահարներ եւ փերվերդներ, բալից՝ մի տեսակ օշարակ (չորուսկ) որը  
չատ յարդի էր(1):

(1) Վերոյիշեալ սննդամթերքի անուանների գգալի մասը հայերէն է, իսկ դրանց տեր-  
մինների այլաբանութիւնը արդիւնքն է ոչ միայն սննդամթերքների պատրաստման ձեւերի, այ-  
լեւ տեղի օտար բարբառների ազդեցութեան կամ կուլտուրական փոխառութեան: Օրինակ՝  
պաստեղի մաղա անուանումը առաջացել է պաստեղը մոզայի մտան եռանկիւնածու ծախիւու  
հանգամանքից, որի մէջ դնում էին ընկոյզի միջուկ, մուշ, երբեմն փայտացած ծիրանի կո-  
րիգ:

Կիւրինում ճշայով քանձր եփուած ուսւլը (զոշար), չորացած եւ փառակուսի կամ ե-  
ռանկիւնածու կտրուած, կոչում է քեմէ, իսկ Արարկիւրի հայ գիւղերում շոշի: Կիւրինի հա-  
յերին դեռ շատ հնից ծանօթ է եղել բարակ նշապաստեղը, իսկ քեմէն հասաճարար քուրքե-  
րէնից փոխառութիւն է, ուստի եւ այդ տերմինը նոյնութեամբ պահպանուել է Կիւրինի բար-  
բառում: Սուջուխ՝ քուրքերէն բառացի նշանակում է, մէջը լեցուն, այսինքն՝ երշիկ, բայց-  
այստեղ այն տարբերութեամբ, որ եթէ սուջուխ տերմինով ընդհանրապէս հասկացում է մէջը  
մտով լեցուն, ապա այս դէպքում մտի փոխարէն ընկոյզի, մուշի միջուկ կամ ծիրանի անուշ  
կուս է շարուած, իսկ երեսը քուրքի, խաղողի փայտի հիւր է փառուած եւ չորացուած: Արար-  
կիւրցիները նոյն անուշեղէնը բուռնիկ են անուանում, իսկ Կիւրիցիները՝ ուռուճիկ, որը յե-  
տագային մոռացուելով, գործ է ածում սուճուխ տերմինը, յատկապէս Կեսաբիայի շրջա-  
նում:

Իւրաքանչիւր շրջան չորացուած պտուղի համար ունէր իր առանձին անունը՝ Արարկի-  
րում կոչում էր չոր, այլ շրջաններում՝ չեր: Հալիսի վերին եւ ստորին հովտում, ինչպէս  
նաեւ Կիւրինում, յատկապէս տանձի, խնձորի չիրը կոչում էր «գախ»: Այս անունը գուցէ  
այդ չրի պատրաստման ձեւի տարբերութեան հետեւանքն է, քանի որ խնձորի, տանձի շախը  
նախքան չորացնելը, քեքեւ խաչում էին, ուստի եւ այդ բառը արարքերէնից են աւել, որովհե-  
տեւ շախ՝ արարքերէն նշանակում է չորացած պատուղ: Ինչպէս Գամիրքի որոշ վայրերի հա-  
յերից բացի, քուրքերը եւս գործածում են շախ բառը: Գամիրքի բարբառում ծիրանի, սալորի,

Պաստեղը, ինչպէս ասուեց, պատրաստուում էր թթից, նաեւ ծիրանից : Թուֆի երրորդ անգամ թափ տուածը ճմլում էին, շարմաղայով անց կացնում եւ այդ թանձր հեղուկը նիշայով եփում, ապա կէս սանդղիմեթր հաստութեամբ սպլտակ սաւանի վրայ հաւասար չափով տարածում, արեւի տակ չորացնելով ստացւում էր պաստեղը : Արաբկիրում այդ նոյն խիւսը մինչեւ չորացնելը, նաեւ նշաղարդում էին, իսկ Կիւրինում, նշենի չլինելուն պատճառով, նուշի փոխարէն պաստեղի մէջ դնում էին ծիրանի մաքրած քաղցր կորիզը, թէեւ պէտք է ասել որ Արեւմտեան Հայաստանում քաղցրակորիզ ծիրանին ընդհանրապէս լայն տարածում չէր դտել :

Ձմեռուայ պաշարի մէջ որոշ տեղ էր դրուում նաեւ մսեղէնը՝ դաւուրման : Գիւղական վայրերում աշնան սկզբից, մտացուի համար պարարտացնում էին մի դառ (դախ, ծեր) եղ կամ ստէրջ կով : Դեկտեմբերի կէսերին մորթում : Քաղաքատիւ մեծ աւաններում եւ քաղաքների արհեստ-առեւտրական շրջանակներում զաւուրմայի համար սովորաբար յարդի էր ոչխարի միսը : Ղաւուրմայի համար ոչխարի միսը մանրում, աղելուց յետոյ իր իւղով եփում, լեցնում են բլուկների կամ թէ յատուկ լայն եւ որոշ խորութեամբ պղնձէ կլաթեկուած ամանների մէջ, թողնում են որ սառչի, որպէս հնից եկող սովորութիւն, մէջտեղից մի թոկ անցկացրած կախում էին մառանի առաստաղից :

Ձմռաննք, որ մսեղէնը եթէ գիւղական վայրերում միւս աննդամթերքներից համեմատաբար նուազ էր օգտագործւում, ապա քաղաքային եւ գիւղաքաղաքների բնակչութեան աննդի մէջ զգալի տեղ էր դրուում ոչ միայն ամուսն, այլեւ տարուայ միւս եղանակներին : Սերաստիայում, Կիւրինում, Կեմերեկում եւ մեծ աւաններում լիւլէֆէպապից, շաքարի խորովածից բացի, լայն տարածում ունէին փուռի կամ թոնի մէջ ուլի, դառան, ոչխարի ամսովջական խորովածները, ապա չոպանքեապապը եւայլն :

Իւրաքանչիւր շրջան ըստ իր աճման եւ զարգացման աստիճանների եւ տարուայ եղանակի, պատրաստում էր աւելի քան երեք տասնեակ ընդհանուր ճաշեր, որոնք ծանօթ են հայկական միւս գաւառներում : Օրինակ՝ բուլղուր, փիլաւ, էրշտա, փիլաւ, բրնձափիլաւ, քանապուր, քարխանա, քանիւ սպաս, կաքնապուր, ոսպապուր, խալիժ, բայլաքուր, բանջարապուր, չիրապուր, ճըլպիք կամ ճըլպուր, Խահնի, խաշ, մուսպար, քալամոն, քարեմազ (կոլեմաստ), մախոխ, դալլէ, բորանի, տակապուր, քեշկեկ, սարմա, տալմա, հաղապուր, խոշապ, որոնք եթէ պատրաստուում էին հասարակ օրերում, ապա մանքը, դափամա, քովթա, մէջով քովթա, չիֆ քովթա, հերիսա, բրնձով կաքնապուր, հաւկիթով էրիշտա փիլաւ, միսլամա կամ միսլաւ միշի, ինչպէս նաեւ փախլալա, սառը-բուրմա, քեղատէփ եւայլն, յատուկ էին տօնական օրերի համար :

Արաբկիրի եւ Կիւրինի շրջաններում ապուր տերմինով վերջացած բառը՝ բլղուր ապուր, բրինձ ապուր, նշանակում է բրինձէ, բլղուրէ, փիլաւ-կերակուր, մինչդեռ Հալիս գետի հովտում ապուր նշանակում էր ջրալի շորվա, օրինակ, թանապուր, ոսպապուր :

մարմնկատի համար գործ էր անում ըռաջել (ոնջիլ) տերմինը, իսկ խժ-մերմենտը իւրայատուկ էր Կիրիքի տեղակամ լեզուիմ : Դա պատահական չէ, քանի որ նրա պատրաստումը ծիրանի անուշ կարիզով, բնկոյգի ծեծած միջուկը քուրքի ուսպի մէջ եփելը եւ գնդակի մեղմ չորացնելը յատուկ էր բնիկաբնակ Սարասի հովտում եւ ի մասնաւորի Կիրիքում, որը մրգերի առատ երկիր էր դեռ վաղ անցեալում :

Բլղուր փելաւի համար կամ ինչպէս Կիւրինում ասում էին բլղուր-ապուրի համար նախ ձաւարը իւղով քիչ բովում, ապա համապատասխան քանակութեամբ ջրով եռացնում, բոված ձաւարը լցնում էին այդ եռացած ջրի մէջ եւ եփում, մինչեւ ջուրը քաշուիլը, որից յետոյ կաթսան վերցնում էին կրակից, թողնում, որ մի քիչ հանգչի: Այս ձեւով պատրաստուած բլղուր փելաւը կոչւում էր չոքանիլաւ: Կար նաեւ պատրաստման մի ուրիշ հասարակ ձեւ, ջուրը նախ եռացնում, աղը գցում, ապա ձաւարը լցնում եւ եփելուց յետոյ կրակից վերցնելով վրան սոխառած էին անում: Նոյն ձեւով պատրաստում էին նաեւ բրինձի եւ էրիչտա փելաւները, որոնք Կիւրինում կոչւում էին բրինձապուր, էրիչտապուր:

Թանապուրը, քարխաման եւ քանեսպաւը յատկապէս Գամիրքահայ գիւղացիներին սովորական ճաշերն էին: Թանապուրը եթէ համեմատաբար շոգ եղանակները կերակուր էր, ապա թարխանան եւ թանեսպաւը՝ ձմրան: Թանը օգտագործւում էր թանապուրի, իսկ Կիւրինում ինչպէս ասում էր ծեծած ցոքեմով շորվաշի համար: Թարխանան Կիւրինում պատրաստւում էր միայն շորթանով (որովհետեւ թանքամ բռնելու սովորութիւնը չունէին), մէջը դաւուրմա աւելացնում, որը տեղական բարբառով կոչւում էր փեսաիկանով շորվա: Մեծ տարածում ունէին նաեւ մալեգապուրն ու ոսպապուրը օսպով շորվան, չիրապուրը, քաշկեկը, եւ հերիսան, ջրի վրան, եղուրը, մանթին: Մասին միջուկով մանթըն՝ Կիւրինում կոչւում էր լիք-մանթը:

Գամիրքում յայտնի էր նաեւ պուլղուրից եւ ծեծուած մսից պատրաստուած քէօլթէն, որը իւրաքանչիւր շրջանում իր ձեւերից եւ ծաւալից ելնելով կոչւում էր տարբեր անուններով: Սեբաստիայում կոչւում էր մըրիկ քէօլթէ, որը հաւանաբար առաջացել է մանրիկ, միրիկ, մըրիկ, բառերի տարնմանութիւնից: Իսկ Կիւրուեում նոյնը անուանւում էր անեմ-քէօլթէ կամ փիսիկ քէօլթէ, որը հաւանաբար կապւում էր Կիւրինցիների մի մասի Պարսկաստանի հայկական գաւառներից գաղթելու հանգամանքի հետ: Կար նաեւ քէօլթէի մի ուրիշ տեսակը, որը փոխանակ ձաւարը ծեծած մսի հետ շաղախելու, ձաւարը շաղախում էին առանձին, իսկ ծեծած, համեմուած միսը ձաւարի մածուկից շինուած դնդերի մէջ լցնելով եփում մսի ջրով: Այդ պատճառով էլ կոչւում էր մէջով քէօֆթա: Պահքի օրերին առանց միսի եւ կենդանական իւղի, բուսական իւղով պատրաստուած մէջով քէօֆթան Արարիկիորում կոչւում էր պահուց քէօֆթա: Կիւրինում պատրաստում էին նաեւ մի տեսակ քէօֆթա, առանց մսի եւ առանց եփ հանելու, որը այդ իսկ պատճառով կոչւում էր չիք-քէօֆթա, որի համար ընդհանրապէս օգտագործւում էր խաշած լոբի, սիսեռ, ոսպ եւ տաք ջրի մէջ թրջուած ձաւար, ինչպէս նաեւ համեմունք: Շատ ընդհանրացած էր նաեւ Կիւրինում պիշին, իւղի մէջ եփուած խմորեղէնը:

\*\*\*

Գամիրքահայերի տարազի քննութիւնը ցոյց է տալիս, որ նրա ձեւը տուեալ ժամանակաշրջանում Արեւմտեան Հայաստանի միւս գաւառների տարազի հետ որոշակի ընդհանրութիւններ ունենալով հանդերձ, ներկայացնում էր նաեւ տեղական որոշ առանձնայատկութիւններ:

Գիւղը եւ քաղաքը գտնուելով ընկերային տնտեսական տարբեր պայմաններում, բնական է, որ բնակիչների տարազը իրարից պէտք է տարբերուէր՝ սակայն տարազի ձեւի մէջ հիմնական տարբերութիւնը կայանում էր

կանանց եւ տղամարդկանց, երիտասարդների եւ հասակաւորների հազուստի մէջ, ինչպէս սերտօրէն կապուում էր տուեալ շրջանի տեխնիկական հնարաւորութիւններից, հումքային նիւթերից, բնակչութեան աւանդական սովորութիւններից եւ բնակլիմայական պայմաններից :

Հալիսի վերին հովտի, յատկապէս Սերաստիոյ եւ շրջակայքի համարեայ բոլոր հայ դիւղացիները, շատ չնչին տարբերութեամբ, միատեսակ էին հազնուում : Այդ շրջանի տարեց կանայք հազնուում էին ամբողջ հասակով մէկ շրջադրեաստ, գլխին տափակ գտակի վրայից կապուում էին մուգ գոյնի, ոչ նախազարդ, մի հասարակ ափուռ (եագմա), ոտքերին՝ արեխի նման սեւ կաշուէ մէջ : Երիտասարդ հարսներն ու աղջիկները հազնուում էին պնմաւոր, այսինքն՝ փեշաւոր էմքարի, որի ետեւի փէշը տարածուում էր մէջքից մինչեւ սրունքները, առջեւի երկու փէշերը միանալով որովայնի վրայ, ծածկուում էին գոգնոցով, էնթարիի տակից ծնկները, հազնուում էին հաստ կտակէ գունաւոր շապիկ եւ կրծքին մի կիռի «իւլիկ» (կրծկալ), որը իւլիկի (բաճկոնակի) եզրերին միացած հասնուում էր մինչեւ մէջքը : Գլխին կապուում էին ափուռի դեղին մի փլազարդ ափուռ եագմա, որը ճակատի կողմից միանում էր գլխանոցի պոպոզին, ծայրերը պաշլիսի երկու թեւերի նման, դէպի ետ նետուում : Ծամերի հիւսկերը խաիւր շինած, թելերով խնամքով բաժանուած, տարածուում էին ուսերի վրայ, իսկ ծամերի խաիւր երկու կողմերից, մէկական ուլունքազարդ շախպաղիների փնջերը ծեփծեփուումով հասնուում էին մինչեւ մէջքը :

Գամիւրքի համարեայ բոլոր շրջանների դիւղերում հարսների եւ ընդհանրապէս երիտասարդ կանանց հազուստը, շատ չնչին տարբերութեամբ համանման էր : Որպէս վերնագրեաստ հազնուում էին էնթարի կամ զպուն երեք փէշաւոր, թեւերը երկար թեզանիքներով : Զպունի վրայից կրում էին կարմիր կամ կապոյտ կերպասից ասեղնադործուած մի սալթա, որի առջեւի երկու եզրերին, ըստ տեղական ճաշակի, կոճակներ էին շարուում, մէջքին կապած էին Կիւրիների բրդէ շալ, իսկ սրա վրայից արծաթ դօտի : Վերջինի տակից կապուում էին աշխազարդ ալ-կարմիր գոգնոցը, հազնուում դունտուրայ (կիսակօշիկ) :

Այս տեսակէտից հետաքրքիր են այն տեղեկութիւնները, որ թողել է Գորեգին Սրեանձտեանցը 19-րդ դարի 70-ական թուականներին Արարիկի կատարած իր այցելութեան առիթով : Տեղացիների հազուստի մասին նա գրում է. «Բնակիչները ընդհանրապէս պճղաւոր հազուստ (զպուն) կը հազնեն, նորագետ քիչ կայ, եւ կանայք սաւանով կը ծածկուեն, բայց իրենց ներքին պերճանքն, զարդն ու ոսկին աւելի ճոխ է»<sup>(1)</sup> : Ուստի եւ պճղաւոր զպունը, այսինքն էնթարին հնից է վեր լայն գործածութեան մէջ էր ինչպէս Արարիկիում, նոյնպէս եւ Տիւրիկում, Ակնում, Կիւրիում, Կեմերեկում, Կեսարիայի շրջանի հայկական դիւղերում, կանանց եւ տղամարդկանց կողմից : Այս ամէնը հաստատուում են, թէ փէշաւոր էմքարին, այլ խօսքով՝ պնմաւոր պարեգօտը հայերի տարազի հիմնական մասերից մէկն է հանդիսացել դեռեւս շատ հին ժամանակներից սկսած :

Այնուամենայնիւ, պէտք է նշել, թէ կանանց հազուստի մէջ 1908 թուի սահմանադրութիւնից յետոյ, յատկապէս քաղաքային վայրերում, Արարիկում, Կիւրիում, իսկ աւելի կար Սերաստիայում եւ Կեսարիայում, էմքարին սկսել էր տեղի տալ ֆոք փոթաւոր մի շրջադրեաստ, որը տեղական բարբառով ընդհանուր առմամբ կոչուում էր ֆիստան :

(1) Գ. Սրեանձտեանց, Թորոս Աղբար, մաս 1, Կ. Պոլիս, 1879, էջ 277 :



Չափահաս աղջկայ տարազը  
Հալիս գետի վերին հովտի գիւղերում:



Կեմերեկի հայ կնոջ տարազը

Հալիսի վերին հովտի չափահաս տղամարդիկ, յատկապէս մեծ աւաններում եւ Սեբաստիայում շալուարի փոխարէն հագնում էին չպղա, կամ ինչպէս իրենք էին կոչում լազի գվղա, որի սրունքները շատ նեղ էին լինում եւ ետեւի մասը՝ շատ լայն: Չվղայի ետեւի մասը հաւաքուելով կազմում էր դմակ: Մէջքին փաթաթում էին 3—4 մեթր երկարութեամբ մի բրդէ դօտի եւ վրան էլ կապում մի սերաթլիկ: Շապիկները վրայից հագնում էին երփներանդ մի դրսաշապիկ (երբեմն չթէ), իսկ որպէս վերնագլխոտ՝ ասեղնադործուած որսորդի բաճկոնակ: Որպէս գլխարկ, յատկապէս մինչեւ 1908 թ. սահմանադրութիւնը կրում էին կամ ոչ շատ բարձր թաղիքէ կոնաձեւ քոլոզ, որի շուրջը տարէցները փաթաթում էին մի ոլորուն սպարոշ, իսկ աւելի երիտասարդները՝ մետաքսէ սեւ ծոպաւոր փուշի, ծայրը թողնելով որպէս մի պոչ:

Մոռնալու չէ նաեւ, որ տարազը ոչ միանգամից, աստիճանաբար փոփոխութեան էր ենթարկւում: Օրինակ, էնթարիի փէշերը հետզհետէ կրճատուելով ստացել էր վերնաշապիկի ձեւ եւ որպէս այդպիսին, տղամարդկանց հագուստի մէկ հիմնական տեղը դրաւել: Գամիրքի բոլոր շրջաններում, բնակչութեան բոլոր խաւերի մէջ միեւնոյն ձեւի շալվար չէր գործածւում: Սեբաստիայում, Կիւրինում, Արաբկիրում յատկապէս մսագործները եւ կառապանները, ինչպէս ասուեց, հագնում էին շուխայի կտորից նեղ շալվար՝ գվղա





Կիրիլոսի արհեստաւոր առեւտրական վարպետի (աղա) տարազը (19-րդ դարի 50-ական թուականներ): Նկարում Մահտեսի Աւետիք աղա Միմասեանը:



Տիկին Մարիամ Ա. Միմասեան  
«Հանի Խաթուն»,  
1820—1898, իր տան մէջ:

Կամ ինչպէս Սերաստիայի շրջանում կոչուում էր լալիզ-զվիզ, իսկ անցեալում Կեսարիայից Կիւրին ընկած համեմատաբար տաք վայրերում: Յատկապէս արհեստաւորները հազնում էին լայն աշխով (ձագ) Կիրիլեան շալվարը, որը յետագայում արհեստներէ եւ առեւտրի զարգացման հետ տեղի էր տուել թորմագայական շալվարին:

Հին ժամանակներում, կանայք եւ տղամարդիկ էնթարիի վրայից հագնում էին կարմիր կամ կապույտ կերպասից բաճկոնակի նման կարճ մի հագուստ, որ Գամիւրքի համարեայ բոլոր շրջաններում հիմնականում համանման լինելով, կոչուում էր տարբեր ձեւով: Կիւրինում ան կոչուում էր կէյմէ, Տիւրիկում, Կեմերեկում եւ Կեսարիայում՝ սալթա, Ակնում՝ հերմանէ:

Վ. Հացունին հայկական տարազի կրած փոփոխութիւնների մասին խօսելով իր աշխատութեան առաջարկում գրում է. «Զգեստին յեղաշրջութիւնք արտաքին ազդեցութեան արդիւնք էին, որոնց ամենէն աւելի պիտ ենթարկուէր հայ ազնուական դասը, որ քաղաքականօրէն սերտագին յարաբերու-



թեան մէջ կը գտնուէր օտարաց հետ: Համեմատաբար նուազ պիտի փոփոխէր իւր ձեւը հայ ուսումնականը<sup>(1)</sup>:

Չմերժելով արտաքին ազդեցութիւնները դերը յատկապէս իշխող դասի տարազի վրայ, ինչպէս ճիշդ նկատել է Հացոունին, մենք հակամէտ ենք շեշտը դնելու տարազի փոփոխութեան ընկերա-տնտեսական ազդակները, զարգացման կենցաղային պայմանների փոփոխութեան վրայ: Չնայած հոռոմէական, պարսկական, բիւզանդական, արաբական եւ վերջապէս թրքական դարաւոր տիրապետութիւններին, հենց մեզ զբաղեցնող Գամիրքի դիւզերում, բնատրու-տեսութեան պայմաններում, մինչեւ 19-րդ դարի վերջերը տարազը հին ձեւը իր հիմնական գծերով մնում էր դրեթէ անփոփոխ: Միւս կողմից թուրքիայում իշխանութեան դուրս կանգնած հողատէր կալուածատէրերի շահերին թերեւս ուղղակի չէին հակասում ոչ նիւթական մշակոյթի հին ձեւերը եւ ոչ էլ նրա ըստ դաւառների մասնատուածութիւնը: Տեղական «մանուֆակտուրան» էլ իր միջոցներով հազիւ էր կարողանում սպասարկել ներքին շուկայի պահանջներին:

20-րդ դարի սկիզբում, երբ թուրքիայում առեւտրական քաղքենիութիւնը տնտեսական եւ հասարակական-քաղաքական կեանքում ցոյց է տալիս իր ուժն ու ազդեցութիւնը, դրամատիրական արտադրանքը իր ոլորտին մէջ առնում նաեւ դիւզական շուկան, մասամբ փոխում էր և դիւզական բնակչու-թեան, առաջին հերթին, տղամարդկանց տարազը: Թուրքիայի քաղքենիութիւնը, որպէս եւրոպական արտադրութեան առեւտրական միջնորդ, իր սպառման շուկան լայնացնելու համար նորամուծութիւնների էր հետեւում, ձգտում նաեւ տարազի եւրոպականացման: Սակայն սուլթանական թուրքիոյ յոռի պայմաններում այդ արագ դուրս գալու դործ չէր: Նոյնիսկ հայ բնակչութիւնը, որ անհամեմատ ազատ էր կրօնական աւանդական խիստ կապանքները, քան թուրք եւ քուրդ բնակիչը, դժուար էր գիջում իր հին պատկերա-կանը, իր ազգայինը:

Այսպիսով, տարազի դանազան մասերի փոփոխութիւնը, եթէ ընդհանրապէս արդիւնք էր առեւտրական յարաբերութիւնների զարգացման հետեւանքով մշակոյթ-կենցաղային պայմանների փոփոխութեան, ապա յատկապէս Արեւմտեան Հայաստանի դաւառներում, ինչպէս եւ Գամիրքում, հայկա-կան տարազի ազգային որոշ յատկանիշների կորուստը հետեւանք էր նաեւ թուրքական բնատիրութեան ազգային քաղաքականութեան: Օսմանեան տէրութեան հպատակ ոչ մահմետական ժողովուրդներին՝ հրեաներին, յոյներին, նաեւ հայերին ճնշելու, ստորնացնելու, մահմետականից տարբերելու համար արդիւնք էին փակելը, եւ բաց գոյնի հագուստ հագնիլը: Մինչեւ 20-րդ դարի սկիզբները, ընդհանրապէս թուրքերը կրում էին սպիտակ եւ աւելի թաւ փաթ-թոց, իսկ հայերը դունաւոր եւ չափաւոր. այդ միոցով առհասարակ դանա-զանում էին հայն ու թուրքը: Մինչդեռ 1908 թուին Օսմանեան սահմանադրութեան, այսպէս ասած, «ժողովուրդների հաւասարութեան» ժամանակ, քաղաքական նպատակներով, թուրքական տիրապետութեան տակ գտնուող բոլոր ժողովուրդներին, նրանց թւում եւ հայ տղամարդկանց պարտադրում էր ազգային տարազի թեկուզ տեղական առանձնապատկութիւնների հիմնական վերացումը:

(1) Վ. Հացունի. Վ. Վարդան, «Պատմութիւն հին հայ տարազի», վեմետիկ 1924, էջ 16:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԳԱՄԻՐՔՈՒՄ

Ա.— ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ, ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՁԵՒԸ ԵՒ ԱՅԼ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայկական ընտանիքը Հայաստանի երկու հատուածներում՝ արեւելա-հայերի եւ արեւմտահայերի մէջ մի ընդհանրութիւն ունենալով հանդերձ, իր նիստ ու կացով եւ սովորութիւններով ունի որոշ առանձնայատկութիւններ: Այդ վերաբերում է նաեւ գամիրքահայերի ընտանեկան կազմին: Եւ դա բնական է, քանի որ այդ երկու հատուածները իրարից շատ հեռու լինելուց բացի, դարեր շարունակ գտնուել են եւ քաղաքական եւ ընկերային բաւականին տարբեր պայմաններում:

Քաղաքային հասարակութեան մէջ, եթէ տնտեսական միաւոր արհեստաւորական փոքր ընտանիքն էր հանդիսանում, ապա դիւղերում առաւելապէս կազմում էր նահապետական բազմանդամ ընտանիքը: Վերջինս մինչեւ 19րդ դարի երկրորդ կէսի սկզբները, յատկապէս երկրագործութեամբ զբաղուող շրջաններում, ընդհանրութիւն էր կազմում այնքան ժամանակ, քանի դեռ թուրքական լծի տակ գտնուող Արեւմտեան Հայաստանի դաւառներում գոյութիւն ունէր հողօգտագործման՝ Հագգը-գարարի նախնական ձեւը<sup>(1)</sup>: Գիւղական համայնքի բնակչութիւնը համայնքային հողից մշակում էր այնքան տարածութիւն, որքան հնարաւորութիւն եւ միջոցներ ունէր, եւ մշակուած հողը պահում էր իբրեւ հագգը-գարարով տրուած իրաւունք: Ուստի եւ հողօգտագործման այդ ձեւը, եթէ մէկ կողմից նպաստաւոր պայմաններ էր ստեղծում եւ պահանջում միացեալ ուժերով աշխատելու, ապա, միւս կողմից, դեռեւս հողի անհատական սեփականութեան չգոյութեան պատճառով, գերդաստանները չէին ձգտում բաժանուել, տնտեսական ուրույն միաւոր կազմել, քանի դեռ դիւղական տնտեսութիւնը բաւականին պարզունակ տեխնիկայի պայմաններում մեծ թւով աշխատող ձեռքերի եւ միջոցների կարիք էր գգում: Բացառիկ նահապետական ընտանիքներ էին լինում, որոնց անդամներից ոմանք արհեստների մէջ մասնագիտանալով բաժանում էին:

19րդ դարի երկրորդ կէսից սկսած զգալի փոփոխութիւն է մտնում դիւղական կեանքում: Ղրիմի պատերազմից (1853—56 թթ.) յետոյ, անդր-Փրանսական դրամատիրութեան պարտքերի տակ կքած յետամնաց թուրքիան հարկադրուած էր մի կողմից եւրոպական մոնոպոլիստներին տալ աղի, ծխախոտի մենաշնորհներ ու երկաթուղային գծերի կառուցման եւ շահագործման իրաւունք, միւս կողմից փնտռում էր եկամտահարկի նորանոր աղբիւրներ: Հենց այդ ժամանակ էլ սուլթան Մեճիտի 1858 թ. յատուկ հրամանագրով (իրատէ) հաստատուում է քափուն, այսինքն՝ հողի անհատական սեփականութեան իրաւունքը: Հետեւաբար, եթէ մի կողմից նոր հողամասի ձեռք բերումը փոզի հետ կապուած լինելով, մատչելի չէր բոլորին, միւս կողմից էլ վարելահողային տարածութիւնը բազմացող ներդերդաստանային ընտանիքների անդամներին չէր բաւարարում: Բացի այդ, հողը որպէս անհատակ սեփականութիւն արարքերի դիմաց բռնադրաման ենթակայ լինելով, գիւղատնտեսութեամբ պարապող մեծ ընտանիքները, հետզհետէ զրկուում էին իրենց անհրաժեշտ վարելահողերից: Այսպիսով, սակաւահողութիւնը ներդերդաստանային ընտանեկան գոյգերին մղում էր տարբեր պարապմունքների, հետեւաբար եւ բաժանման: Այդ հանգամանքը յայտնի ազգագրաբան Ե. Լալայեանը

նոյնպէս իր ժամանակին ճիշդ նկատելով, նշում է, որ դերդաստանի ներքին արոհման ամենադիւսաւոր պատճառներից առաջինը՝ վարելահողերի սակաւութեան պատճառով դերդաստանի անդամների տարբեր զբաղմունքներով պարապելու հետեւանք է<sup>(1)</sup> :

19րդ դարի վերջերին կապիտալիստական յարաբերութիւնների զարգացման հետեւանքով, դեռեւս նահապետական բաղմանդամ ընտանիքների տնտեսութեան ներսում սկսում է սաղմնաւորել փոքր ընտանիքների անհատական սեփականութիւնը: Այսուհանդերձ, պէտք է ենթադրել, որ փոքր ընտանիքը, որպէս ուրոյն տնտեսական միւսուր, Գամիրքում ընդհանրապէս աւաջացել է միայն հողի անհատական սեփականութեան հրամանադրի հրատարակումից եւ կապիտալիստական յարաբերութիւնների զարգացումից յետոյ, դերդաստանների արոհումից փոքրաթիւ ընտանիքներ միշտ էլ եղել են դիւզերում: Ազգադրական նիւթերը հիմք են տալիս ենթադրելու, որ դա դոյութիւն է ունեցել շատ աւելի վաղ անցեալում: Այդ մասին են վկայում փոքր ընտանիքը բնորոշող՝ մէկ աղջիկ երիկ-կնիկ, չաւ-Քիւթուկի տեղական բազմաթիւ հեքիաթապատումները:

Հայկական նահապետական ընտանիքի տնտեսութեան ղեկավարման հին ձեւը, նիստ ու կացը կենցաղում այնպէս էին արմատացել, որ չնայած կապիտալիստական յարաբերութիւնների զարգացման հետեւանքով առաջացած նոր պայմաններին, այդ հին ձեւը դեռեւս պահպանւում էր միայն որոշ փոփոխութիւններով: Այսպէս, Կիւրիւնում ձեմճեմենց ընտանիքի հայրը թէեւ վաղուց մահացել էր, բայց ըստ հին սովորութեան, ամուսնացած վեց եղբայրները իրենց մեծ եղբոր՝ Խաչեր աղայի գլխաւորութեամբ երախաներով միասին (ընդամենը երեսուն հոգի) ապրում էին մէկ տնտեսութեան մէջ: Նրանք իրենց հողերը կիսարուութեան էին տուել եւ զբաղւում էին վաշխառութեամբ եւ յատկապէս դիւզերի հացահատիկի կապալառութեամբ: Արաբկիրում Ղաղանջեան Մարտիրոսը իր վեց ամուսնացած զաւակներով (32 մարդ) մէկ տնտեսութիւն էր վարում, որտեղ տան մեծը հայրն էր: Հայրը եւ իր վեց զաւակները զբաղւում էին պղնձագործութեամբ, իւրաքանչիւրը կատարելով այդ արհեստի պրոցեսին յատուկ առանձին պարտականութիւն: Հենց այդ պատճառով էլ արհեստաւորական ընտանիքներում ամուսնացած եղբայրները մէկ տնտեսութեան մաս էին կազմում:

Կիւրիւնում, որը գլխաւորապէս շալագործութեան կենդրոն էր, արհեստաւորական գործառնութեամբ զբաղուող տնտեսութեան ղեկավարման ձեւը դարձեալ նոյնն էր: Օրինակ, Չուլճեան հինգ եղբայրները, Չոքարեան չորս եղբայրները զբաղւում էին շալի արդիւնաւորութեամբ եւ նրանցից ումանք, թէեւ երկար տարիներ տարբեր քաղաքներում էին ապրում, սակայն մէկ տնտեսութեան մաս էին կազմում: Այդ հանդամանքը, մի կողմից, այսպէս ասած, ընտանիքի ղեկավարման նահապետական ձեւի կենցաղում ամբողջութեամբ լինելու, միւս կողմից տնտեսութեան ընդհանուր շահերի պաշտպանութեան հետեւանք էր: Նոյն ընտանիքում եղբայրներից իւրաքանչիւրը

(1) Ա. Մկրտչեան, Հոդայիմ հարցը Թուրքա-Հայաստանում, «Գործ», Բաբու, Թիւ 4, էջ 65—67:

(2) Ե. Լալայեան, Բորչալուի գաւառ, «Ազգագրական համդէտ», Թիֆլիս, 1903, 10-րդ գիրք, էջ 127:

տարբեր մասնագիտութեամբ զբաղուելով հանդերձ, վարում էին նոյն գործի տարբեր բաժինները:

Գամիրքում նահապետական ընտանիքի ղեկավարումը ներկայացնում էր այսպիսի ձեւ. միջնադարում, ինչպէս յայտնի է, տնտեսութեան ղեկավարը հանդիսանում էր անպայման ընտանիքի հայրը եւ կամ նրա մահից յետոյ՝ մեծ որդին: Այդ դարի աշխարհադիր Սիմէոն Լեհացին իր «Ուղեգրութիւն» աշխատութեան մէջ խօսելով Սերաստիայի շրջաններում նահապետական ընտանիքի մասին, գրում է. «Եւ քէ հայրն մեռանէր, մեծ եղբորն հնազանդէին»<sup>(1)</sup>: Դա այդպէս էր մինչեւ 19րդ դարի առաջին կէսի վերջերը, քանի ղեւ Գամիրքում հիմնականում տիրում էր բնատնտեսութիւնը, քանի ղեւ առեւտրական յարաբերութիւնները զիւղում նուազ էին զարգացած: Այդ պայմաններում տնտեսութեան ամբողջ եկամուտը գտնւում էր տան մեծի լիիրաւ կարգադրութեան տակ, որն իր այդ իրաւասութիւնը մասամբ բաժանում էր իր կնոջ հետ: Հայրը, եթէ տան ներկայացուցիչն էր հանդիսանում, յատկապէս արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն ունենալիս, վարում էր գրամական գործերը եւ պատասխանատու էր ամբողջ տնտեսութեան կանոնաւոր ընթացքի համար, ապա տնտեսութեան ներքին գործերը գտնւում էին տանտիրինոջ ղեկավարութեան ներքոյ: Բացի այդ, վերջինս շատ կարեւոր եւ յաճախ էլ վճռական ղեւ էր կատարում յատկապէս ընտանիքի երիտասարդ տղաներին հարսնացուներ գտնելու գործում: Այնուամենայնիւ, չպէտք է ենթադրել, ինչպէս անում են ոմանք, ընդհանրացնելով մասնակի դէպքերը, որ ընտանիքի միւս անդամները, յատկապէս կանայք ոչ մի իրաւասութիւն չունէին եւ տնտեսութեան բացարձակ տէրը տան մեծն էր համարւում եւ ոչ ոքի առաջ պատասխանատու չէր իր գործերի համար: Այստեղ ուղում ենք մէջբերել բաղմաթիւ օրինակներից մէկը, որը լրիւ դադափար է տալիս Գամիրքի հայ նահապետական ընտանիքում գոյութիւն ունեցող որոշ սովորութային իրաւունքի մասին: Կեմերեկում նահապետական մեծահարուստ ընտանիքներից մէկի աւագը՝ Ստեփան Էհմալեանը, առեւտրի գերդաստանի ուղտերի քարանձանով Բրուսա քաղաքը դնալիս ծանօթանում է մի գեւատի կնոջ եւ նրանից ունենում է մի ապօրինի գաւակ: Երբ այս եղելութիւնը նրա ծննդավայրում յայտնի է դառնում, մեծ աղմուկ է առաջանում Էհմալեանների օջախում: Գերդաստանի անուանը հասցուած անպատուութեան համար աղաւակից ընտանիքների մեծերի հաւաքը Ստեփանին տետէ մահրում է անում, այսինքն՝ պապենական ժառանգութիւնից զրկելով, վտարում է ոչ միայն ընտանիքից, այլեւ զիւղական համայնքից: Նրան տրամադրւում է զիւղից հեռու «Հորոխ» կոչուած տեղում մի փոքր հողամաս, որտեղ նա իր երկրորդ կնոջ հետ ապրում է մինչեւ իր կեանքի վերջը: Այսպիսի պարագաներում եւ, ընդհանրապէս, ամուսնու մահից յետոյ, երեխաների անչափահասութեան ժամանակ հայ կինը տան մեծի դեր էր կատարում: Եւ նոյնիսկ տնտեսութեան ղեկավարման մէջ հայ կնոջ ցուցաբերած մեծ ընդունակութեան հետեւանքով, տուեալ ընտանիքը կոչւում էր նրա անունով: Օրինակ, Մեմեշեմ (Մանուշակենք), Բայրի-Գուհարեմ, Մեմեմտեմ, Հալոնց Մաքը, Էփեմտի տունը, անուանակոչումները խօսում են այն մասին, որ այդ ընտանիքների ղեկավարները կանայք են եղել: Այս եւ տարբեր հանդամանքներից ելնելով, հիմք կայ ենթադրելու, որ անցեալում հայ կնոջ կարծեցեալ ստրկութիւնը ընտանիքում

(1) Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, Վիեննա, «Համդէս տնօրեայ», 1934, էջ 157—8:

Հիմնականում դոյուլթիւն չի ունեցել: Իսկ ինչ վերաբերում է նոր հարսների ժամանակաւոր չխօսկանութեանը, կամ ինչպէս ասում են՝ մտուց կեցնալու, ինչպէս նաեւ նախքան քնելը կեսրայրի, մեծ տաղերի ոտնամանները հանելու, ոտքերը լուանալուն, հագուստները հանելիս օգնելուն, եւ նոյնիսկ կեսրայրի թիկունքը շփելուն, որ նա քնի, ապա այդ բոլորը, թերեւս որպէս յարգանքի նշան տալիս է դեռեւս շատ հին ժամանակներում նոր հարսին՝ որպէս ղնտանիքի անդամ որդեգրելու մի հին ծիսական արարողութիւնից՝ չիլէից: Դա հաւանաբար անհրաժեշտ ժամանակամիջոց էր ինչպէս քոյր քոյր բարբնծաների, նոյնպէս եւ նորահարսների համար, մինչեւ ծննդաբերութեամբ նրա արիւնակից անդամ դառնալը իր ամուսնու ղնտանիքին: Հնի այդ վերապրուկը, եթէ մեր օրերին վերացել էր քաղաքներում, ապա Գամիրքի առանձին շրջանների դիւղական վայրերում, ինչպէս ասուեց, այն դեռեւս պահպանւում էր որպէս յարգանքի նշան: Նորահարսների չխօսկանութիւնը, կանանց առանձին ճաշելը, եթէ դիւղական մեծ ընտանիքներում մինչեւ վերջերս դեռ պահպանւում էին, ապա քաղաքային փոքր արհեստաւորական ընտանիքներում դրանք որոշ փոփոխութիւնների էին ենթարկուել: Օրինակ, դեռեւս հարսնութեան առաջին օրից կեսրայրի եւ սկեսուրի կողմից թոյլատրւում էր նորահարսին մուշ չսահել եւ միասին սեղան նստել: Յամենայն դէպս, քաղաքամերձ դիւղերում եւս նախկինում եղած այդ խստութիւնը, առեւտրական յարաբերութիւնների աշխուժացումից յետոյ որոշ փոփոխութիւնների էր ենթարկուել: Օրինակ, Սեբաստիայի շրջանի հայ դիւղերում, կանայք տղամարդկանց հետ միեւնոյն բաժնում էին նստում, ըստ տարիքային հասակի, եւ սեռերը ոչ խառն: Երիտասարդ կանայք եւ աղջիկներ օդաներում տղաների խաղերին թէեւ չէին մասնակցում, բայց ընկերակցում էին նրանց երգերին:

Դրամատիրական յարաբերութիւնների զարգացման հետեւանքով, որոշ փոփոխութիւն առաջացել էր նաեւ ընտանիքի ղեկավարման ձեւի մէջ: Օրինակ, Գամիրքի հայկական ընտանիքում, հօր մահից յետոյ, կամ նրա ծերութեան ժամանակ, անհրաժեշտ չէր, որ միշտ մեծ եղբայրը նշանակուէր տան ղեկավարը, այլ եղբայրներից ամենաճարտարը, խելացին, չբարդետը, հասարակութեան հետ շփում ունեցողը, թէկուզ նա լինէր միջնակը կամ կրտսերը, որ ղեկավարւում էր տնտեսութիւնը մօր հետ: Ինչպէս տեսնում ենք, այս պայմաններում աւագութիւնը խոնարհւում է խելքի առաջ: Այդպիսի բազմաթիւ օրինակներից մէջբերենք թէկուզ մէկը: Կիւրինում ձըղընեց Մղղսի Կարապետը ունէր չորս որդի, որոնցից մէկը ամուսնացած եւ իրենից փոքրի հետ զբաղւում էր շալագործութեամբ, միջնակը՝ Յակոբը, ջորիներով փոխադրական առեւտուր էր անում, իսկ փոքրը դարոց էր գնում: Ծնողները եւ չորս եղբայրները ապրում էին միասին, բայց տնտեսութեան ղեկավարն էր միջնակ տղան՝ Յակոբը, իր մօր հետ: Այսպէս, ուրեմն, տնտեսութեան ղեկավարման գործում արտաքին աշխարհի հետ յարաբերութեան համար, եթէ միջնակն էր տան ղեկավարը, ապա տնտեսութեան ներքին գործերը գտնւում էր մօր իրատեսութեան տակ: Եթէ դա այդպէս էր քաղաքատիւ մեծ աւանների արհեստագործական աւաններում, ապա դիւղական վայրերում Հիմնականում երկրագործութեամբ եւ օժանդակ անասնապահութեամբ զբաղուող տնտեսութիւնների ղեկավարման գործում եւս տեղի էր ունեցել աշխատանքի բաժանում: Այսպէս, Հալիսի ներքին հովտի շրջակայ դիւղերից՝ Թեքմէնում, Պարսամեանների մեծ ընտանիքը բաղկացած էր 25 մարդուց: Տան ղեկավարը, մեծ եղբայրը՝ Մարտիրոս ազան էր. եղբայրներից մէկը տնտեսութեան մէջ

զբաղւում էր ոչխարների հօտի պահպանութեան դործերով, միջնեկ եղբայրը՝ Վարդիվարը, մթերքների առուծախով եւ վաշխառութեամբ: Նրանցից իւրաքանչիւրը, տնտեսութեան՝ իրեն յանձնուած ճիւղի թէեւ ազատ ղեկավարն էր հանդիսանում, սակայն ինչպէս տնտեսութեան անհրաժեշտ իրերի, կենդանիների դնումը, նոյնպէս եւ աւելացած բրդերի, կաթնամթերքների, հացահատիկի եւ բանջարեղէնի վաճառումը տեղի էր ունենում երեքի նախօրօք խորհրդակցութեամբ: Այդպիսի մեծ տնտեսութիւններում, որոնք բաղկացած էին յաճախ կէս վեցեակ զոյգերից, գոյութիւն ունէր ըստ սեռի եւ հասակի աշխատանքի բաժանում, բացի այն, որ կանանցից իւրաքանչիւրը, ըստ հասակի եւ փորձառութեան, կատարում էր իրեն բաժին ընկած աշխատանքը՝ հաց թխելը, սնունդը պատրաստել, անասունները կթել, արտ քաղել եւ այլն, սակայն, իրենց հագուստեղէնի պատրաստման, գործում ներգերդաստանական փոքր ընտանիքի կինը ինքն էր կատարում իր ամուսնու եւ երեխաների հագուստի՝ պուլպայի, շալվարի, մէջքի շալի (գօտու), դոլախի, դլխանոցի (բաշլըխ) եւ արայի շալի գործելու, կարելու աշխատանքները:

#### Բ. — ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐ

Հարսանիքը պատմական Հայաստանի բոլոր գաւառներում, այդ թւում եւ Գամիրքում, հասարակական կեանքի մեծ իրադարձութիւններից մէկն էր: Դա ամուսնութեան հետ կապուած սովորոյթների, արարողութիւնների եւ ուրախութիւնների մի կոմպլեքս է, որը թէեւ սոցիալ-տնտեսական նոր պայմաններին համընթաց նոր երանդաւորում էր ստացել, այնուամենայնիւ, Գամիրքում մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը, հարսանիքի աւանդական սովորութիւնները, հիմնականում պահպանւում էին:

Գամիրք գաւառի հայ ազգաբնակչութիւնը, ինչպէս նշուեց, թէեւ միջնադարում պատմական Հայաստանի ներքին դաւառներից էր զաղթել, ուստի եւ պահպանել էր հայրենի գաւառների աւանդական սովորութիւններն ու հարսանեկան ծիսական արարողութիւնները, այսուհանդերձ, Գամիրքում սեղական նոր պայմանների եւ տարբեր ժողովուրդների հետ յարակցութեան ու կուլտուրական փոխազդեցութեան հետեւանքով աւանդականը ստացել էր նոր երանդաւորում: Գամիրքը որպէս ազգաբնակչական մի ուրոյն շրջան, իր առանձնայատկութիւններն ունենալով հանդերձ, ամբողջութեամբ վերցրած ունէր նաեւ մի ընդհանրութիւն:

Հարսանիքները ընդհանրապէս տեղի էին ունենում աշնան վերջերին՝ բերքը ներս առնելուց յետոյ, դա միակ ազատ եւ յարմար ժամանակն էր մի այդպիսի շրջանի համար, որտեղ հիմնականում զբաղւում էին, գիւղատնտեսութեամբ: Մենք այստեղ քննութեան առարկայ կը դարձնենք ոչ միայն Գամիրքի հարսանեկան ընդհանուր սովորոյթները, այլեւ ուշադրութեան կ'առնենք նոյն գաւառի տարբեր շրջանների առանձնայատկութիւնները, որոնք իրենց հերթին կ'օգնեն ընտանեկան յարաբերութիւնների պարզաբանմանը:

Ծնողների համար, ինչպէս յայտնի է, իրենց չափահաս զաւակներին ամուսնացնելը ոչ միայն բնական եւ լաւ ցանկութիւն էր, այլեւ սոցիալ-տնտեսական մի անհրաժեշտութիւն, աշխատանքում թեւ ու թիկունք, նեցուկ ունենալու եւ պապենական օջախը անշէջ պահելու ձգտում: Այդ իսկ պատճառով չափահաս տղայ զաւակ ունեցող ծնողները, յատկապէս նախօրօք իրենց մտքում քննութեան էին ենթարկում իրենց ապագայ հարսնացուին: Այդ

հարցի առաջնութիւնը վերաբերում էր տղայի մօրը, որը ամուսնու հետ առանձին զրոյցի նիւթ էր դարձնում իրենց շրջանակում գտնուող չափահաս աղջիկների եւ նրանց ծնողների վարքն ու բարքը, առողջական վիճակը, դիրքը եւ յատկապէս աղջկայ մօր վարքը, որի մասին հետեւեալ ասացուածքն էր ստեղծուել՝ «Մօրը նայիր՝ աղջիկը առ, եզրին նայիր՝ կտաւը (բիւզը) առ»։ Այսուհանդերձ բացառուած չէր նաեւ, որ չափահաս տղաներն իրենց հերթին երբեմն ընտրած լինէին իրենց ապագայ հարսնացուն։ Գամիրքի տարբեր շրջաններում այդ կատարում էր տարբեր ձեւով. օրինակ, Բինգեան գիւղի չափահաս տղաները շրջելով Եփրատի ափերի աղբւրների մօտերքը, աչքից հեռու, այդ վայրում հանդիպած էին իրենց հաւանած աղջկան, որը սափորով ջրի էր դալիս։ Տղան առանց որեւէ բռնի, նրա ոտքերի առաջ մի կարմիր խնձոր էր գլորում։ Այդ սովորոյթը իր արտայայտութիւնն է գտնել նոյնիսկ ժողովրդական բանահիւսութեան մէջ։

Խնձոր մ'ունիմ խաճած է,  
Խաճած տեղն արծթած է,  
Էզրերս ուզեց չտալի՝  
Էս իմ եարիս տուածն է։

Ծնողները նախօրոք կատարելով իրենց ընտրութիւնը կամ հաւանելով իրենց տղայի ընտրածին, ծանօթների կամ բարեկամների միջոցով գոչուութեամբ աղջկայ ծնողների մտադրութիւնը խմանալուց յետոյ, աղջիկտեսի էին դնում։ Եւ այս ըստ գիւղի, քաղաքի եւ իւրաքանչիւր շրջանի կուլտուր-կենցաղային պայմանների, տարբեր ձեւ ունէր։ Օրինակ, Ակնում տղայի ծնողները տաներեց քահանայի գլխաւորութեամբ՝ իրենց մօտիկ բարեկամներից, աղջկայ ծնողքի մօտ խնամախօսութեան էին ուղարկում, առաջին համաձայնութիւնը կոչուում էր խօսկապ։ Կեսարիայում գոյութիւն ունէր տարբեր սովորութիւն։ Տղայի ծնողները իրենց ծանօթի կամ բարեկամի գլխաւորութեամբ, որին ընկերանում էր նաեւ ապագայ յիեսացուն, գնում էին աղջիկտեսի։ Պէտք է նշել, որ չափահաս աղջիկ ունեցողները, ըստ տեղական սովորոյթի, գիտէին, որ Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերը աղջիկտեսի են դալիս, ուստի եւ այդ օրերին իրենց տները սովորականից աւելի մաքուր եւ դասաւորուած էին պահում։ Այցելուների կողմից թէեւ նշանախօսութեան մասին խօսք չէր լինում, բայց աղջկայ կողմի տնեցիները այդ անպատասխան այցելութեան իսկական նպատակը կուհանում էին անմիջապէս։

Այցելուների առաջնորդը, ըստ սովորութեան, խմելու համար ջուր էր խնդրում։ Ինչպէս յայտնի է, ջուր հրամցնողը ընդհանրապէս տան չափահաս աղջիկն էր լինում, ուստի եւ աղջիկը ջուրը բերելով, խոնարհութեամբ հրամցնում էր խնդրողին եւ ձեռները կրծքին ակնածանքով սպասում էր մինչեւ խնդրարկուի ջուր խմել վերջացնելը, ապա ջրի բաժակը վերցնել, ետ էր քաշում եւ մի քանի վայրկեան կանգնած քարե բռնում։ Դա առիթ էր տալիս այցելուներին աղջկան մօտիկից դիտելու։ Տան մեծի նշանի վրայ, երբ աղջիկն արդէն քաշում էր ներքնասնեակը, այցելուներն էլ իրենց հերթին մեկնում էին։ Տղան, եթէ հաւանութեան էր արժանանում, իսկ աղջիկ էլ իր հերթին հաւանութիւն էր գտնում տղայի կողմից, աղջկայ կողմը ընդհանրապէս յուռ էր մնում, եւ սպասում, որ տղան իր քրոջ կամ հարսի միջոցով լուր ուղարկի աղջկան, որ համակրում է նրան։ Իսկ աղջկայ ծնողները, եթէ չէին



հաւանում տղային, ասյա հետեւեալ օրը իմաց էր տրւում, որ աղջիկտեսի չդան:

Տղայի կողմի կանայք աղջկայ ծնողներին կողմից նախապէս որոշուած օրը, գնում էին պաշտօնական աղջիկտեսի: Այդ կանանց կարծիքը յաճախ չճշտական դեր էր խաղում՝ աղջկայ ձեռքը խնդրելու կամ չխնդրելու գործում:

Այդ երկու նախապատրաստական այցելութիւններից յետոյ, որոնք ընդհանրապէս տեղի էին ունենում առանց փոխադարձ մեծարանքի, տղայի ծնողների կողմից ուղարկում էին մօտիկ բարեկամներ՝ աղջկայ ձեռքը պաշտօնապէս խնդրելու համար, դրանք կոչւում էին ռիմաչիներ, այսինքն՝ խնդրարկուներ:

Խնդրարկուների առաջնորդը, որ սովորաբար հեղինակաւոր մէկն էր լինում, իսկ Ակնում՝ տաներէց քահանան, խօսք առնելով, ասում էր. «Եկած ենք Աստծոյ հրամանով, Հայրապետի կանոնով, ձեր աղջկան (անունը տալով) ձեռքը խնդրելու մեր (օրինակ՝ Աճեմենց Կիրակոս տղայի) տղին»:

Աղջկայ ծնողներից հայրը սկսում էր անվերջ առարկութիւններ՝ «Թէ պատրաստ չեն», «Թէ այդ մասին խորհելու համար ժամանակ է հարկաւոր» եւ այլն եւ այլն: Այսպէս, զանազան պատրուակներից յետոյ կողմերը խորհելու համար ժամանակ էին պահանջում: Պահանջուած ժամանակմիջոցը ընդհանրապէս երկար էր լինում, բայց երկուստեք համաձայնութեամբ զեղչում էր 11—21 օրուայ: Որոշուած ժամանակից մի օր առաջ տղայի կողմից աղջկայ ծնողներին լուր էր ուղարկւում, որ վաղը գալու են խօսքիսպի, աղջկայ հայրը սովորաբար պատասխանում էր՝ «Թող հրամմեն» կամ «այսօր պատրաստ չենք, թող այս ինչ օրը հրամմեն»: Նախքան տղայի կողմից պաշտօնական ձեռք խնդրելը, որոշուած օրը տղայի հայրը իր մօտիկ ազգականներով դնում էր աղջկայ հօրից պաշտօնապէս նրա դասեր ձեռքը խնդրելու: Այստեղ պէտք է նշել այն, որ նախքան տղայի կողմից պաշտօնական ձեռք խնդրելը, փոխադարձ զրուցութիւնները, ձգձգումները ունեն իրենց արդարացի պատճառները: Այդ ձգձգումների նպատակն էր ոչ միայն իրար աւելի լաւ ճանաչելը, այլեւ որովհետեւ մի անգամ արդէն մերժուած տղան կամ հաւանութիւն չգտած աղջիկը, ըստ սիրող հասարակական կարծիքի, ամուսնութեան համար յետագայում որոշ դժուարութիւններ էր հանդիպում: Հակառակ կանխաւ գոյացած համաձայնութեան, այս անգամ եւս ըստ սովորութեան աղջկայ ծնողների կողմից զանազան դժուարութիւններ էին յարուցւում, պահանջւում էր նոր պայմանաժամ: Բազմաթիւ անտեղի առարկութիւններից յետոյ միայն, վերջապէս ասւում էր աւանդական այն:

Առաջին խօսք առնողը ծնկի դալով ասում էր «Հայր Մեր»ը եւ երեսը խաչակնքում, նոյն էր անում աղջկայ հայրը, որից յետոյ սկսւում էին երկուստեք բարեմաղթութիւնները, աչքերնիդ, աչքերնիս լոյս, ինամի, տարուք ձեր գաւակների գլխին:

Աղջիկը որ խօսակցութեան ամբողջ տեւողութեան ժամանակ բացակայում էր, իր մեծ քրոջ կամ եղբոր կնոջ ուղեկցութեամբ ներքնասենեակից ներս էր դալիս՝ խնամիների ձեռքը համբուրելու համար: Իսկ փեսացուն, որ խօսքիսպի ժամանակ բացակայ էր լինում, կանչւում էր: Խնջոյքը սկսւում էր («բերան անուշութեան» համար) շերքէքով եւ տեւում էր 3—4 ժամ, այսինքն՝ մինչեւ ուշ դիշեր:

Պօսքիսպը որպէսզի պաշտօնական հանդամանք ստանար, կարգը այնպէս էր պահանջւում, որ մի օր յետոյ տաներէց քահանան, նոր խնամիների

տները զնալով, աղջկայ եւ տղայի գլխին աւանդական «պահպանիչը» պէտք է կարգար:

Խօսքկապից ընդհանրապէս մէկ շարք կամ, գիւղական որոշ վայրերում, մինչեւ վեց ամիս յետոյ, տեղի էր ունենում նշանդրէքը կամ, մեծ իշանտուէր: Որոշուած օրը տղայի ծնողները, փեսացուն եւ իրենց մօտիկ ու հեռուոր ազգականները, հարսնացուի ծնողները եւ նրանց մօտիկ բարեկամները հաւաքւում էին աղջկայ տանը, որտեղ իւրաքանչիւր սեռ նստում էր առանձին, երկուստեք բարեմաղթութիւններից, կերուխումից յետոյ, կէս գիշերի մօտերը, փեսացուի հայրը փառաք էր յայտնում, որ իր հարսնացուն ձեռք համբուրելու ներկայացուի: Աղջկայ հօր կողմից, ըստ սովորութեան, եղած մի քանի ձեւական պատճառաբանութիւնից յետոյ հարսնացուն մի մօտիկ ազգականուհու առաջնորդութեամբ, ներքնասենեակից ներս բերուելով, համբուրում էր կարգով բոլորի աջ ձեռքը, նոյնիսկ իր նշանածի ձեռքը, որից յետոյ ակնածանքով ետ-ետ զնալով, ձեռները կրծքին՝ բարեւի էր կենում: Խմում էին նշանուածների կենացը եւ նրանց գովքն էին հիւսում:

Հարսնացուն նախքան ներքնասենեակ վերադառնալը, որպէս յարգանք վերատին համբուրում էր ներկաների ձեռքը, որի ընթացքում, իւրաքանչիւրը տալիս էր հարսնատեսի նուէրը, ինչպէս ասում էին՝ երես տեսնուկը: Նուէրները ընդհանրապէս բաղկանում էին զարդ-ոսկիներից՝ գրամիցա, մահմուդիէ, դրոյ կամ դագի, սամտիսը եւ տաւնոց (ծննուխ) ոսկի: Հարսնացուն նուէրները մատների միջեւ այնպիսի մի կարգով էր շարժում, որ հետոյ թեամբ հասկացւում էր, թէ ով ինչ նուէր է տուել: Մի քիչ յետոյ աղջկայ մայրը իր պարտականքով, քաշւում էր միւս սենեակը փեսային նուէր մատուցուելու համար<sup>(1)</sup>: Փեսացուին ներս կանչելով, տալիս էին, ըստ իրենց նիւթական կարողութեան, ազամանդակուռ կամ հասարակ ակով ոսկի մատանի, ծխախոտի արծաթեայ տուփ, սաթէ համրիչ, ծխամորճ, ուլունքով գործուած ժամացոյցի աման, մետաքսէ մի թաշկինով եւայլն:

Նշանդրէքի փաստը, ըստ ընդունուած կարգի, պէտք էր բոլորին յայտնի լինէր: Ուստի եւ տղան ու աղջիկը նշանդրէքի հետեւեալ օրից իսկ զարդարւում էին իրենց ստացած նուէրներով: Հարսնացուն, ըստ տեղական ճաշակի, իր զարդոսկիները դասաւորում էր կարմիր ծոպաւոր Ֆէսի առջեւի կողմում եւ ոսկիներն առաջ կամ զարդարում էր արախշիմ (թասակ) եւ որպէս մանեակ կախում էր կրծքից, կամ որպէս շարոց ծամերի խսիրի վրայ եւ կամ ծամերի հիւսկէնների ծայրերին, երբեմն նաեւ վզին ու ծամերին միաժամանակ: Իսկ փեսացուն իր միջնամատին կրում էր ակով մատանին: Այդ զարդերի քանակը կարող էր բազմանալ մինչեւ ամուսնութեան օրը, նոր տարուայ, ծննդեան, բարեկենդանի, գատկի եւ այլ սոների առթիւ սրուած նուէրներով:

Ինչ վերաբերում է նշանդրէքից հարսանիքի միջեւ ընկած տեւողութեանը եւ այդ ժամանակամիջոցում նշանուածների տեսակցութեան ձեւերին՝ դրանք առաջին հերթին իրարից տարբերւում էին ըստ գիւղի եւ քաղաքի կուլտուր-կենցաղային պայմաններին եւ տեղական սովորութիւններին, ինչպէս նաեւ ենթակաների ընտանեկան դրութեանը: Օրինակ, եթէ գիւղերում նշան-

(1) Փեսատեսը Գամիրփի բոլոր շրջաններում նոյն ձեւով չէր կատարւում, օրինակ՝ Էվերեկում աղջկայ մայրը մի քանի ծամօք բարեկամ կանանց հետ գնում էր փեսատեսի եւ սրպէս նուէր տանում էր մի մետաքսէ քաշկիմակ, ակով մատանի, ինչպէս նաեւ մի պակ լեզր, վրամ սեր՝ «բերամ քաղցրացնելու համար»:

գրէջից ամուսնութեան միջեւ ընկած ժամանակամիջոցը տեւում էր 6 ամսից մինչեւ մէկ տարի, ապա քաղաքներում նշանախօսութիւնից հարսանիք՝ երբեմն նոյնիսկ մի քանի շաբաթ միայն: Այդ ժամանակամիջոցը գիւղական վայրերում երկար էր տեւում, առաջին, նրա համար, որ ամուսն դաշտային աշխատանքներն աւարտուեն եւ նոր միայն ամուսնութեան պատրաստութիւններ տեսնեն, հարսանիքի ուշացումը նշանուածների համար իրար վայելելու մի միջոց էր, քանի որ գիւղական երիտասարդութիւնը օրինականացած այն աղատութիւնը չունէր, ինչ որ վայելում էր քաղաքինը: Գամիրքի քաղաքային վայրերում, յատկապէս Ակնում, Արարիկիւրում, Սեբաստիայում, Կիւրինում, ըստ տեղական սովորութեան, նշանուած տղան, ամէն շաբաթ երեկոյ եւ տօնական առիթներով այցելութեան էր գնում, մի քանի ծանօթ ընկերներով իր սշանածին, ուր մտերմական մի շրջանակի մէջ արժանանում էր ջերմ հիւրասիրութեան: Գալով գիւղացի երիտասարդին, թէեւ նոյնպէս առիթը չէր պակասում այդի, արտ, կալ եւ աղբիւր գնալ-վերադառնալու ժամանակ իր նշանածի հետ սիրալիւր խօսքեր փոխանակել եւ կամ երեկոյեան միջեւուն աղջկայ մօր կամ տան մեծ հարսի կարգադրութեամբ ընտանիքի միւս անդամներից դադարադողի իր նշանածի մօտը երթալ, սակայն, ընկերական շրջանակում, իր նշանածի հետ հրապարակով տեսակցութիւնը յատկապէս տեղի էր ունենում երկամբ քաջելու ժամանակ: Ինչպէս յայտնի է, յատկապէս գիւղական վայրերի կենցաղում ընդհանրացած երեւոյթ էր աշնան առտնին որոշ աշխատանքների, այդ թւում եւ ձաւար աղալու փոխօգնութեամբ կատարումը: Ուստի եւ երկանքով ձաւար աղալու համար կանչում էին դրացի, բարեկամ-ազգականի նշանուած աղջիկները, իսկ վերջիններս ամէն ջանք թափում էին, որ իրենց ծնողները չմերժեն այդ հրաւերը, միւս կողմից դադարի լուր ուղարկելով իրենց նշանածներին, որ իրենք երկամբ քաջելու են հրաւիրուած այսինչ գիւղեր, իրենց այնինչ ազգականի տունը: Երիտասարդները գիւղերը գնում, բարձրանում էին այդ տան կտուրի վրայ: Երկանքը սովորաբար տեղաւորուած էր լինում թոնրաթմբի այն մասում, որը գտնուում էր երգիկի ճիշդ ներքեւը: Այսպիսով, հաղորդակցութիւնը հեշտանում էր: Անմիջապէս, որ ոտքի ձայն էր լուում կտուրից, գեղեցիկ ձայն ունեցող աղջիկները փոխնիփոխ սկսւում էին մեներգել, յատկապէս «Երկանքի մանին», իսկ խումբը նրան պատասխանում էր.

Երկանքը մանի, մանի  
Օրիմ օ քունդ տանի.  
Իս ինչ ըսիմ էն եարիմ  
Զգար իս քովը տանի:

Երգիկը ելիւ կու գայ,  
Գարվար նայելու կու գայ,  
Եկաւ անցաւ շան տղան,  
Ղատան առնելու կու գայ:

Խումբը՝

Գարձրէք աղջըներ, դարձրէք  
Լոյս-եարը մեզ դրկեցէք,  
Զի դառնում, չի դառնում  
Լոյս-եարը տանիքից չիջնում:

Տանիքում սպասող երիտասարդներից իւրաքանչիւրը ճանաչելով իր նշանածի ձայնը, չուանով իջեցնում էր մրդեղէնով լեցուն կարմիր մանրաման (մեծ թաշկինակ) : Որտեղ, ծիծաղը վերեւից ներքեւ համակում էր բոլորին, այսպէս, իւրաքանչիւրը սպասում էր իր նշանածի ձայնին :

Երկանք քաշող աղջիկները իրենց հոգեկան յոյզերը արտայայտում էին նաեւ Ըլլայի, Ըլլայի կարօտի, պանդխտի երգերով, որոնք լայն տարածում էին դաել, յատկապէս 20-րդ դարի սկիզբներին՝ դիւղի շերտաւորման խորացման հետեւանքով, երբ երիտասարդները տարիներով օտար երկրներ աշխատանք փնտռելու էին գնում :

Ըլլայի, Ըլլայի

Պեգիբկան Ըլլայի բեռդ բանայի,  
Սըվըրբըխ Ըլլայի վրադ դառնայի,  
Լեգաւս բալլինի Ըլլայ սիրդ բանայի :

Ըլլայի, Ըլլայի

Թավսիբնի Ըլլայի, քավսիրդ հանէի,  
Ամէն կարօտնալու առջեւ առնէի,  
Վարդի ծառ Ըլլայի, դաւոդ բուսնէի,  
Ամէն առաւօտին սրտիդ բացուէի :

Դալգա, դալգա կու գայ Պալիսի ծովը,  
Ինչ անուշ կը փշէ սեւտային հովը,  
Տէրը նասիպ ընէր, երթայի քովը,  
Առնէի մուրատս, ընկնէի ծովը :

Մինչեւ այդ տան տիրուհին, սեղանը պատրաստած, երիտասարդներին չբաւիրում էր ճաշի : Նրանք տանիքից վար իջնելով, սեղան էին նստում : Դա միակ առիթն էր նշանուածների համար, յատկապէս Հալիսի ներքին հովտում, մտերմական իւրահատուկ մի շրջանակում իրար հետ տեսակցել կարողանալու համար : Բացի այդ, դիւղական վայրերում, ըստ տեղական սովորութեան, տղայի ծնողներն իրենց մօտիկ ազդականներով հարսնացուին տեսակցութեան էին գնում, որը կեմերեկի շրջանի հայ դիւղերում տեքնել (հաւաքոյթ, հարսանիք) էր կոչում : Որոշուած օրից մի երկու օր առաջ տղայի կողմի բարեկամները ուղարկում էին անպայման մի տապակ փախլաւա եւ վրան անգոյգ քուով գաւաթներ, իսկ խրախճանքի օրը հարսնացուին տալիս էին նաեւ երեսուտեսնուկի դրամական նուէրը : Ըստ սովորութեան, հարսնատեսի էին գնում նաեւ տղայի քոյրերը՝ 40 մանկանց տօնին (40 ճրագալոյցին), հարսնացուի հետ զբօսնելու համար :

Հայկական դաւառներում, ընդ որում եւ Գամիրքում, ինչպէս ասուեց, հարսանիքը լինում էր աշնան վերջերին : Հարսանեկան նախապատրաստման աշխատանքները ընդհանրապէս սկսւում էին ամռանական ծեսից առնուազն երկու շաբաթ առաջ, որը կոչւում էր քեսի-ֆիչի (կտրում-ձեւում), պագար-լըխ կրչել, կամ խօսք կտրել :

Պօքկտրումի համաձայնութիւնը, ըստ սովորութային իրաւունքի, տեղի էր ունենում երկու կողմի հայրերի, ինչպէս նաեւ նրանց մօտակայ տարեց ազդականների միջեւ : Նրանք համաձայնութեան էին գալիս հարսանիքի ժամկէտի, հարսնացուի հագուստների ու զարդերի քանակի ու որակի, տղայի

կողմից նշանակուելիք կնքահօր (քաւոր), ինչպէս նաեւ Հարսանեկան այլ Հարցերի մասին: Երբեմն պատահում էր, որ խօսակարանի ժամանակ ծագած անհամաձայնութեան հետեւանքով նշանախօսութիւնը խզուում էր, սակայն, եթէ չկային լուրջ պատճառներ, ընդհանուր առմամբ խորհրդակցութիւնը համաձայնութեամբ էր վերջանում: Այսուհանդերձ, պէտք է նշել, որ ամուսնական սակարկութիւնը հայերի մէջ դեռ շատ վաղուց կորցնելով առ առ ծախի իր սկզբնական բնոյթը, պահպանուում էր նուիրատուութեան ձեւով: Ուստի եւ զլիսագինը՝ որպէս նշանակուելիք աղջկայ փոխարժէք, հայերի կենցաղում վերանալով, պահուում էր միայն աղջկան, նրա մօրը եւ եղբօրը տրուած նուէրների ձեւով:

Հարսանիքի անհրաժեշտ զնումների կատարումից եւ անհրաժեշտ եռլիսա հացի (սաջի հաց) մեծ կաթսայով չամիչէ խոշափի պատրաստումից յետոյ միայն սկսուում էր Հարսանիքի ծանուցումը: Մինչ փեսացուի մօտիկ ընկերները Հարսանիքի տան կտուրից դէտլ-գուննայով դիւղին ծանուցում էին, «ր «Հարսանիքը սկսուած է», միւս կողմից՝ տղայի տնից Ուրբաթ առաւօտից սկսած դնում էին ազգականների տները, որը տուն ձեռնել էր կոչուում: Ըստ սովորութեան, առաջինը ձեռնում էին Հարսնացուի տունը, ինչպէս նաեւ երկու կողմի ազգական Հարսնացուներին եւ թագուորացիներին: Տուն ձեռնելու համար որպէս նուէր Հարսնացուի տունը տարւում էր մի ձեռք եռլիսա եւ մի փարխան խոշապ, մի դաթա, իսկ այդեզորձական շրջաններում՝ խնձոր եւ ուրիշ մրգեր: Հրաւիրեալները սկսում էին դալ Ծաբաթ երեկոյեան, եւ համաձայն իրենց հասակին, սեռին ու դիրքին, պատշաճօրէն ընդունուում էին տղայի հօր, փեսայի եւ կամ տանտիրինով կողմից՝ տարեց այր մարդիկ մեծ օդայում, երկուսսարգ տղամարդիկ փեսայի օդայում, կանայք մեծ տան քուրսու մօտ, իսկ հարս-աղջիկները՝ սաքուի առաջ դէտլ-գուննայի չորս բոլորը:

Փես-ընկերների առաջին գործն էր լինում նշանակել մակարպաշին կամ իդիտ-բաշին, որը կեմերեկից կեսարիա կոչուում էր մամնի: Երիտասարդներից ամենայարգուածը, ձեռին մի հովուական դաւաղան, ընկերներով բարձրանում էր Հարսանիքի տան կտուրը կամ, տեղի անյարմարութեան պարագայում, հաւաքուում էին տան առաջ մի բաց տեղում: Երիտասարդների առաջնորդը խօսք առնելով, ասում էր. Ընտրեմք մեր թագաւորի պաշտպան մամնի: Եւ սկսում էր աճուրդը. ինձմէ տասը լիդրէ շարապ, մի ուրիշը՝ ինձմէ տասը լիդրէ շարապ եւ գառ մը, ինձմէ թոխլու մը եւ կէս թեմեֆէ ըրախի. այսպէս նրանցից ամենաչատ մատուցողը, ամենաստատաձեռնը ընտրուում էր մամնի:

Մոմճիի առաջին գործն էր լինում իր հետեւորդներով գնալ տղայի քեռու տունը, փեսային «թագաւորական հալաւը» հաղցնելու, իսկ քաւորիինը, իր հերթին, մի խումբ Հարս-աղջիկներով գնում էր աղջկայ տունը՝ Հարսնացուին լողացնելու:

Նախքան պսակի խորհուրդը, փեսան պարտաւոր էր լողանք առնել, սափրուել, մարմնով մաքրուել: Նոյն մաքրութիւնը պահանջուում էր նաեւ Հարսնացուից: Փեսայի լողանքի, սափրուելու ժամանակ կատարուում էին որոշակի արարողութիւններ, եւ այդ ծէսի ու Հարսնացուի «հալաւ հաղցնելու» սովորութիւնը ինչպէս հայկական միւս դաւառներում, նոյնպէս եւ Գամիրքի հայերի կենցաղում արմատացած երեւոյթ էր: Այսպէս, փեսան լողանքից յետոյ, իր ներքնահագուստը եւ էնթարին հագած, առաջնորդուում էր այն սենեակը, ուր քահանան պէտք է օրհնէր «թագաւորական հալաւը»: Քահանան

օրհնում էր փեսայի սալթան (հերմանէն), դիւարիլը եւ քաւորի սուրը, որոշ վայրերում միաժամանակ նաեւ հարսի հալաւը: Ինչպէս փեսայի հինադէքի, նոյնպէս եւ հալաւ հաղցնելու ժամանակ տեղի էր ունենում անուրզանման մրցում: Ամենաշատ փող նուիրողը արժանանում էր փեսա հաղցնողի պատուին: Ըստ աւանդական սովորութեան, փեսա հաղցնողը հալաւի իւրաքանչիւր կտորը նախքան հաղցնելը երեք անգամ փեսայի դիւի վերեւ շուրջանակի դարձնում էր (այստեղ ակներեւ է փեսայի համար աստուածային երրորդութեան զօրութեան հայցումը), որին փեսաները բոլորը միաբերան երեք անգամ քազաւոր շնորհաւոր էին կոչում: Այնուամենայնիւ, իւրաքանչիւր շրջան ունէր բարեմաղթութիւնների եւ երգերի տարբեր փոփոխակներ: Օրինակ, Հալիս գետի վերին հովտի հայկական գիւղերում՝ պոճոռ, պոճոռ էին կանչում եւ շնորհաւորում էին, քազաւոր վաճառդ շահի ասելով: Իսկ վերին Եփրատի շրջանում, յատկապէս Ակնում, երեք անգամ Աստուած շնորհաւոր ընէ բացազանչելով, երգում էին հետեւեալը.

«Ահա բարձր լեռներն ի վար,  
Մեզի բարակ արեւ մըն է ծաքեր  
Ամենուն երդիկն ի վար,  
Մեզի դուռն ի ներս է նառագեր,  
Ամէնդ ի վար եկէք,  
Թագաւորին կապան կապեցէք,  
Լուսնկան աստառ արէք,  
Արեգակն երես ձեւեցէք,  
Ան մուր խոշոր աստղեր,  
Թեւերուն տիկմէ կապեցէք:

Ակնում տեղական սովորութեան համաձայն, երբ տղայի հայրը իր որդու՝ փեսայի դիւին քազ (ծոպաւոր Ֆէս) էր դնում, այդ վայրկեանից միայն նա քազաւոր էր համարւում:

Փեսայի քազաւորական հալաւին յաջորդում էր պարերով ուղեկցող խրախճանքն ու կերուխումը: Փեսան եւ փեսաները, ազապաշի (մոմ-ճի) գլխաւորութեամբ, ընդհանրապէս «Հողալու ջան» երգելով պարում էին հալալը՝ կլոր պարը:

Հոդալու ջան, հոդալու,  
Կոզեր շիրին, մարալո ջան, մարալո,  
Հով, հով, հով ըլլայ,  
Եարս քեմարով ըլլայ,  
Եարիս տունը ծով ըլլայ,  
Թէ գանեմք, գանեմք քոզը հանեմք,  
Չար դուշմանին կոզը հանեմք:

Փեսայ հաղցնելու արարողութեանը յաջորդում էր հացկերոյթը, տեղական բարբառով՝ հաց քափելը, որի աւարտին քեռին կամ քաւորը, որ փեսայ հաղցնողի դերում է դանուել, ըստ սովորութեան, փեսային որպէս նուէր, տալիս էր գոմշի ձագ կամ մի հորթ, ուլ կամ գառ:

Ուումբը դհուլ-դուռնայի նուազակցութեամբ, դէպի փեսային տունն ու-

դեռորուելիս, ճանապարհին անսրայման պէտք է անցներ հարսնացուի տան առջևից եւ փեսընկերները բռնա՛ն կամ ըստ տեղի սովորութեան վաճա՛ռ, վաճա՛ռ ուրախ բացականչութիւններով հասնում էին փեսայինց տունը: Այստեղ հարսանեկան խրախճանքը շարունակուում էր մինչեւ ուշ երեկոյ:

Փեսային հաղցնելու արարողութեանը համընթաց աղջկայ տանը տեղի էր ունենում նաեւ հարսնացուն հաղցնելու եւ հնադէքի արարողութիւնը: Վերոյիշեալ արարողութիւնների համար, թէեւ Գամիրքի բուրբ շրջաններում մի ընդհանրութիւն դոյութիւն ունէր, սակայն իւրաքանչիւր շրջան ունէր նաեւ իր տեղական առանձնայատկութիւնները: Օրինակ, Հալիսի վերին հովտում, Սեբաստիայի շրջակայ հայ դիւղերում, ինչպէս ասուեց, երբ մակարբաշին կամ մոմճին զնում էր «փեսան հաղցնելու», միւս կողմից ընթերթը (քաւորկին), մի խումբ հարս ու աղջիկներով, իր հերթին զնում էր հարսնացուին հաղցնելու:

Հարսնեւորները (հենկէ) դհուղուռնայի նուագակցութեամբ, թափորի առջևից զնում էր մի պատանի, աւանդական խոնչան(1) երկու ձեռներով դլխից վեր բռնած: Ուումբը, ճանապարհին երգելով եւ մէջընդմէջ դալանի եէ՛յ կանչելով, առաջանում էր դէպի աղջկայ տունը:

Հարսնետան դրան առաջ երկու հարսնաքոյրեր հարսնեւորներին բարի եկաք մաղթելով, ներս էին հրամցնում, որին քաւորկինը պատասխանում էր՝ աչքերնիդ, աչքերնիս լոյս:

Ի պատիւ հարսնեւորների, հարսնաքոյրերը ձեռքերին մէկ-մէկ կարմիր թաշկինակ, թեւանցուկ, դհուղուռնայի նուագակցութեամբ պարում էին եւ քամգարա երգում:

Լէ, լէ, լէ, լէ, քամգարա,  
Լէ, լէ, լէ, լէ, քամգարա  
Աղջիկ դուն ինձ եար կըլնե՞ս,  
Դարդերուս դարման կըլնե՞ս,  
Լէ, լէ, լէ, լէ, քամգարա (կրկնել)  
Ելնեմք երթանք քամգարա,  
Ինչ որ կ'ուզես հարկ կայ,  
Լէ, լէ, լէ, լէ, քամգարա (կրկնել)  
Աղջիկ մագերդ քուլս է,  
Ես ինչ բարուքի մուլս է,  
Լէ, լէ, լէ, լէ, քամգարա (կրկնել)  
Մուլս հանողը բռնանայ,  
Ինձի քեզի մռնանայ:

Հարսնեւորների պատասխան պարից յետոյ, քաւորկինը խնդրում էր, որ հարսնացուն ներկայացուի: Հարսնացուն գլխին վարդադոյն մի քոյ դըրցած, հարսնաքոյրերի կողմից թեւանցուկ՝ բերում էր թոնրաթումբի (սացուկ) վրայ: Քաւորկինը նրա քոյը վերցնելով, փոխարէնը գլխին ձգում էր փեսային կողմից ուղարկուած փլփլաւոր հիմդիմ, իսկ հարսի եղբայրը քոյը դօտին էր կապում, ասելով՝ օխտը ինձի պէս, մէկը՝ քեզի պէս: Մինչդեռ

(1) Սովորաբար լինում էին՝ մրգեր, շաքար, մէկ շիշ օղի, մետաքսայ կարմիր բոգ եւ հիմա:



դհուլ-դուռնան թոնրաթմբի մօտ նուազում էր շէն անամի(1) տխուր մելու-  
դիան, հարսնացուն քաւորկնոջ, հարսնաքոյրերի եւ հարսնեւորների ուղեկ-  
ցութեամբ երգելով առաջնորդւում էր լողարան:

Հարսնացուին լողացնելու ամբողջ ընթացքում, հարսնաքոյրերը եր-  
գելով, նրա դովքն էին հիւսում, իսկ լողանքի վերջում, ըստ աւանդական  
սովորութեան, հարսնացուի ուսերից ցած վարդաշուր էին շաղ տալիս(2),  
որի բուրմունքը մնում էր առազաստից յետոյ մինչեւ առաջին բաղնիքը,  
Հարսնաքոյրերը, տարոսի համար, նոյն վարդաշուրից խմում էին մէկ-մէկ  
ուճալ:

Այսպէս, մինչեւ ամուսնական պսակը կատարւում էին մի շարք ծէսեր  
եւ արարողութիւններ, որոնք հանդիսանում էին նոր ամուսնիին բախտաւո-  
րեցնելու նշանակութիւն ունեցող հմայամոգական դործողութիւնների վե-  
րապրուկներ: Ծիսական այդ արարողութիւնները Գամիրքի բոլոր շրջաննե-  
րում յար եւ նման չէին: Օրինակ, Հալիսի միջին հոսանքի հայկական դիւղե-  
րում՝ Կեմերեկում՝ եւ Կիւրինում դրա շրջակայ դիւղերում հարսնացուին  
հնայելու արարողութեանը տղամարդիկ չէին մասնակցում, մինչդեռ Ակնա  
շրջանում դա հանդիսանում էր երկու սեռերի համար ամենախորհրդաւոր եւ  
միաժամանակ հաճելի ժամանցներից մէկը: Կեմերեկի դիւղերում հարսնա-  
ցուն լողանքից յետոյ, հարսանեկան հագուստները հազցրած, գլխին կարմիր  
փլիլաւոր քող, հարսնաքոյրերի կողմից առաջնորդւում էր թոնրաթմբի վը-  
րայ, յատուկ պատրաստուած տեղը: Ըստ սովորութեան, հարսնացուն երեք  
անգամ նստեցնել կանգնեցնելուց յետոյ, նստեցւում էր նախշուած բազմոցով  
մի աթոռակի վրայ, այնպէս որ նա իր դէրքով թոնրաթմբի վրայ նստողնե-  
րից ամենից բարձրն էր լինում: Քաւորկինը հարսնացուի ափի մէջ մի պլա-  
դունց օրհնուած հինայի փողուց խիւս պատրաստելով, դրա մէջ գետեղում էր  
մի դրամ, եւ կանչում մի պատանու, որպէսզի հարսնացուի ափի միջից դը-  
րամը վերցնի: Տղայ երախայի միջոցով հարսի ափի միջից դրամը վերցնելու  
եւ հարսնեղբոր կողմից մէջքի գօտին կապելու դործողութեամբ, հարսնացուի  
համար հայցւում էր սերունդը շարունակող արու զաւակներով բեղմնաւոր  
կեանք:

Հարսնեւորները օրհնուած հինայից մի մաս վերցնելով, վերադառնում  
էին տղայի տունը՝ փեսան հինայելու համար: Փեսայի ձեռքի հնայման հա-  
մար սովորաբար աճուրդ էր բացւում: Այդ պատիւը մնում էր ընդհանրապէս  
ամենաչափազուտ արաջարկողին, որի ժամանակ յատկապէս փեսաներին  
մրցման էին հրաւիրում՝ իրենց ծանօթների ձեռքը նոյնպէս հնայելու համար:

Հալիս գետի ստորին հովտի հայ դիւղերում, հինադրեքի օրը՝ Շարաթ  
դիշերը տեղի էր ունենում նաեւ հիմա ասկրելու արարողութիւնը: Փեսան կէս  
գիշերի մօտերը, մոմճիի (խաչեղբոր) ընկերակցութեամբ դնում էր հարսնա-

(1) Ծէն անամ, ժողովրդական բանահիւսութիւնը Հալիսի ստորին հովտի հայ գիւղե-  
րում՝ Կեմերեկից-Կեսարիա երգում էր թուրքերէն, իսկ վերին հովտում, նոյն բովանդա-  
կութեամբ, բայց հայերէն:

Ծէն մայրս, չէն մայրս տունդ չէն մնայ,  
Ես գնում եմ ահա, տունդ չէն մնայ:

(2) Հարսնացուի մարմնի վրայ վարդաքրի շաղ տալը ունէր իր սիմուլիկ Ոշանակու-  
թիւնը, այսինքն՝ նոր ամուսնը կեանքը պէտք է դիմաւորեն բուրումնաւոր վարդի քաղց-  
րութեամբ:

տունը: Հարսնացուն կանխապէս որոշուած մի վայրում իր ամուսնացած քրոջ կամ եղբոր կնոջ հետ սպասում էր փեսայի դալստեան, որտեղ փեսան եւ հարսնացուն առանձնանալով տան մի անկիւնում, ողջադուրում էին: Փեսան համբուրելով հարսնացուի աչքերը, իր հնայուած ձեռքը նրան էր երկարում, որ հիանալի թաշկինակը քանդի եւ ասում էր. էոջի սէքս դուն իս, իսկ հարսնացուն համբուրելով իր նշանածի ձեռքը, թաշկինակը քանդում եւ պատասխանում էր՝ էոջին եղ որ աչքս պղտոր բանամ, քեզ պըս որ տեսնամ:

Մոմճին եւ հարսնաքոյրը, որ սպասում էին դռանը, կատակով իմացնում էին, որ երկայն եղաւ, որի վրայ փեսան ու հարսնացուն անմիջապէս սենեակից դուրս էին դալիս: Հարսնաքոյրը շնորհաւորելով նրանց, ասում էր՝ մէկ բարձի վրայ ծերամաք, երկուստեք բարեմաղթութիւններից յետոյ փեսան եւ մոմճին վերադառնում էին հարսնըբատուն, որտեղ խրախճանքը շարունակուում էր մինչեւ առաւօտ:

Պէտք է ենթադրել, որ հիման ասկրելու ծխական արարողութիւնը նախքան կուսուրեան սաւանի ընդհանուրի առաջ ցուցադրութիւնը ուրիշ բան չէր նշանակում, եթէ ոչ հարս ու փեսայի կոյս լինելու խոստովանութիւնը, փոխադարձ սիրոյ եւ հաւատարմութեան երգում:

Ակնում հարսի հինադէքի խրախճանքին, ըստ ընդունուած սովորութեան, մասնակցում էին եւ տղամարդիկ եւ կանայք: Քաւորը եւ քաւորկինը, բռնած բլբլեղեայ նախշուն մի ափսէ, որի մէջ բրզածեւ դիզուած էր լինում հինան, կենտրոնում թաղուած սպիրալածեւ ոլորուած մոմի խորձ, առաջանում էին դէպի սրահի կենտրոնը: Նուազի հետ դեռատի հարսներ եւ աղջիկներ, քաւորի եւ քաւորկինոջ շուրջը բոլորուած, սկսում էին երգել:

Աս հիման ան հիման չէ  
Ղրկադն ալ ինչ աղաւար մանչ է:

Սրախճանքի ընթացքում հարսնացուն հարսնաքոյրերի կողմից ներքնասենեակից առաջնորդուում էր սրահի կենտրոնը եւ մի բարձի վրայ նստեցնելով, սկսում էին հինայելու արարողութիւնը:

Մինչ հարսնացուի մատները հնայում էին, հարսնաքոյրերը երգում էին.

Ոսկի ամանի մէջ հիմաս շաղեցին,  
Արծաթէ սանտրով խոպապս քակեցին...

Հինադէքից յետոյ սկսում էր դէմ առ դէմ թեւպարը, ուր պարող գոյգերը պատշաճութեան կարգով այնպէս էին իրար յաջորդում ու փոփոխուում, որ հարսնացուն, անկախ իր կամքից, դժնում էր իր փեսացուի դէմ:

Այդ միջոցին հանդիսականների կեցցէները ու ծափերի տարափի տակ հռչակում էր նրանց ընտանեցումը:

Այսպէս, հայկական հարսանեկան բոլոր հին ծէսերն ու արարողութիւնները դեռեւս պահպանում էին Գամիրքի բոլոր շրջաններում, արարողութիւնների որոշ կողմերով տարբերուելով իրարից: Օրինակ, դիւզերում, հարսնացուի հինադէքից յետոյ, հարսնեւորները նախքան փեսայի տուն վերադառնալը հանդիսատես էին լինում օժիտի ցուցադրութեանը, այլ խօսքով՝ կանչին:

Հարսնաքոյրերը օժիտի սնտուկը բերում էին քուրսիի մօտ: Նրանցից ամենատարեցը, որը սովորաբար լինում էր հարսնացուի մօր կողմի ազգա-

կանները մէկը, բաց անելով սնտուկը, սկսում էր բացականչութեամբ մի առ մի ցուցադրել ինչպէս աղջկայ Հարսանեկան շորերը, նոյնպէս եւ Հարսնացուի ստացած եւ տանելիք նուէրները: Ընթեմերէն թռփ մը դուտմի, շէն մնայ: Շէն մնայ, ձայնակցում էին Հարսնաքոյրերը եւ այսպէս բոլոր նուիրատուների հասցէին շէն մնայ կանչելով, ցուցադրում էր օժիտը<sup>(1)</sup>: Օժիտ տեսից յետոյ Հարսնեւորները, ըստ սովորութեան, տարոսը տունը տանելու համար չէին մոռանում նաեւ Հարսնատնից դողանալու զանազան իրեր:

Հարսնաուր, որ ամուսնական հանդէսի երրորդ արարուածն էր հանդիսանում, հմայա-մոզական արարողութիւնների, ծէսերի վերապրուկներով ամենահարուստն էր: Հարսնաուր Գամիրքի բոլոր շրջանների համար, մի ընդհանրութիւն ունենալով հանդերձ, ունէր նաեւ տեղական առանձնայատկութիւններ, կատարման ձեւերի բազմաղանութիւն: Այդ ամէնը շրջանից շրջան տարբերում էր, յատկապէս, երբ Հարսնաուր կատարում էր մի գիւղից միւսը:

Հարսանիքը, երբ տեղի էր ունենում միեւնոյն վայրում, Հարսնաուր (եւկէ) կազմի մէջ մտնում էին փեսան եւ մակարները, քաւորը եւ քաւորիկինը, ինչպէս նաեւ չափահաս ամուրի ու նշանուած աղջիկներ եւ նորահարսեր: Առաջինները գլուխներն ու դէմքերը բաց, իսկ վերջինները՝ չարով ծածկուած: Մինչդեռ մի գիւղից միւսը Հարսնաուրն մասնակցում էին մեծ մասով տղամարդիկ: Այս վերջին դէպքում Հարսնեւորները, որ ձիաւոր էին լինում, գիւղին մօտեցած, օդի մէջ հրացանների համազարկերով գիւղի վրայ յարձակում էին գործում, իսկ գիւղի գլխաւոր մուտքը տեղացի երիտասարդների կողմից պարաններով փակուած էր լինում: Ճանապարհ տալու համար պահանջում էր աւանդական նուէրը՝ եռլ: Ազատ մուտք էր տրւում այն ժամանակ, երբ քաւորի կողմից տրւում էր պահանջուած նուէրը:

Հարսնեւորների թափօրը, քաւորի եւ մակարբաշի գլխաւորութեամբ, յաղթական տեսքով մտնում էր գիւղը եւ մինչեւ Հարսնետունը հասնելը դճուղունայի նուազակցութեամբ, ուրախութեան բացականչութիւններով ու համազարկերը թնդացնում էին ամբողջ գիւղը: Հարսնետան մօտեքը հասնելով, մակարբաշին (խաչեղբայրը) բոճոճ, բոճոճ դողալով արագընթաց ձիարշաւով Հարսնետան դռան առաջից, կրկին ետ էր դառնում, դիմաւորելու համար Հարսնեւորներին: Այստեղ էլ Հարսնետան մուտքն էր փակ լինում, բայց այս անգամ տան դռները փակում էին ոչ թէ համայնքի երիտասարդութեան, այլ նոյն գերդաստանի մօտիկ աղազականների կողմից:

Քաւորը այստեղ եւս դրամական մի նուէր տալով կամ եռլմտայրմ աւելով, դռները բացել էր տալիս: Բակում Հարսնեւորներին դիմաւորում էին աղջկայ ծնողները, մօտակայ բարեկամները, Հարսնաքոյրերը: Խաղացում էր աւանդական խոնչան, որին յաջորդում էր տղամարդկանց չուրջպարը (հա-

(1) Գամիրքի գիւղական վայրերի օժիտի մէջ սովորաբար լինում էր 10 շապիկ, 10 շապրակներ, 10 գոգնոց (երկու տեսակ, մի մասը՝ բարակ, մուրր, միւս մասը՝ սովորական), մի ալկարմիք գոգնոց չուխայից (մահուդից), մի էքսարի կեսարական ալմաշից, արծաթոսկեքէլ ասեղնագործուած սալքա, մէկ կամ երկու կիւրիմի կամ, ինչպէս կոչուում է՝ բոզջալար, բրդից հիւսուած նախշում գուլպաներ, օգեր, մատանիներ եւ անպայման մի արծաթ ցօտի: Տանելիք մուէրների մէջ կեսրոջ համար լինում էր մի գոգնոց, մէկ նախշում բաճօղակ, մի Քաշկիմակ, կեսարի համար՝ շապիկ, վարտիկ, մի գոյգ նախշում գուլպայ, անձնոց (երեսարբիչ), տագրերից իւրաքանչիւրին՝ մէկ շապիկ եւայլն:

լայ), իսկ կանայք դէմ առ դէմ զոյգ-զոյգ պարում էին շատուարը կամ երկ-  
երկու հոգով թեւանցուկ՝ քամգարան:

Պարերից յետոյ հարսնեւոր տղամարդիկ հիւրասիրւում էին օդայում,  
իսկ կանայք՝ թոնրատանը: Օդայում աղջկայ կողմը հարսնեւոր տղամարդ-  
կանց հետ մրցում էր հանելուկներով, շուտասելիքներով, աշուղնամեններով  
եւ որոշ չարչարանքներով, մինչդեռ թոնրատանը թաքստոցից գտնուած հարս-  
նացուի գլուխը յարւարում էին, պատրաստում տանելու:

Հարսի յարգարանքը աւարտելուց յետոյ դհուլ-զուռնան սկսում էր  
նուազել յայտնի տանում են մեղամաղձոտ եղանակը: Աղջիկը իր վերջին հրա-  
ժեշտի ժամանակ, յուզուած, ողջադուրւում էր ծնողների հետ: Մայրը, աղջ-  
կայ գովքն անելով, լալազին երգ էր յօրինում՝

Եկուր նայեմ, եավրուս եկուր,  
Մանչ կարծեցի աղջիկ է եղեր,  
Ուրիշի աղջիկը ըլլէիր  
Իմ մօտս հարս ըլլէիր:  
Տունիս համը աղջիկս,  
Աղամանիմ աղը աղջիկս,  
Մերդ քողեր կ'իյաս կօ,  
Մեծ տունիմ սիւսը աղջիկս:

Հարսնեւոր կանայք աղջկայ լեզուով պատասխան խաղ էին ասում.

Մի լար մայրիկ, մի լար մայրիկ,  
Ինձ մի լացներ,  
Եկած դաւաւ-գուռնաները  
Ետ մի դարձներ:

Հարսնացուն հրաժեշտի պահին համբուրում էր իր մօրը եւ տարեց կա-  
նանց ձեռները, նոյնն էր անում նաեւ փեսան: Զոքանչ մայրը, փեսային համ-  
բուրելով, ասում էր՝ խերը տեսնես եւ նրա վզին կապում էր փեսայի աւան-  
դական կարմիր ալ-ֆէֆիյէն (ուսկապը), իսկ փեսաբանտիկի (հարսնեղբօր)  
վզին՝ մի աւելի փոքրը:

Հարսնաքոյրերը հարսնացուի թեւերը մտած, առաջնորդում էին մեծ  
տան դռան առաջ, որտեղ շարքով սպասում էին աղջկայ հայրը, եղբայրները,  
հօրեղբայրները, քեռիները եւ ուրիշ մօտիկ բարեկամներ: Հարսնացուն համ-  
բուրում էր նրանց իւրաքանչիւրի ձեռքը, որոնք զրամական նուէրներ՝ խարչ-  
լըխ (ծախսի փող) էին տալիս իրենց աղջկան: Այդպէս նրան թեւանցուկ արած  
առաջնորդում էին մինչեւ բակի դռան առաջ եւ խերը տեսնէ՛ք ասելով, յանձ-  
նում հարսնառի դեկավարին:

Քաւորը, մակարբաշին ընդունելով հարսին, նստեցնում էին զարդա-  
րուած ձիւղ վրայ եւ առաջնորդում եկեղեցի: Հարսանեկան թափօրի առջեւից  
գնում էր դհուլ-զուռնան, հարսի մի կողմից քայլում էին փեսան, փեսաման-  
տիկը եւ քաւորը, միւս կողմից ազապ բաշին (մոմձի) եւ ազապները (մակար-  
ներ): Հարսի խմբի ետեւից համբաքայլ քայլում էր մակարների արհեստակաւ  
ուղտը, իսկ հարսնեւոր կանայք, քաւորկնոջ գլխաւորութեամբ գնում էին  
թափօրի ետեւից: Մինչդեռ երկու մակարներ, իբր թէ արար՝ դէմքերը սեւով  
մրոտած, ալլանդակ հագուստներով եւ մատներին բոժոժներ, որպէս խափշիկ

վհուկներ, վուհ, վուհ կանչերով, թափօրի երկու կողմերից ետ ու առաջ էին վազվզում, եւ բոժոժները շղկրտացնում. վանելու համար աներեւոյթ չարքերին, որպէսզի ամուսնացողներին չվնասեն:

Հարսանեկան թափօրը հասնում էր եկեղեցու դռան առաջ, որտեղ մի-այն այդ ձայները դադարում էին: Հարսին ցած էին իջեցնում ձիուց, մէկ թեւից քաւորկինը, միւսից փեսան բռնած, քաւորը եւ փեսամանտիկը առաջանում էին մինչեւ եկեղեցու դասի առաջ: Այստեղից պսակող քահանան հարս ու փեսին եւ փեսամանտիկին առաջնորդելով դասից ներս, հասցնում էր սեղանի առաջ եւ այստեղ հարս ու փեսին կանգնեցնում իրար դիմաց, գլուխդլխի եւ նարօտը կապելով նրանց գլուխներին, խորհրդաւոր հանգոյցներ էր անում: Իսկ փեսամանտիկը, այսինքն՝ սաղտուջը նրանց գլխին բռնում էր խաչը: Արարկիրի շրջանում պսակի արարողութեան ժամանակ քաւորը հարս ու փեսի գլխավերեւ բռնում էր նաեւ մի կեռ սուր<sup>(1)</sup>: Երբ քահանան սկսում էր պսակի արարողութիւնը, քաւորը եւ քաւորկինը, որպէսզի չարքերը փեսին չկապեն... իրենց գրպաններում բացուած փոքր կողպէջք եւ կամ դանակը փակում էին, չժողանալով սակայն վերստին բաց անել նախքան առագաստի դիշերը:

Պսակի արարողութիւնից յետոյ հարսանեկան թափօրը վերադառնում էր հարսանեկան տունը, նախօրօք որոշուած ճանապարհով, նոյն կարգով ու ձեւով: Այդ ճանապարհը պէտք է անցնէր ինչպէս աղջկայ ծնողներին, նոյնպէս եւ քաւորի ու ծանօթ բարեկամների տներին առաջից: Սա հարսանեկան անխախտ ծէսերից մէկն էր համարւում, որի ընթացքին ազգականները նուէր էին տալիս հարսին:

Գամիւրքի գլուղական վայրերում, ընդունուած սովորութեան համաձայն, հարսանեկան թափօրի ժամանակ աղջկայ հայրը, որպէս նուէր, տալիս էր մի անասուն (կով, երինջ, հորթ, ոչխար կամ դառնուկ), իսկ տղայի ազգականները, իրենց հերթին, կերպասեղէն եւ չթեղէն նուէրներով զարդարում էին հարսի երկու թեւերը եւ ձիու վրիզը: Մինչդեռ քաղաքային վայրերում, բարեկամներն ու ծանօթները հարսնեւորներին ճանապարհին ըմպելիքի սեղան էին հանում, իսկ շրջակայ գլուղերում, հարսի գլխին խնձոր եւ բոով մանր դրամ էին տեղում:

Հարսանեկան թափօրը, երբ հասնում էր իր վերջին հանգրուանը, այսինքն՝ հարսնատունը եւ կանգ առնում դռան առաջ, քաւորը խօսքը տղայի ծնողներին ուղղելով, ասում էր՝ հարսը ձիուց վար չի իջնում, իր նուէրն է (եւլը) պահանջում:

Կեսրայրը համաձայն իր նիւթական կարողութեան եւ զբաղմունքին, խոստանում էր կաթնատու մի անասուն կամ մի զարդ-ոսկի, կեսուրը՝ իր հարսնութեան ապարանջանը, մատանին կամ արծաթ գօտին: Հարսը դեռ ձիու վրայ, տան բոլոր անդամները՝ ամենատարեցներից մինչեւ դեռտիները, միասին պարում էին քաղաւրթի ու քագուհու առաջ: Այսպիսով, տնեցիները իրենց հաւանութիւնն ու ուրախութիւնն էին արտայայտում տան մի նոր անդամի (հարսի) աւելացման համար:

Կեսուրը տնեցիների զգացումներին որպէս թարգման, հարս ու փեսին ուղղուած խաղ էր ասում:

(1) Տե՛ս «Ոսկեգետակ», տարեգիրք, Բէյրութ, Բ. տարի, 1946, էջ 203:

Երկու ֆիտան ժամուց կու գան,  
Առնենք, ելլանք վերի օդան,  
Նագ ըրէ, նագդ վերցնեմ,  
Ալադու(1) շաքար կերցնեմ:

Հարսը, երբ կեսրոջ հրաւերի վրայ ձիուց վայր էր իջնում, նախքան տան շէմից ներս մտնելը, կատարուում էին նոյնպէս ծիսական որոշ արարողութիւններ: Օրինակ, մակարներից մէկը, որպէս առատութեան խորհրդանիշ, տան կտուրից վայր էր նետում մրդեղէնով, շաքարեղէնով լեցուն մի բոլակ, որը փչրուում էր հարսի ոտներէ առաջ: Տան օջախի պաշտպան ոգիների օգնութիւնը հայցելու համար, հարս ու փեսի ոտների առաջ ընդհանրապէս մի աքաղաղ էին զոհաբերում, իսկ Արարկիւրում մակարները եղջիւրներին վառած մոմերով ու վզին կարմիր ժապակէնով զարդարուած մի խոյ, իրենց աւետի վրայ քազաւար ու քազուհու առաջ պարելուց յետոյ, գոհում էին: Այսպէս էւրաքանչիւր շրջան, ըստ իր տեղական սովորութեան եւ իւրաքանչիւր տնտեսութիւն, ըստ իր նիւթական կարողութեան, մատաղ էր անում մի աքլոր կամ մի խոյ: Հալիսի միջին հովտի գիւղերում տան շէմքի վրայ, հարսին մատուցուում էր մեղր ու կարադով եղանակը, որպէս խորհրդանիշ ընտանիքի անդամների միջեւ բարի յարաբերութեան ու համերաշխութեան: Հարսը մատը թաթախելով եղանուշին, խաչանշան էր անում գոան սեմի ճակատին, իսկ եղանուշի սնակը որպէս տարաւ տալիս էր մակարբաշուն (ազապաշուն), որի ձեռքից իսկոյն խլում էին ամուրի երիտասարդները՝ տարոսին աւելի շուտ արժանանալու համար:

Տան շէմքի վրայ, կեսուրը համբուրելով հարսին ու իր տղային, ասում էր. «Հարսս, ոտքդ երջանկաբեր, գլուխդ բախտաւոր լինի»: Մինչդեռ Ակնում, հարսն ու փեսան տան շէմքից ներս մտնելու ժամանակ հարսի կեսուրը եւ կնքամայրը (քաւորկինը), իսկ Արարկիւրում՝ տղայի հայրը եւ մայրը, կամ, հօր բացակայութեան դէպքում, տղայի մայրը եւ քաւորը իրենց թեւերով կազմած կամարի տակից անց էին կացնում հարս ու փեսին՝ ի նշան հնազանդութեան:

Ուշադրութեան արժանի են նոյնպէս տան շէմից ներս կատարուած ծիսական արարողութիւնները: Կեմերեկում հարսը թոնրաթմբից վեր բարձրանալու ժամանակ, նրա ոտնամանի մէջ ձգուում էր մի դրամ եւ կանչում մի տղայի եւ ոչ աղջկայ, որպէսզի հարսի ոտնամանը հանելով, միջի դրամը առնի, որպէսզի հարսի առջնեկը տղայ լինի: Տղայ զաւակ ուղելու բաղձանքը Գամիրքի, յատկապէս Սեբաստիայի շրջակայ հայ գիւղերում արտայայտուում էր նաեւ մի այլ ձեւով: Տան շէմքից ներս, հարսնետր բազմազաւակ մայրերից մէկը, ձեռքին խնկամանը բռնած, երեք անգամ հարս ու փեսի շուրջը պտոյտ կատարելով, որպէս բարեմաղթանք, փեսային ասում էր՝ օխտը քեզ պէս, մէկը ինձի պէս, իսկ Կեսարիայի շրջակայ գիւղերից էվքերէում, հարսը հազցընելու ժամանակ մի գեռատի տղայ կամ հարսի եղբայրը դօտին կապելով, ասում էր. եօթը տղայ, մէկ աղջիկ:

Հարսը թոնրաթմբի (սաքու) վրայ իր համար նախօրօք պատրաստուած տեղը զրաւելով, ըստ աւանդական սովորութեան, պատին կռթնած, ոտքի վրայ, ձեռքերը կրծքին, մինչեւ երեկոյ պէտք է բարեւ բռնէր: Այդ վայրկեա-

(1) Ալադ տաճկերէն բառ է, նշանակում է գործիք, փոխարեքարքար՝ ունելի:

նից, նա որոշ ժամանակով կորցնելու էր խօսելու իր ազատութիւնը, մինչեւ մայր դառնալը, որպէս յարգանքի նշան, պէտք էր մուկ-կեմար եւ ճաշելու ժամանակ բերանի առաջ թաշկինակ բռնէր:

Պսակի առաջին օրը, մինչեւ երեկոյ տեւող խրախճանքներից յետոյ, երբ աղջկայ կողմի խնամքները մեկնում էին, նրանց հետեւում էին նաեւ փեսայի հիւրերը, իսկ մնացողները՝ փեսան իր ընկերներով եւ հարսը հարսնաքոյրերով, առանձին սենեակներում գիշերում էին, հանգստանում: Միւս օրը առաւօտեան վերսկսւում էր հարսանեկան ուրախութիւնն ու կերութեամբ, որը, ըստ սովորութեան, կատարւում էր աւելի նեղ մի շրջանակում: Առաւօտեան հացկերոյթի դիւաւոր ճաշը լինում էր խաշը կամ, ինչպէս Գամիրքում ասում են, փաշան, որի պատճառով այդ օրը, այսինքն՝ նախքան առազաստը, կոչւում էր խաշի կամ փաշայի օր:

Առազաստից առաջ, երեկոյեան տեղի էր ունենում նարոտի քանդումը: Տաներէց քահանան քաւորի, քաւորկնոջ, խաչեղբօր, հարսնեղբօր, տղայի ծնողների եւ նրանց մօտակայ բարեկամների ու ազգականների նեղ շրջանակում, հարս ու փեսային գլուխ-գլխի դնելով, օրհնում է նարոտը եւ ապա քանդում այն հանգոյցը, որ կապել էր պսակի արարողութեան ժամանակ: Իսկ քաւորը եւ քաւորկինը իրենց հերթին վերստին բաց էին անում այն դանակը կամ փոքր կողպէքը, որ փակել էին պսակադրութեան ժամանակ, որպէսզի փեսան կապուած չմնայ:

Ընտանիքի ծոցում այս նոր անդամի՝ հարսի մուտքը սրբազործելու համար քահանան մի բաժակ կարմիր դիւնի օրհնելուց յետոյ, խմեցնում էր նախ հարս ու փեսին եւ ապա նոյն բաժակից մէկ-մէկ ումպ էլ՝ բոլոր ներկաներին, իբրեւ արիւնակից դարձնելու, տոհմադրման խորհրդանիշ:

Գամիրքի որոշ շրջաններում, յատկապէս Կեմերեկից Կեսարիա, նարոտի քանդումից յետոյ, նախքան առազաստը, տեղի էր ունենում հարսի պարը: Ազգական կանանց նեղ շրջանակում, հարսնեքոյրերից մէկը տէֆը ձեռին Հարսա խրատական երգի եղանակով, պարել էր տալիս հարսին՝ ձեռքերին բռնած երկու փոքր հայեկիներով: Դա հարսի աղջկութեան վերջին պարն էր համարւում նախքան առազաստ մտնելը: Այդ պարի ժամանակ, հարսի պարտականութիւնները յիշեցւում էին երգի բառերով՝ ամուսնուց անբաժան, լեզուն անուշ, տան գործերով զբաղուած, հլու հարսս եւայլն:

Մինչ հարսի պարը, տեղի էր ունենում փեսաւ առեւանգումը: Նախքան առազաստը, մակարները փեսային գողանում էին եւ ազատ թողնում այն ժամանակ միայն, երբ քաւորը խոստանում էր մի խրախճանք կազմակերպել: Փեսայի առեւանգումը տղայի ընկերների կողմից, թէեւ կատարւում էր որպէս իմաստը կորցրած մի սովորութիւն, այնուամենայնիւ, կարելի է ենթադրել, որ դա մի մնացուկ է տոհմական-համայնական հասարակարգի, որի ժամանակ տոհմակից երիտասարդները որոշ իրաւունք ունէին ուրիշ տոհմից առեւանգուած աղջկայ վրայ, մի իրաւունք, որը մեր օրերում փոխարկուել է նուէրի դանձմամբ:

Գամիրքի, յատկապէս Կեմերէկ գիւղաքաղաքում նախքան հարս ու փեսային առանձնացնելը, նրանց խորհրդատուները՝ ազգաբաշխի փեսին, իսկ հարսնաքոյրը հարսին գոց սնդուկի այլաբանական առակով բացատրում էին եեանքի խորհուրդը:

Առազաստի յաջորդ առաւօտեան տեղի էր ունենում հարսի ծնողներին



աչքալույս տալու երթը : Տղայի մայրը , քաւորկինը եւ մօտիկ աղջական տարեց կանայք կուտաւթեան սաւանը կարմիր ժապաւէններով զարդարած , մի սակաւի մէջ դրած , վրան էլ մի խնձոր դնում էին աղջկայ ծնողներին շնորհաւորելու : Աղջկայ կուտաւթեան պահանջը կենցաղում արմատացել է հաւանաբար մասնաւոր սեփականութեան ու մենամուսնութեան ծագման համընթաց եւ Ֆէոդալական իրաւակարգում , որը սրբազործել էր եկեղեցին :

Գամիրքի դիւղական վայրերում , ինչպէս նշուեց , մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը հայ նահապետական ընտանիքը դեռեւս քայքայուած էր բոլորովին : Հին տոհմային կարգը թէեւ փոխարինուել էր հասարակական նոր յարաբերութիւններով , այնուամենայնիւ , հնի մնացուկները ամբողջովին չէին անհետացել նոյնիսկ քաղաքային վայրերում : Իրենց հիմքից կտրուած այդ հմայա-մոգական գործողութիւնները թէեւ առանց որեւէ ատրիբուտի , այնուամենայնիւ , որպէս ծիսական վերապրուկ , դեռեւս պահպանուած էին ժողովրդի կենցաղում :

Այս բոլորը վկայում են այն մասին , որ ինչպէս ամենուրեք , այնպէս եւ հայ ժողովրդի եւ նրա հարազատ մասը կազմող գամիրքահայերի հոգեւոր մշակոյթում որոշակի տեղ են զբաւել վերացական-հոգեպաշտական հայեացքները եւ տոհմային աշխարհայեացքի ու նրանից ծագած բարքերի ու ծէսերի հազարամեայ ազդեցութիւնն այնքան զօրաւոր է եղել , որ նոր ժամանակներում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական զգալի փոփոխութիւններից յետոյ էլ պահպանուել էին որպէս վերապրուկ , յաճախ իմաստը կորցրած ու կիրառողները կողմից անբացատրելի :

#### Գ.— ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԵՒ ԴՐԱՑԻԱԿԱՆ ՅԱԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ազգակցական եւ դրացիական յարաբերութիւնները , յատկապէս Գամիրքի հայկական գիւղերում , դեռեւս մինչեւ 20-րդ դարի սկիզբները իրենց վրայ կրում էին հին աւանդական սովորոյթների դրոշմը : Դա հասկանալի է , որովհետեւ հին գիւղը հին աւանդական սովորոյթների լաւագոյն պահպանողն է հանդիսանում :

Ինչպէս յայտնի է , մինչեւ 19-րդ դարի 50-ական թուականները Արեւելքում ընդհանրացած հողօգտագործման իրաւունքով Արեւմտեան Հայաստանում հողը դրուած էր դիւղական համայնքի տնօրինութեան տակ : Իւրաքանչիւր գիւղ ունէր իր հաւտաւտլամէն՝ սահմանադիրը , որի մէջ նշանակում էին գիւղին պատկանող հողատարութիւնների սահմանները , որոնց մէջ պարփակուած էին դիւղական համայնքի վարելահողերը , մարդադետիւնները , արօտավայրերը : Այս ամէնը դիւղական համայնքի ընդհանուր սեփականութիւնն էր կազմում , իսկ դիւղական համայնքի մէջ մտնող տնտեսութիւնները համայնքի հողերից մշակուած էին այնչափ , որչափ հնարաւորութիւն եւ միջոց ունէին եւ մշակուած հողը պահում էին իրենց ձեռքում որպէս հագգը-գարաբով տրուած իրաւունք :

Սակայն , ինչպէս որ թուրքիայում , այնպէս եւ Գամիրքում կային նաեւ թիմարային եւ վանքապատկան գիւղեր կամ ազարակներ , որտեղ սակաւասող գիւղացիները կիրարարութեան (օրթախչիութիւն) կամ վարձակալութեան շատ ծանր պայմաններով հող էին մշակում : Գամիրքի տարբեր շրջաններում , բացի բազմաթիւ անհատ տնտեսութիւններից , որոնք գտնուած էին

վերոյիշեալ պայմաններում, կային եւ թիմարային դիւղեր ու դիւղախմբեր, որոնց մէջ սաստիկ խորացել էր տնտեսական անհաւասարութիւնը:

Գիւղական համայնքում հողօգտագործման հին ձեւը 1858 թուի թաղաւորական յատուկ հրովարտակով, հիմնականում փոփոխութեան են ենթարկուում: Օսմանեան պետութիւնը Ղրիմի պատերազմից յետոյ իր յատկապէս Անդլիային եւ Փրանսիային տրուելէք բաղմապատկուած պարտքերը հետըհետէ մարելու նպատակով, հողային կալուածների անհատական սեփականութիւն՝ քափու է սահմանում: Ուստի մինչ այդ հազգը-գարարի իրաւունքով, իւրաքանչիւր տնտեսութեան մշակած հողը նրա անհատական սեփականութիւնն էր ճանաչուում:

Այսպէս, 19-րդ դարի երկրորդ կէսի սկզբներից սկսած, օսմանեան պետութեան նոր եկամտայարկերը մի կողմից, առեւտրաւաշխատուական կեղեքումները միւս կողմից, աւելի եւս խորացնում էին դիւղի շերտաւորումը: Նահապետական մեծ ընտանիքները սկսում են քայքայուել, հետեւաբար եւ սկսում են առաջանալ որոշ փոփոխութիւնները նաեւ ազգակցական եւ դրացիական հին յարաբերութիւնների մէջ: Այնուամենայնիւ, Գամիրք գաւառի հողօրդակցութեան ճանապարհներից հեռու, մեկուսի ընկած շրջանների դիւղերում, մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը, ազգակցական եւ դրացիական հին սովորոյթները հիմնականում պահպանուում էին, քանի որ այդ վայրերում շուկայական յարաբերութիւնները շատ թոյլ էին ու դեռեւս դերիչխում էր բնատնտեսութիւնը: Ազգակցական յարաբերութիւններն իրենց արտայայտութիւնն էին դտեր, օրինակ, մէկ ազգատոհմի պատկանող արական սեռով ընտանիքների մէկ թաղամասում բնակութիւնն հաստատելու, համատեղ սար բարձրանալու, դրացիների միջեւ փոխօգնութեան, հիւրասիրութեան, իրար պաշտպանելու վրիժառութեան, ինչպէս նաեւ՝ բնութեան արհաւիրքներից դերծ մնալու համար հաւաքական զոհարբութիւնների մատաղների, ուխտադնացութիւնների մէջ:

Գամիրքի Արգէոս (էրճիաս) լեռան ստորոտում դտնուող ձիւճիւն դիւղը կեսարիայի թրքախօս հայկական դիւղերից մէկն էր, ընդամէնը 150—160 ընտանիքով, բնակուած ըստ ազգատոհմերի՝ չորս առանձին թաղերում: Այդ թաղերից իւրաքանչիւրը կոչուում էր տնեալ վայրում բնակուող ազգատոհմի անունով: Օրինակ, Չորդիւք-օղլուլար մահլասի, Պարսամ-օղլուլար մահլասի, Կիւլապ-օղլուլար մահլասի եւ Լեւոն-օղլուլար մահլասի (իմա՝ այսինչի սրդիների թաղ):

Գամիրքի հիւսիս-արեւմտեան կողմը՝ Ալ-դաղի անտառամիջում կար հայկական Չաթ դիւղը, որտեղ միեւնոյն ազգատոհմին օղլուլար մահլասի իմա՝ այսինչի սրդիների առանձին շարքերով, կառուցել էին իրենց տները: Այդ շարքերից իւրաքանչիւրը կոչուում էր թաղի այդ մասում բնակութիւն հաստատած ազգատոհմի անունով: Այսպէս, Վարդապետենք, Դեմիրճենք, Պէին-օղլուենք, Քեչիչ-օղլուենք, Կուլաղոդենք եւ այլն: Պէտք է նշել, որ բացի հեռաւոր շրջանների դիւղերից, քաղաքատիր մեծ աւաններում, նոյնիսկ քաղաքներում կային թաղեր, որոնք կոչուում էին ազգատոհմի անունով: Օրինակ՝ Արաբկիր դիւղաքաղաքում Ալմասեքեանց թաղը, Եկաւենց թաղը, Տէրբեդերենց թաղը, իսկ Սեբաստիա (Սաղ) քաղաքում՝ Պլեճենց թաղը, Թայքեսենենց թաղը եւ այլն: Որոշ թաղեր էլ, թէեւ ազգատոհմի անունով էին կոչուում, բայց արդէն կորցրել էին իրենց ազգակցական կցաթաղի նախկին յատկանիշները: Մինչդեռ հեռաւոր շրջանների դիւղերում, կցաթաղերը ոչ

միայն պահում էին իրենց ազգատոհմի անունը, այլև ազգակից դրացիները թէև տնտեսապես ինքնուրոյն էին եւ առանձին տներում էին ապրում, սակայն, ինչպէս ընդունուած էր շատ հայաբնակ նահանգներում, դեռեւս իրար մէջ պահպանում էին նոյնիսկ հաղորդակցութեան հին միջոցները: Օրինակ, մէկ տնից միւսը գոյութիւն ունէին պատերի մէջ բացուած ակնատներ, Գամիրքի բարբառով՝ պատժակեր, ինչպէս նաեւ՝ պարտէզների, բակերի միջեւ խորեր, դռներ եւ դեռնափոր զաղտնի անցքեր: Առաջինի միջոցով, եթէ կատարում էր առօրեայ խօսակցական հաղորդակցութիւնը, ապա խորերի, դեռնափոր անցքերի, ներքին դռների միջոցով առանց փողոց դուրս գալու, յատկապէս վտանգի, յարձակման ժամանակ, հեշտացում էր հաւաքական ինքնապաշտպանութեան կազմակերպումը:

Գիւղական համայնքում պահպանում էր նաեւ դրացիների միջեւ հին ականատեան փոխօգնութիւնը (մէջի), որը էլ յայտ էր գալիս յատկապէս դժբախտ դէպքերի առիթով, մանաւանդ համայնքի շահերի համար զոհուած մէկի անօգնական տնտեսութեան արտը հերկելու, ցանելու, հնձելու, փոխադրելու, կալելու եւ ներս առնելու աշխատանքներում: Ուստի եւ փոխօգնութեան կիրառումը սահմանափակում էր վարձու բանուժի կիրառումը: Դրացիների միջեւ տարածուած էր նաեւ կաթ փոխ տալու սովորութիւնը, որպէսզի այդպիսով ամէն մի տնտեսութիւն կարողանար պատրաստել իր ձմեռուայ պաշար կաթնամթերքը՝ պանիր, իւղ, չորթան եւայլն: Փոխօգնութեան այդ ձեւը մեծ նշանակութիւն ունէր յատկապէս սակաւաթիւ կիթան ունեցող լճաւոր ընտանիքի համար:

Հետաքրքրական են նաեւ Գամիրքի առանձին շրջանների որոշ գիւղերում հաւաքական հիւրասիրութեան վերապրուկը, դրա որպէս ցայտուն օրինակ կարելի է նշել Արգէտի շրջանի ձիւձիւն գիւղը: Այստեղ իւրաքանչիւր թաղ ունէր իր հասարակական օրդանը՝ հիւրանոցը, որը սուրբալ ազգակցական թաղի հաւաքական սեփականութիւնն էր հանդիսանում: Իւրաքանչիւր թաղ իր հիւրանոցում ընդունում էր այն անցորդ հիւրերին, որոնք նշանակում էին տուեալ գիւղի քեահիայի (ռայիսի, ռեսի) կողմից: Այսպէս, եթէ հիւրերը նշանակում էին ստանում, որ Կիւլապ օղլուլար թաղի օղայում պէտք է դիչերէին, տուեալ թաղի տնտեսութիւնները, ըստ սովորութեան, հերթապահութեան պայմաններում էին հիւրերի ճաշը, տեղաշոր (անկողինը), ինչպէս նաեւ նրանց անասունների կերը, ձմռան օրերին՝ հիւրանոցի ջեռուցումը: Տուեալ թաղի իւրաքանչիւր տնտեսութիւն ամէն տարի, աչան վերջերին, սայլ-լերով անտառից վառելիքայտ էր փոխադրում եւ դարսում հիւրանոցի դետրայարկի պահեստում: Սակայն Գամիրքի ոչ բոլոր գիւղերում էր պահպանուած հաւաքական հիւրասիրութեան այդ ականդական ձեւը: Կային գիւղեր, ուր հիւրերը ընդունում էին կալուածատէր աղայի կողմից, իսկ կառավարական պաշտօնեաները, հիւրասիրում էին ընդհանրապէս գիւղի քեահայի կողմից: Վերջիններիս հիւրասիրման համար, պարտադիր կարգով գիւղական համայնքը յատկացնում էր, ըստ գիւղի տնտեսութիւնների քանակի, տարեկան 300—400, մինչեւ 500 ղուռուշի մի դումար, իսկ նրանց ձիերի համար դարի, դարման կամ առուսյտ էր հաւաքում կալի վրայ, որը պահ էր տրուում գիւղում յարգուած մի անձնաւորութեան մօտ, կարիքի դէպքում մաս առ մաս վերցնելու համար:

Գիւղական համայնքի, ինչպէս նաեւ ազգակցական կցաթաղերի հին կենցաղի որպէս վերապրուկ, Գամիրքի հայկական գիւղերում դեռեւս պահ-

պանուժ էր աշխատանքային որոշ համագործակցութիւն, ոռոգման առու-  
ների մաքրման, ճանապարհների եւ կամուրջների շինութեան ու վերանորոգ-  
ման գործերից բացի, թաղերում աղբիւր, ջրամբար կամ ջրհոր կառուցելու  
համար :

Ինչպէս յայտնի է, Հայկական բարձրաւանդակի լեռնային պայմաննե-  
րում ջրի հարցը, դարերի ընթացքում յոյժ կարեւոր հարց է հանդիսացել,  
ինչպէս լեռնային մարմանդներում անասնապահութեամբ զբաղուողների,  
նոյնպէս եւ դաշտային վայրերում երկրագործութեամբ զբաղուող բնակչու-  
թեան համար : Ուստի ստեղծուել էին ջրապահեստման եւ ջրաբաշխական բազ-  
մապիսի ձեւեր : Հին ջրապահեստման իւրայատուկ ձեւերի կիրառումը պահ-  
պանուել էր յատկապէս այն վայրերում, ուր բնական պայմանները չեն թոյ-  
լատրել բաւարար թուով աղբիւրների կառուցումը : Օրինակ, Կեսարիայի  
չրջանում խմելու ջրի օգտագործման ձեւը ընդհանրապէս ջրապահեստնային  
էր : Բացի այն, որ մեծահարուստ տնտեսութիւններն ունէին իրենց սեփական  
ջրամբարը, կային նաեւ թաղային ջրապահեստներ, որոնց պատրաստումը եւ  
պարբերական մաքրումը, վերանորոգումը կատարւում էր տուեալ ջրապա-  
հեստը օգտագործող թաղի բնակիչների կողմից :

Կեսարիայի չրջանի հայկական գիւղերում, ջրամբարի հաւաքական  
պատրաստումից եւ միասնաբար օգտագործումից բացի, ազգակից դրացի-  
ների, բարեկամների, ծանօթների կողմից փոխօգնութիւն էր ցոյց տրւում  
բնակարանների շինութեան, ինչպէս նաեւ կտուրների հողը վերափոխելու  
համար յատկապէս սայլերով չարախ փոխադրելու գործում :

Գամիրքի արեւելեան մասում գտնուող Տիվրիկ ականում նոյնպէս վա-  
րող ջրի աղբիւր գոյութիւն չունէր : Ուստի եւ մի քանի դրացիներ, միասնա-  
բար, պատրաստում էին ջրհորի ձեւով կլոր մի ջրամբար, որը տեղական բար-  
բառով կոչւում էր զՂԱԼՁ կամ աւելի փոքրը՝ գէօլ (լիճ), որը աւանի միջից  
հոսող Չաթալ-չայի ջրից գիշերը լցնում էին եւ օգտագործում : Տարեկան  
երկու անգամ էլ միասնաբար կատարում էին ջրհորի տիղմը մաքրելու եւ  
անհրաժեշտութեան դէպքում վերանորոգման աշխատանքները : Կիւրինը հա-  
րուստ էր խմելու ջրով : Ամէն տնտեսութիւն ակի մշտահոս ջրից ունէր իր բա-  
ժինը, բացի Օրէն թաղից, որի բնակիչները կառուցում էին նոյն ձեւով փոքր  
ջրամբար, որը կոչւում էր Կապուզ, բայց, ի տարբերութիւն միւս չրջանների,  
այստեղ ջուրը լցւում էր օրընդմէջ գիշեր ժամանակ եւ ցերեկը օգտագործ-  
ւում :

Ջրամբարի ջուր քաշելու համար, եթէ քաղաքներում եւ քաղաքատիպ  
ականներում օգտագործւում էր դալապ եւ նոյնիսկ ձեռքի ջրհան փոքր մեքե-  
նայ, ապա գիւղերում կիրառւում էր դոյլը, ինչպէս նաեւ դանթարը (լծակով  
ջուր հանելը) : Գամիրքի ինչպէս գիւղերում, նոյնպէս եւ քաղաքներում, բացի  
սեփական եւ հաւաքական ջրամբարներից կային նաեւ աղբիւրներ, որոնք կա-  
ռուցուած էին առանձին գերդաստանների կողմից եւ կրում էին նրանց ար-  
նունը : Բայց ինչպէս աղբիւրների, նոյնպէս եւ ջրամբարի օգտագործումը  
հասարակաց էր :

Յատուկ յիշման արժանի են նաեւ Արգէսի չրջանի ձիւճիւն գիւղի եր-  
կու կողմի սահմանամերձ վայրերում կառուցուած այն խայրէտ-բարեգոր-  
ծական ջրամբարները, որոնք ծառայում էին անցորդներին եւ նրանց անա-  
սուններին ջուր մատակարարելուն : Աւելին, այդ գիւղի արտերի խոպան թող-  
նուած մասում, ջրամբարի մօտ, ամէն տարի երկու օրավար տարածութեան

վրայ դիւղի համայնքի կողմից ցանուծ , մշակուծ էր նաեւ մի խայրէտ պողաբանջարանոց , որտեղից անցորդները մի քանի վարունգ , սեխ կամ ձմերուկ քաղելով հանգստանում էին ջրամբարի ծառերի տակ եւ օրհնանք ու բարի ցանկութիւններ մաղթում գիւղին :

Այդպիսի օրինակելի եւ դեղեցիկ սովորութիւնների առկայութիւնը Գամիրքի հայկական գիւղերում յիշեցնում է հնագոյն անցեալը , երբ տոհմերը իրենց բնակավայրերի սահմաններու , կենսամթերքներ էին թողնում այլ տոհմերի համար :

Տոհմային հասարակութեան կենցաղից ու բարքերից մնացած այլ սովորութիւններ եւս կային , որոնց թէեւ ձեւական կողմն էր որոշ չափով պահպանուել դասակարգային հասարակութեան պայմաններում , բայց բովանդակութիւնը որոշակիօրէն փոխուել էր : Օրինակ , գիւղերում ցորենի հարերը գտնուում էին մի վայրում , այն տարբերութեամբ միայն , որ փոխանակ ամբողջ համայնքի հացահատիկը միասին ամբարելու , իւրաքանչիւր տնտեսութիւն նոյն վայրում ունէր իր առանձին ցորենի հարը : Վերջինս մի մեծ կարասի ձեւ ունէր , միայն թէ փոխանակ կաւից պատրաստուած լինելու , քարափոր էր , ուղղակի տուֆաքարի մէջ : Արդէոս լեռան հրաբխային ժայթքումներից գոյացած քարը ցորենի աւելի էծան պահեստների պատրաստման հնարաւորութիւն էր տալիս : Ի դէպ , Կապադովկիայում ցորենի շտեմարանները յիշուած են շատ հին ժամանակներից , որոնց մէջ հատիկը իր որակը պահպանում էր շուրջ 30 տարի : Այդ վկայում են հին պատմագիրներից՝ Վարոսը , Պլինիոսը եւ Թէոփրաստը , որ այդ շտեմարաններում պահուած պետքաւ կոշուած ցորենը նոյնիսկ 60—70 տարիների ընթացքում պիտանի էր հացի համար , իսկ 40 տարի՝ սերմանելու համար :

Գասակարգային հասարակութեան պայմաններում փոխուել էր նաեւ անասունների , յատկապէս ոչխարների հոտի կազմութեան , ինչպէս ասուած է՝ միւլզ հաւնելու հին ձեւը : Անցեալում , բնափակ տնտեսութեան պայմաններում քանի դեռ նահապետական մեծ ընտանիքի ձեւը ընդհանրութիւն էր հանդիսանում , իւրաքանչիւր գերդաստանի ոչխարները կազմում էին առանձին մի միւլզ-հօտ , իսկ հովիւները լինում էին նոյն գերդաստանի անդամներից , որով ինչպէս միւլզը , նոյնպէս եւ ամառանոցի արտաւայրը կովուծ էր այդ գերդաստանի անունով : Բայց յետագայում գիւղի շերտաւորման աւելի խորացման հետեւանքով , երբ սկսում են քայքայուել գերդաստանները եւ տնտեսութիւնները փոքրանալ , միւլզի կազմութիւնը (հօտի կազմութիւնը) թէեւ պահուած էր իր ձեւական կողմը , սակայն փոխուում էր իր բովանդակութեամբ : Ճիւղղուելը , լինում էր ամենաշատ ոչխար ունեցողը (հետեւաբար եւ կոչուած էր նրա անունով) , սակայն ճիւղի անդամները՝ նրա քեւերը լինում էին դրացիներ , ծանօթներ եւ բարեկամներ : Արսպէս , ուրեմն , միւլզ հաւնելու ձեւը ներկայացնում էր ազգատոհմային հին սովորութիւն աշխարհում մի մնացուկը , որտեղ միւլզագլուխը գերդաստանի մեծի փոխարէն լինում էր ոչարիւնակցական կապերով մէկը , որը շատ ոչխարներ ունէր : Այնուամենայնիւ , այդ միւլզագլուխը , միւլզի ղեկավարը լինելով հանդերձ , միւլզի մաս կազմող ընտանիքների սեփականութիւնը տնօրինելու ոչ մի իրաւունք չուէր , այլ պարզապէս միւլզի ընդհանուր գործերի վարիչն էր հանդիսանում : Օրինակ , միւլզագլուխը իր քեւերին հովիւի հետ խորհրդակցութեան էր կանչում , հովիւի վարձատրութեան , նրա օրական սննդի՝ հացի չափը եւ ըստ ոչխարի գլխաքանակի , հերթականութիւնը որոշելու համար : Իսկ Գամիրքի որոշ շրջ-

յաններում միևնույն լինելն էր հովիւ վարձում, հայթայթում նրա սնունդը, դուրսը եւ քեւերից դանձում էր իւրաքանչիւր ոչխարի համար որոշուած գումարը մինչեւ քսան ոչխարից մի թոխի :

Ճիւղի ներքին գործերի տնօրինման մէջ, եթէ նրա քեւերը բերում էին իրենց մասնակցութիւնը, ապա դիւղի համայնական արօտատեղերի պահպանման, արածեցման վերաբերեալ որոշումները ընդհանրապէս կայակցում էին քիւրահայրի գլխաւորութեամբ, մեծ անասնատէր ճիւղագլուխներին խորհրդակցութիւնում : Այլ խօսքով, մերմակ մարմնները (մուխթար) չորպաճի գլխաւորութեամբ կարգադրում էին գիւղական համայնքի վերաբերեալ բոլոր գործերը :<sup>(1)</sup> :

Այսպէս, դիւղի շերտաւորման պայմաններում, թէեւ ճիւղի (ոչխարի հօտ) գործերի վարման բնագաւառում պահպանուել էին տոհմային հասարակութեան հին կենցաղային որոշ մնացուկներ, սակայն դիւղում առեւտրական յարաբերութիւնների աշխուժացման հետեւանքով ստեղծուել էին նաեւ շահագիտական նոր փոխ յարաբերութիւններ : Օրինակ, ճիւղի անդամ լինելը, սարում դրկիցութիւնը կախուած էր գլխաւորապէս ճիւղագլխի կամքից : Ուստի, ամառանոցների դերդաստանային սեփականութեան ձեւը թէեւ իր բովանդակութեան մէջ որոշ փոփոխութեան էր ենթարկուել, սակայն միևնույն ժամանակ իր դերդաստանի համայնքային սեփականութիւնը, յատկապէս եայլատեղին տնօրինելու իրաւունքը դեռեւս պահում էր իր ձեռքին : Այսուհանդերձ, եայլատեղին, արօտատեղիները, մարդադեղինները մեծ կալուածատէր աղաների եւ կամ ուրիշ գիւղերի ոտնձգութիւններից պաշտպանելու համար, հաւաքական դիմադրութիւն էր կազմակերպում : Օրինակ, Հայլիս գետի վերին հովտի կովտուն գիւղը խորսանայի դէմ տարիներ շարունակ կռիւ էր մղում արօտատեղիների համար : Դա այդպէս էր ոչ միայն գիւղերի, այլեւ ազգակցական տարբեր թաղերի միջեւ թաղը որեւէ յարձակման ժամանակ հաւաքական դիմադրութիւն էր կազմակերպում : Ազգակցական կցաթաղում ապրող ազգակից հարեւանները թէկուզ իրար հետ խոռով լինելին, ազգատեղի պատառի համար միացեալ ուժերով կռիւ էին դուրս դալիս յարձակուողի դէմ :

Դասակարգային հասարակարգի պայմաններում այդպիսի նեղ ազգակցական համագործակցութեան երեւոյթների կողքին, առկա էր նաեւ գիւղական համայնքների պայքարի աւելի լայն համադրածակցութիւն, ընդ որում ոչ-ազգակից եւ ոչ-կրօնակից տարբեր գիւղական համայնքներ միանում էին ընդդէմ իրենց շահագործողի :

Գամիրքի հայերի կենցաղային սովորութիւնների մէջ դեռեւս որոշակի տեղ էին գրաւում նաեւ բնութեան զարթօնքի, ինչպէս նաեւ արհաւիրքների՝ հրաշտի, հեղեղների, մորեխի ժամանակ հաւաքական մատաղի, հասարակաց աղօթքի, ուխտադնացութեան եւ այլ վերապրուկներ :

Յիշենք որպէս նմոյշ բնութեան զարթօնքի, յետադայում քրիստոնէական վերածուած դատիկի տօնի առիթով կեսարիայի շրջանի էվերեկ աւանում կատարուած դոհաբերութիւնը, որը իր ձեւով ամենայատկանշականն էր, իսկ իր բովանդակութեամբ արտացոլում էր հին հեթանոսական արարողութիւնները : Ըստ հնամենի սովորութեան, քահանան դատիկի առթիւ իր ծուխերից մատաղցու հաւաքելով, զոհաբերութիւն էր անում իր տան մէջ եւ բաժանում այնպէս, ինչպէս անցեալում անում էին տաճարի քրմերը : Աւելի ուշ ժամա-

(1) Տե՛ս Յակոբ Ա. Արղումանեան, էվերեկի պատմութիւնը, Ա. գիրք, Գանիքէ, 1935,

նակներում, 19-րդ դարի 50-ական թուականներին, կրակ օգտագործող բոլոր արհեստավորները, կլայեկադործները, երկաթագործները, դերձակները, ինչպես եւ սափրիչները աւանի բոլոր բնակիչների մասնակցութեամբ մատակարարում էին 11 եզ: Եզները զատիկ շաքաթ օրը տարւում էին եկեղեցու բակը, եղջիւրներին վառած մոմ կպցրած եւ քահանաները աղօթելով, օրհնում էին անասուններին, որից յետոյ կազմ ու պատրաստ սպասող մատակարարները անասուններին մորթում, մաքրում եւ յանձնում էին եկեղեցու խոց խոնի առջեւ նստած ծերունիներին, որպէսզի միւս մանրեն, իսկ կանայք եկեղեցու բակում նստած սոխ էին մաքրում, մինչ երիտասարդները էջի մէջքին կողովներ կապած, առջեւից էլ շարքով երախաներ մատաղցու բերեւէ դոռալով պտըտում էին թաղից թաղ: Իւրաքանչիւր տնտեսութիւն տալիս էր, ըստ իր կարողութեան, սոխ, կորկոտ, իւղ եւ այլն: Այդպէս մինչեւ երեկոյ ամէն ինչ արդէն պատրաստ էր լինում եւ արհեստավորների աշակերտները պատրաստած օջախի վրայ եփում էին մատաղը:

Կիրակի առաւօտեան զատիկ արարողութիւնից յետոյ եկեղեցուց դուրս եկող տղամարդիկ, հարուստ թէ աղքատ, անխտիր, խառն նստում էին եկեղեցու բակում փոռած փսիաթներէ վրայ, տարածելով իրենց անձեռոցը, իսկ վրան՝ տնից բերուած դգալն ու դանակը, այլեւ հին հայկական փայտից երկճիւղ պատառաքաղը, սպասելով ժամարար քահանայի օրհնութեանը: Իսկ ժամարար քահանան, զբեստաւորուած առաջնորդուած էր մինչեւ եկեղեցու դուռը, ապա կանգնում էր բարձր սանդղաստիճանի վրայ եւ կարդում վերջին աղօթքը, որից յետոյ նստածներին բաժանուած էր մատաղը: Կանայք չէին մասնակցում ընդհանրական սեղանին, բայց ամէն ընտանիքից մի կին վերցնում էր մէկ-մէկ աման խաչած միս ու քեչկէկ (կորկոտ հարիսան):

Այս բոլորը գուցէ յետադայում Անահիտի պաշտամունքի հետ կապուած եւ ծիսական արարողութեան կերպարանք ստացած մի վերապրուկ էր, որը դարերի ընթացքում ենթարկուել էր մի շարք փոփոխութիւնների:

#### Վ. Ս. ԹԵՄՈՒՐՅԱՆ(\*)

(\*) Վ. Ս. Թեմուրբեկան ծնած է Սեբաստիոյ կուսակալութեան Գաբամակ գիւղաքաղաքը 1903-ին: 1915-ի արեւմտահայութեան ընդհանուր տարագրութեան շրջանին, եղած է Թեմուր, Տարսն, Պոլիս եւ այլուր: Անցնելով Ֆրանսա 1922-ին, հաստատուել է Մարսէլ: Հետագային իր ուսումը, Վ. Թեմուրբեկան աւարտել է «Էքս-Մարսէլ» համալսարանի իրաւաբանական ֆիւլը, բայց Ֆրանսայի մէջ առաւելաբար գրագիր է լրագրութեամբ եւ հասարակական գործերով: Համաշխարհային Բ. պատերազմէն յետոյ, 1947-ին վերադարձել է Հայաստան վերջնականապէս: Տեղաւորուելով Երեւան, սկսել է աշխատիլ Պատմութեան Թանգարանը, Ակադեմիայի պատմութեան ապա հնագիտութեան եւ ազգագրութեան բաժանմունքներում մէջ:

Վ. Թեմուրբեկանի կարեւոր աշխատութիւններն են՝ Արշակունիներու Պայքարը Իշխանութեան ամրապնդման համար, 1946: Գորդագործութիւնը Հայաստանի մէջ, 1956: Գամիւրէի Հայերը, (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն, 1970, գետնորում «Հայ Ազգագրութիւն» եւ Բանասիրութիւն» Ա. հատորին մէջ: Ունի բազմաթիւ յոդուածներ ամսագրերում եւ թերթերում մէջ ցրուած: Ունի նաեւ շարք մը անոթայ գործեր՝ Անտիտարտեան երկրի վրայ կիմերոսներու հաստատման շուրջ, Անասնապահութիւնը Հայաստանի մէջ, Հայաստանի հիւսուածեղէնի արդիւնաբերութեան կենցաղն ու մշակոյթը, եւ Ֆրանսայի Հայերը: Վ. Ս. Թեմուրբեկան մեռած է 1980-ին, Երեւանի մէջ: Հոս ներկայացուած ուսումնասիրութիւնը քաղած ենք «Գամիւրէի Հայերը» աշխատութեանէն, որոշ կրճատումներով:



## ՀԱՎԵԼՎԱԾ — ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԹԻՒ 2

ԳԱՄԻՐՔԻ ՀԱՅ ԱԶԳԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ (ըստ շրջակա գյուղերի)

ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌԱԿԸ			ՀԱՅԻՒՆ ԳԱՎԱՌԱԿԸ			ԲՆՈՒՄԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԲ ԽԱՌՆ ԳՅՈՒՂԵՐ		
Ռեզիստանտի անունը	Տեղաբնակություններ	Մեծ	Ռեզիստանտի անունը	Տեղաբնակություններ	Մեծ	Ռեզիստանտի անունը	Տեղաբնակություններ	Մեծ
1. Սեբաստիա (Սվազազար)	5400 հայեր	34000	8. Կովտուն	300	2600	56. Կենդանի իր շրջակա ազարակներով	1245 հայ	10400
2. Դավրա	300 "	2400	9. Կավրա	180	1500	57. Գարազուլ	280	2040
3. Իշխանի	150 "	1200	10. Ազոտ-Արաճի (Հաղթ)	400	3200	58. Լիսանու	217	1450
4. Բրզնիք (Բազրատունիք)	140 "	1140	11. Խորանան	180-200	1600	59. Գարափունար	90	700
5. Դալտի	100 "	800	12. Քոթնի	120	1000	60. Երազլա կամ շահերդա	37	300
6. Ագ-գալա	50 "	400	13. Քոթնու-Նիհն	50	400	61. Երազլու	160	1280
7. Դոզալը	90 "	400	14. Բինգյուլ (Բյուրակն)	180	1600	62. Թոփաճ	80	650
Ընդամենը	6230	40340	15. Ագ-գոլու	30	300	63. Ալաբուխի (Կարմիր Եկեղեցի)	110	750
			16. Դոմաճ	240	2000	64. Թեմեճյուկ	45	380
			17. Խանձառ (Խանձար)	120	860	65. Զեփնի	209	1900
			18. Դավրազ (Խավրազ)	90	600	66. Գուրճան	150	1200
			Ընդամենը	1890	15660	67. Տեմուր	250	2000
						68. Բեքմեն	90	600
						69. Սարգյան	50	450
						70. Դաղի-Մաղարա	125	1000
						71. Գանթարոզ	70	500
						72. Փաշազնի (Փաշապուլ)	80	600
						73. Գանճար-Երզու (Պավրոզ)	45	325
						74. Դուրդուլ-Ղալա	40	300
						75. Փաթրին-գեղ (Փաթր)	35	280
						76. Գարա-սար	45	325
						77. Գարաճաճը (Մա-րաշա)	160	115
						78. Սիբանի կամ Սոհրանի	60	400
						Ընդամենը	3673	27945
						ՂԱՆՂԱՆ ԳԱՎԱՌԱԿԸ		
						79. Դանդալ	250	1950
						80. Ուլալ	150	1400
						81. Մանճըլըխ	250	2100
						82. Երազլու (Երազլու-Սար)	150	1200
						83. Գոմտու	50	350
						84. Գար-Յորեն	45	325
						85. Գոգ-Արմուտ	25	225
						Ընդամենը	920	7550

1 Բինգյանի վայրը անցյալում Ռադոթ կամ Ռիպաթ էր կոչվում այժմյան Մեթազա Քոթր Ռադոթ գյուղի անունով:

2 Երազլու, Դարճըլ, Զրուր, Էթոհնի, Գարա-տալ, Գրզըլճազլա, Բոթյու-տերե, Դլճճ-տալը, Լորոխ

ԲՈՒՆԱՐ ՊԱՇԸՂ՝ ՆԱԿԻՆ ԱՋԻՋԻՆԻ ԳԱՎԱՌԱԿՐ

86. Պոռնյան (Համիտի, Սարմազազը)	250	2000
87. Կիկի	150	1100
88. Էգրեկ (Ազարակ)	400	3500
89. Արվարն	150	1100
90. Չէք նախ թրքաբնակի, վերջերս՝ հայեր	15	120
91. Սալլը	100	700
92. Բունար-պաշը (Ազիզի)	120	725
Ընդամենը	1185	9245

ՏԱՐԵՆՏԵ ԳԱՎԱՌԱԿ

93. Տարենտ	485	3500
94. Աշոտի	200	1600
Ընդամենը	685	5100

ԿՅՈՒՐԻՆԻ ԳԱՎԱՌԱԿ

95. Կյուրին (Ասորեստանյան Թիլ-Գորիմու)	2000 հայ	13000-էջ
96. Չախր-օղլու	25	14000
97. Գարասար. հինգ կիլոմետր Կյուրինից	50	300
98. Գարա-օրեն	96	725
99. Կավյուր-օրենը (5 տուն գորգ)	12	100
100. Գավաթ	25	160
101. Ծարասար	50	375
102. Կպին		
103. Տանկ (Թեկեն)		
104. Քրմին		
Ընդամենը	2257	15810

Գամբրը իր մեջ ընդգրկում էր նաև Կեսարիա քաղաքը և նրանից հարավ-արևելք ու հյուսիս-արևելք ընկած մասերը: Հարավ-արևելյան մասի կամ Արգեոսյան շրջանի հալաբնակ գյուղերը, որտեղ կան նաև թուրք և հույն բնակչություն:

105. Էվերեկ-Տենես (Արգեոս լեռան ստորոտը՝ հազար մետր բարձրության վրա)	2	1200
106. Չոմախլու		252
107. Գարաշ-որեն, ընդհանուր թիվը 2 հարյուր տուն, որից՝ հայ	2	109
108. Ըլիպի		70
109. Մուսա-հաճըլը, ընդամենը 80 տուն հայ	80	46
110. Էյլեզլի		10
111. Թոմարզա կամ Տոմարզա		1000
112. Զյուճյուն		140-150
113. Ցաղտը-պրուն		35
114. Ցենիճեհ		45
115. Ղազլը-Գոմեդի		80
116. Սեյիալի կամ Սյուլաթլու		70
117. Սազախ		80
118. Տաշան կամ Քաշան		30
119. Չախր-օլուխ		10

Նորից Պալլանը Արիզան ընդունում է որպես հին Կոմանան, բայց Կոմանայի ավերակները գտնվում են Եսրտերի կամ Մարտերի, Մարտի հովտում, ոչ շատ հեռու Բունար-պաշից (տես Էլիզե Ռեքլո):

Նույն շրջանի գյուղերից են նաև Թալաս, Տերեկներ, Թավու-սուն, Իսպիլի, Կերմիր, Պիլեյիսի կամ Պալա-կիսի (Հին Կիսի), Էվբարա (հունարեն Էվբարիս, նշանակում է՝ սրբադան), Կիսի կամ Կասի, Մանճուսըն, Մունճուսըն, Նիրդե, Տարսիս (հունարեն նշանակում է՝ հրեշտակապետ), Սպլուտըն, Աղոնաս՝ բյուզանդական տիրապետության շրջանում կոչվում էր «Այ-Անդրեսաս», այսինքն՝ «Սուրբ Անդրեսաս», աղավաղվելով դարձել է «Աղբրնաս», այժմ ծագումով հայ ճարտարապետ Սիմանի անունով կոչվում է՝ «Մեյմեր-Սիման» և Բոյուք ու Քյուրք Պյուրյունից:

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԸ՝ ՅՈՂՅԱՏԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՐԵՆԱԿ ԳՅՈՒՐԻՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ն. ը/է	Գյուղի անունը	Տեսակետի վրա հերթի թիվը
1	Ազտաղ Մատեն (զայմ-գամ)	255
2	Արմաղան	20
3	Ալալա (մյուզիր)	100
4	Փրհրենի	200
5	Գարահալլը (գարախալլը)	400
6	Գարախալլա	150
7	Յահյալլը	30
8	Գարաբլըք	200
9	Գարա-Չախր	50
10	Գում-գուլու	150
11	Գանճյաղաղ	10
12	Էյլենչե	100
13	Թալլը Կեչիտ	50
14	Թերզիլի	400
15	Իյլեզլի	300
16	Ինեհրլի	250
17	Իթի-Գարի	25
18	Յարհեճ	200
19	Կյուվանի կամ Կուրտեն	110
20	Կյուվանի կամ Կուրտեն	200
21	Մաղար Օղլու	90
22	Մեյլեզ	73
23	Մենիճե	215
24	Ուլունլու	500
25	Չաթ (մեճ)	300
26	Չաթ (փոքր)	150
27	Չաթաթ	205
28	Չախր Ենիլի	130
29	Չոգրատան (Չոք խատան)	160
30	Չաբմաթ	200
31	Պեկ-Կորեն (Պեկերեն)	150
32	Պեպիկ	260
33	Պոզաղյան (զայմաղամ)	500
34	Պուրուն-Գալա	400
35	Քասալլը	100
36	Սարը-Համզա	250
37	Սեբալ	150
38	Սալլը	110
39	Տերե-Համզա	50
40	Տում տիկին կամ Տիլին և մոտ 200 տուն թուրք	450
41	Քեպիլի	150
42	Քյուրեն (մյուզիր)	560
43	Քեպիլ	300
44	Քյուրքե	25

45	Յախորալը (Յարխալը)	150 <sup>1</sup>
46	Սըղըր-Ղուլըրը	50
47	Թանջման	50

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ռ Յ**

**ՀԱՅՅԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՏՈ ԱՆԱՏՈՒԹՈՒՄ  
ԵՎ ԳԱՄԻՐՔՈՒՄ**

Բնակավայրի անունը	Տնտեսություն-ների թիվը	Աճձ	Արարկիր Այն Մալաթիա	Ընդամենը	
Կեսարիա (Գալսերի)	450	2250	250	380	1250
Բալաս	20	77	30	100	130
Պյունյան	20	50	30	100	500
Մունճուսան	25	110	20	380	1880
Ռումտիկին	5	30	40	250	1250
Ջինճետրի	1	4	40	40	245
Էվերեկ-Ֆենեսե	130	640	15	100	100
Կիկի (ղուտ հայ գյուղ)	25	120	80	80	400
Ռունար-բաշը (նախկին Աղիզի)	12	60	40	50	240
	688	3341	50	240	240
Յողկատ	50	260	20	20	100
Պողազլյան	25	135	20	20	110
Ուզունլու	12	70	18	75	375
Սարայր	30	150	1	18	50
Ինճիրլի	25	130	1	75	375
Քետիլեր	10	60	40	18	50
Գարապըլլեզ	6	35	1	1	6
Գում-Գուլու	15	70	40	40	200
Էլլինճե	12	60			
Պեպեք	5	45			
Գարա-յալուզ	5	70			
Ջաթ	30	220			
Սորկուն	10	55			
Սարըճամուս	1	70			
Մելեզ	15	75			
Պուրունգլու	15	50			
Սունկուրլու	10				
և Պողազլյանի ուրիշ մասեր	25	100			
Ընդամենը	301	1655			
			Սիլազ (Սերաստիա քաղ.)	250	1250
			Կեմերեկ (Կամարակ)	40	245
			Թեքմեն	20	100
			Շարղշլա	15	80
			Յենի-խան	80	400
			Ուլաշ	40	240
			Ջառա	50	240
			Գուշխար (Հաֆիթ)	20	100
			Ընդամենը	515	2655
			Բողաթ (Եվրոկիա)	70	350
			Բաշարուս	4	15
			Ջիֆիլիկ	3	15
			Ջիլե (քաղաքում)	4	12
			Ամասիա	100	500
			Մերզուֆան	20	110
			Կյումիշ հաճի-բոյ	75	375
			Սամսոն	18	50
			Սինոպ	1	6
			Օրնա	40	200
			Ընդամենը	335	1633
			Չորում	3	16
			Մինիլ ոնլու	5	25
			Խարթըք	150	750
			Էլազիզ	150	700
			Տիարպեզիր	200	1000
			Ասանա	5	20
			Մեքսիե	8	20
			Գոնիա	25	105
			Գոնիա-Էրէլլե	74	250
			Անգարա	260	1500
			Տեսարոյ	25	100
			Մութ	2	12
			Գարաբոսէ		
			Ընդամենը	907	4498